



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

The image shows a close-up of a marbled paper pattern, likely used for book covers or endpapers. The pattern consists of intricate, swirling, and wavy lines in shades of blue, black, and white, creating a complex, organic texture. The paper shows signs of wear, including scratches and some loss of material, particularly along the left edge and in the bottom right corner. A small, rectangular, light-colored label is affixed to the bottom left corner of the page.

891.99

2-46

891.29

Ղ-46

NOV 2011

Սեպտեմբեր 1906 թ.

Հրատարակողը Գ. Գալսեանի


Արշ-203

874
2

Փ Ո Ւ Չ Չ Ե Ի Ե Կ

Փր ա մ ա
ի ն զ գ ո ռ ժ ո յ յ ե ռ յ

Գրեց Գեորգ Նարաջեան



Թ Ի Յ Լ Ի Ս

Երևանում տպարան «ՀԵՐԱԿՍ» ԸՆԿ. Մաղաթեան փող. № 5

1906

(141)

19.06.2013

40801

ГОС. БИБЛИОТЕКА

Ք Յ Կ Յ Ջ Ջ Կ Ո Փ

Дозволено цензурою Тифлисъ, 24 ноября 1905 г.



4221-Բ

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Ջ Ի Ն Ք

- 1) ՄՈՒՂՍԻ ԿԱՐԱՊԵՏ ՄԵԼՔՈՆՈՎ.—Գալառական քաղաքի ան-
լանի վաճառական, հարստացած վաշխառական միջոցնե-
րով, 65 տարեկան ալեգարդ ծերունի:
- 2) ՕՍԱՆԱ. ԽԱՆՈՒՄ—45 տարեկան, հաստամարմին, ցոյց է
տալիս իրան կրօնասէր և տէրտէրասէր:
- 3) ՅԱՍՄԻԿ—Սրանց աղջիկը, 17 տարեկան, սեւչեայ, սեահեր,
գեղեցիկ—նազիկ աղջիկ:
- 4) ԳԱՐԵԳԻՆ (ԳԱՐԻԳ)—Սրանց որդին, 28 տարեկան, փար-
թամ, իդէալիստ երիտասարդ, Եւրոպայում ուսումնաւարտ:
- 5) ՇՈՂԻԿ—Մուղսու եղբօր աղջիկը, բոլորովին որբ, որին հօ-
րեղբայրն է պահում, բարակ, սպիտակադէմ աղջիկ, սրա-
ծայր, բարակ քթով, նոյնպէս սեւչեայ, թեթև կաղլիկին
է տալիս, 22 տարեկան:
- 6) ՏԻՐԱՅՈՒ ԴԱՆԻՅԷԷ—Երկար մօրուքով և մազերով, բարձ-
րահասակ, բաս ձայնով, շարժւածքները կոշտ, նահապե-
տական, 35 տարեկան:
- 7) ԱՐՄԷՆ ՎԻՐԱՊԵԱՆՑ—Գալառական ուսուցիչ, Գարեգնի
տարիքին, դէմքով և հասակով չափազանց նման Գարեգնին:
- 8) ՍԵՐՈՒՅ—Մուղսու տան ծառան, հասակով մարդ, կեանքի
չարն ու բարին տեսած, հանարչի, ճաղատ գլխով:
- 9) ՍՏԱՐՕՍՍԱ:
- 10) ԿԱՌԱՊԱՆ ՄՕՍԻ:
- 11) ԱՆՅԱՏ ԱՆՋՆ:

Ք Վ Գ Զ Յ Ո Ր Ծ Գ Ո Ւ Բ Ի Կ Ն

Սյս պիէսը գրւած է երեք տարի առաջ, մի ժամանակ, երբ զանազան՝ մեր կամքից և ցանկութիւնից անկախ պատճառներով հնարաւորութիւն չունէինք աւելի ազատ արտայայտելու և աւելի ճիշտ ու լիակատար կերպով բնորոշելու այս կամ այն հերոսի տիպը: Փոփոխութիւններ մտցնել վերջերս՝ նոյնպէս անհնար եղաւ մեզ: Մենք շատ ուրախ կլինէինք, եթէ անաչառ քննադատութիւնը ցոյց տար մեզ պիէսի իդէական և մանաւանդ տեխնիկական թերութիւնները:

Հողինակ

5-ն սեպտեմբերի, 1905 թ.

Թ Ի Փ Լ Ի Ս

Ա. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Քեծը ներկայացնում է Մուզսու ազայի տան մի սենեակը, որի մէջ տեղաւորւած են գրասեղան, 2—3 աթոռ, սնդուկ և մի թէթև թախտ. թախտի վրայ գցւած է կապերա և մի մութաքա գրւած. գրասեղանի վրայ դարսւած են մատեններ, համարակալ, թանաքաման, գրիչ և այլն:

ՄՈՒՂՍԻ. (մտտանները րրրրիւց, ղամարակալի վրայ մի բանի անգամ չսկզիսկացնուրց յետոյ, անհանգիստ, զուխը խտոր մարդու պէս) ոչինչ չի դուրս գալիս, ինչքան ուզում ես հաշեր, քրքրիք, բան չի դառնում. երբ գլուխդ խտուն է լինում, երբ սիրող հանգիստ չէ լինում, շարունակ տարակուսանքի մէջ ես անցկացնում օրն ու ուժբող, միշտ այդպէս կլինի. մի որդի ունենաս ու նրանից էլ դարդակ լինես, սս ցաւ ու կրակ չէ, ապա ինչ է. բանի անգամ նրան ես խրատ եմ կարդացել, յանդիմանել եմ, անէծք եմ թափել գլխին, գլուխը ոչինչ չի մտնում, էլի իրա էշն է քշում: Ահա բանի ժամանակ է, ինչ արտասահմանից եկել է, պարապ սարապ վեր է ընկած, ոչ մի գործի չէ կպչում. չեմ հասկանում ինչն է նրան տանջում, ինչ հոգսեր են զբաղեցնում, ինչով է տարւած, զարմացած մնացել եմ. չէ, վերջին անգամ կփորձեմ, կըխօսեմ նրա հետ կտրական. ես չեմ ուզում, որ ուրիշները ծաղրեն ինձ իմ յետևից (կանչում է ծառային) Սերոր, Սերոր (մտնում է Սիրորը) Գարեգինը տանն է:

ՍԵՐՈՐ. տանն է, աղա, իր օթախում ինչ որ գրում է.

ՄՈՒՂՍԻ. գնա առա, որ աղէն կանչում է, շատ հարկաւորը գործ կայ:

ՍԵՐՈՐ. շատ բարի, աղա (դուրս է գնում):

ՄՈՒՂՍԻ. տեսնեք ինչ կատի. գիտեմ կսկսի իր դարդակ փիլիսոփայութիւնները, կարծես փիլիսոփայութիւնով հաց կարելի է ճարել. ես ուզում եմ նրանից վերջին խօսքն իմանալ, հա կամ չէ (վերադառնում է Սիրորը):

ՍԵՐՈՐ. աղա, ասում է—ժամանակ չունեմ, զբաղւած եմ, կէս սահաթից յետոյ ազատ կլինեմ:

ՄՈՒՂՍԻ. գնա էլի ասա, շատ հարկաւոր գործ կայ, թող լսէ, յետոյ էլի գնա իրան բանը շինէ, եթէ նրա շինած բանը բան կարելի է համարել (ժառանգուրս է գնում): Տեսէք բանը ինչ տեղն է համուում, որ որդին հօրը ոչնչի տեղն է դնում, չէ հնազանդուում, հօր խօսքը գետինն է պցում, ահա թէ ինչ ժամանակներու մն ենք ապրում: (Յայտնուում է Գարեգինը):

ԳԱՐԵԳԻՆ. Խնչ ես կամենում, հայր:

ՄՈՒՂ. ես քեզ կանչում եմ, դու լայեղ էլ չես անում գալ լսելու թէ ինչ եմ ուզում ասել, դա արարք չէ, լաւ մտածիր Գարեգին:

ԳԱՐ. զբաղւած էի, չէի կարող կիսատ թողնել գործը, կարծեմ նոյն բանը ինքզ կանէիր, հայր, եթէ զբաղւած լինէիր:

ՄՈՒՂ. ախր արած բանդ ինչ է, որ կիսատ թողնելով որ ե է վնաս լինի:

ԳԱՐ. ամեն մարդ իր զբաղմունքը իր համար լուրջ գործ է համարում, իսկ ուրիշինը ոչինչ, դարդակ:

ՄՈՒՂ. լաւ, շատ լաւ, ասենք դու խօսքի տակ ընկնող պտուղ չես. բայց ինձ ասն տեսնեմ, քո արած բանից մի նիւթ, մի «և» դուրս է գալիս թէ չէ. ասն տեսնեմ, ինչն է քեզ զբաղեցնում, ինչով ես մոլորեածի պէս ման գալիս, կարծես աշխարհիս գարդը քեզ են տւել, աշխարհիս հոգսը դու ես քաշում, այն ինչ ուսումդ աւարտելուց յետոյ պարտոյ ես ու պարտոյ, ոչ մի գործի չես ուզում կպչել, չես ուզում օգնական լինել հօրդ, փող աշխատել, մարդամիջին մարդ լինել:

ԳԱՐ. հայր, առաջին անգամը չէ, որ լսում եմ քեզանից այդպիսի խօսքեր և նոյն իսկ շատ անգամ կրել եմ համբերութեամբ կծու ակնարկներ և վիրաւորանքներ. խնդրում եմ մի անգամ ընդ միշտ վերջ տալ այդ անտեղի զրոյցներին. ես կարևորութիւն չեմ համարում բացատրութիւն տալ թէ ես ինչ եմ անում, ինչով եմ զբաղւած, հաշիւ տալ քեզ իմ արարքի կամ գործերի մասին, որովհետև միևնոյն է, այդ բոլորը ապարդիւն կանցնի, մենք միմեանց իսկի չենք հասկանալ:

ՄՈՒՂ. ուրեմն ձեռքերս լւանամ, որ մինուձար որդի ունեմ, ինձ ոչ մի բանի պէտքական ուսում առած, կրթւած որդի:

ԳԱՐ. այդ դու գիտես, ինչպէս ուզում ես. միայն դարձեալ կրկնում եմ, որ քո հաշիւները և զբաղմունքները, ընդհանրապէս առևտրական աշխարհը ինձ համար խորթ, բոլորովին ատելի աշխարհ է, որի հետ հաշուել ես երբէք չեմ կարող:

ՄՈՒՂ. արի դու խելքի արի, Գարեգին. լսիր վերջին անգամ հօրդ խօսքը, որի համար ե կանչեցի քեզ. ուզում եմ

կտրական իմանալ քեզանից քո տրամագրութիւնը. մի թերահաւատւիր, ուղիղ ճանապարհի վրայ կանգնիր, լաւ նայիր քո շուրջը, ամպերից ցած իջիր և գործնական եղիր, որովհետև հաց ճարել միայն կարելի է գործնական պարապմունքով, առևտրով և ոչ դարդակ, ծակ փիլիսոփայութեամբ: Ասա, խնդրեմ, ում ինչ օգուտ քո փիլիսոփայութիւնից և ծոցդ դրած արասասմանեան համալսարանի դիպլոմից: Տես թէ ինչ բաներ են կատարւում թիֆլիսում և մանաւանդ Բագուում, ուր հաւաքւել են ամեն տեսակ մասնագէտ երիտասարդ անձինք. ինժեներներ, մեքենագործներ, բժիշկներ, իրաւաբաններ փառաւոր գործեր են կատարում և տասնեակ հազարներ վաստակում:

ԳԱՐ. ես կարիք չեմ զգում նրանց օրինակին հետևելու, ընդունակութիւն էլ չունիմ նրանց գործը կատարելու:

ՄՈՒՂ. առնուորը ատելի է քեզ. մեքենագործութեամբ, ճարտարապետութեամբ, բժշկութեամբ դու չես կարող պարպել-մասնագէտ չես, գոնէ կառավարչի, գնականի, հաշւապահի պաշտօն վարէիր, այդ էլ չլինէր դիւզատնտեսութեամբ պարապէիր. փառք Աստծու, հայրդ ունի դրամական հարկաւոր միջոցներ, բոլորը քո տրամագրութեան տակ է դնում իր ծերութեան վերջին օրերում, միայն թէ գործադրիր այդ միջոցները, շահեցրու հայրական ստացւածքը և բաղտաւոր ապրիր, ահա թէ ինչ է իմ հոգսը և իմ ցանկութիւնը, որ դու իբրև բարի ժառանգ կատարես սրբութեամբ:

ԳԱՐԵԳ. հայր, դու ինձ վրայ գնում ես պարտաւորութիւն, որը ես անկարող եմ կատարել. ինձ վրայ նայում ես այնպէս, որպէս թէ լինէի երեխայ և չհասկանայի կեանքի հանգամանքները, մարդկանց հակումներն ու ձգտումները. օրինակ ես բերում մեքենագործներին, ինժեներներին, գիւղատնտեսներին և այլն. ամեն մարդ իր հակումների և ընդունակութիւնների համեմատ մասնագիտութիւն է ուսել և գործ է դնում կեանքի մէջ: Վերջապէս այդ յիշատակւած մասնագէտներից շատ շատերը ծառայում են իրանց անձնական շահերին, ծառայում են կապիտալին, մամոնային. հարկադրել, ստիպել ինձ ես նոյնն անելու, մի այդպիսի վարմունք քո կողմից, հայր, ես համարում եմ անարդար, եթէ չասենք բռնի վարմունք:

ՄՈՒՂ. ուրեմն ուրիշ ուսումնական մասնագէտները ծառայում են իրանց անձնական շահերին, մամոնային. նրանց չես հաւանում: Ապա դու ում շահերին ես ծառայում: Ես մինչև այժմ ոչինչ չտեսայ քեզանում. միայն այսքանը գիտեմ, որ իբր փիլիսոփայական, վերացական գիտութիւններ ես ուսել և

վկայական ձևը բերել, ինչ որ մտատանջութիւնների և հոգ- սերի մէջն էս, ինչ որ խզրզի էս անում լրագրերի և ամսա- գրների համար, որից ոչ մի կողմէ կի օգուտ չէ դուրս գալիս: Այս է ուրեմն այսքան տարիների քո ստացած ուսման ար- զիւնքը, այս է ուրեմն քո ուսման վրայ ծախսածս հազարնե- րի շահը:

ԳԱՐ. դու նայում էս ուսման վրայ վաճառականի աչքով. ուսումը քեզ համար առուտուրի պէս մի բան է, որ շահ, տո- կոս բերի: Ուրիշ կերպ հասկանալ, հայր, քո շրջանի մարդ- կանց համար շատ դժուար է: Իսկ թէ դու ծախսեր էս արել և այժմ մոռնաթ էս գնում վրաս, այդ ինձ համար ճիշտ որ ծանր, անտանելի հանգամանք է: որից էս կաշխատեմ երբ և իցէ ազատել վերագարձնելով քեզ իմ արտասահմանեան կըր- թութեան վրայ ծախսած քո 3—4 հազար ըուրլին:

ՄՈՒՂ. միայն 3—4 հազար էմ ծախսել քեզ վրայ և ոչ աւելի:

ԳԱՐ. հա, եթէ հաշուս իմ ծննդեան օրից թէ ինչքան էս ծախսել ընդհանրապէս ինձ վրայ—հագուստի, ուտելիքի և թէ ուրիշ բաների վրայ, խօսք չկայ ի հարկէ, որ կկազմէ աւելի մեծ գումար: Բայց ինչ է եղել ընդհանրապէս մեր ընտանիքի և մանաւանդ իմ ապրուստը մինչ իմ հասակ առնելը, մինչ իմ սկզբնական և միջնակարգ կրթութիւն ստանալը, շատ ողորմե- լի և աղքատ ապրուստ, ի նկատի ունենալով, որ միայն վերջին տասնակ տարիները, հայր, դու շնացար, հարստացար և Մուղ- սի ազա դարձար: Միթէ որդուն մեծացնում, կրթում են այն նպատակով, որ յետոյ վերագարձնելի ծնողներին ծախսած գու- մարը բարդ տոկոսներով:

ՄՈՒՂ. ապա տես ինչէր էս մտածում, միթէ էս ասում էմ տոկոսներով վերագարձնես ծախսածը. իմ ասելիքն այն է, սկանջիդ բամբակը հանիր և լսիր, որ գործ տեսնես, գործ- վող աշխատես, հարստութեան վրայ հարստութիւն աւելացնես, ամուսնանաս, տուն տեղ դնես և հօրդ արժանաւոր ժառանգը լինես:

ԳԱՐ. ինչ հարստութիւն, որ ունես, այդ էլ շատ բաւա- կան է ներկայ պայմաններում ընտանիքի ապահովութեան հա- մար. ինձանից պահանջում էս, որ շարունակեմ քո գործը հարստութիւն դիզելու նպատակով. իսկ որ հարստութիւնը դիզում է մի միայն վաշխառական-առևտրական ճանապարհ- հով, ուրիշներին հարստահարելով և ուրիշների արեան քըր- տինքի գնով, այդ ոչ ոքի համար այժմս այլ էս գաղտնիք չէ: Ես անընդունակ էմ այդ պաշտօնը կատարելու: Լաւ կլինէր,

հայր, որ հարստութիւնից փոխանակ դէզեր կազմելու, մասն հանէիր գործադրելու գոնէ ընտանիքի այնպիսի կարիքների վրայ, որ ներկայ ժամանակներումս անհրաժեշտութիւն է զգացում:

ՄՈՒՂ. շատ շնորհակալ էմ քո խորհուրդների համար. ա-ւելի լաւ է դեռ դու խելքի գաս և յետոյ ինձ խրատներ կար- գաս. ընտանիքի ո՞ր կարիքները չեն լրանում, ասա խնդրեմ: Քո դատողութիւնը այնքան փաստակար դատողութիւն է, որ յանդգնում էս մտածելու, որ մարդիկ հարստանում են ուրիշ- ների հաշուով և ոչ իրանց ջանքերով և խնայողութեամբ:

ԳԱՐ. (կծու հէգնութեամբ). հա, հա, հա. հարստանում են իրանց ջանքերով և խնայողութեամբ. Հարցնում էս, թէ ինչ կարիքներ չեն լրանում ընտանիքում. ուրիշ բան չասենք, հէնց յիշենք Յասմիկին, որը սաստիկ ընդունակ ազջիկ է և բուռն ցանկութիւն ունէր շարունակելու ուսումը, բայց դուք թոյլ չուեցիք, հանեցիք նրան սկզբնական դպրոցից և այժմ վճռել էք այդ հրեշտակաման աղջկան, հակառակ նրա ցանկութեան, ազէտ, բթամիտ տիրացու Գանիէլին կնութեան տալ. սա խայ- տառակ, անարգար, բռնի վարմունք է ծնողների կողմից ի- բանց զաւակի վերաբերութեամբ:

ՄՈՒՂ. (տարանալով) ձայնդ կտրիք, քո գործը չէ խառնը-ւել ծնողների հաշիւների մէջ և նրանց կամքի և ցանկութեան առաջը կտրել (հետզհետէ ժայնը բարձրացնելով). դու չափ ու սահ-մանից անցար այսօր. մասնադէտներին էսական, մամոնային ծառայող անւանեցիր. առևտրականներին, հարստութիւն խը-նայողներին հարստահարիչ շինեցիր, որդուն կրթութիւն տող ծնողներին վաշխառու շինեցիր. այժմ էլ խառնակիչ լեզու էս գցում Յասմիկի ամուսնողութեան հարցի վերաբերութեամբ. լե-զուդ քեզ պահիր և միայն մտածիր այն դատարկարանու-թիւնների վրայ, որոնցով գլուխդ լցրել էս արտասահմանում:

ԳԱՐ. ոչ ոք չէ կարող արգելել ինձ ազատ կարծիք յայտ-նելու և խօսելու այս կամ այն առարկայի մասին:

ՄՈՒՂ. (արդևն սկսում է գոռալ) դու հակաճառում էս հօրդ, դու նրա կամքին դէմ էս գնում, դու յանդգնում էս նրան ան-պատելի—վաշխառու անւանել, հեռացիր, կորիւր, աչքիս այլևս չերևաս, անամօթ, յանդուգն, փուչ զաւակ:

ԳԱՐ. (վրդովելով) էս ուշուց տալու ընդունակ չեմ, խնա-յում էմ միայն ծերութեան հասակդ, որի մէջ շատ անգամ ան-հասկացող մանուկ են դառնում մարդիկ:

ՄՈՒՂ. չես ուզում դադարել, չես ուզում լռել, անպատ-կաս զաւակ, կորիւր աչքիցս, ասում էմ:

ԳԱՐ. այժ, աչքիցդ կհեռանամ, շատ ուրախ եմ այսպիսի ծնողներ մինչ գերեզման չափանել (քայլերը ուղղում է դէպի դուր, Մուղսին համարակարգ վերցնելով շարտում է Գարեգին յետեւից, որը կպչում է միայն դուան շխմին. այդ աղմուկի վրայ ներս են վաղում Օսան խանութը և Յասմիրը):

ՕՍԱՆ. ինչ պատահեց, ինչ եղաւ ձեզ (զատնալով դէպի Գարեգինը, որը արդէն չկար. նրա հասցէին), ախ, Գարեգին, դարձեալ դու բարկացրիր հօրդ:

ՅՍՍ. ախ, հայրիկ, այս ինչ է, դարձեալ խօսակցութիւն բացեց ձեր մէջ:

ՄՈՒՂ. ձայնդ կտրիր, դու էլ նրա հատն ու կտորն ես:

ՅՍՍ. վա, ես ինչ եմ արել քեզ, հայրիկ:

ՕՍ. (Յասմիրին) դէ, դու էլ սուս կաց. չէս տեսնում, ինչպէս է բարկացրել հօրդ Գարեգինը:

ՄՈՒՂ. (նոյն անհասկիստ, զայրացած դրուժեան մէջ) մին ու ճար որդի ունենաս և այսքան էլ անպէտք և դատարկամիտ (նայելով կնոջ). ես նրան սկսեցի վերջին անգամ բան հասկացնել, խրատներ կարդալ. չես կարող երեւակայել, Օսան, թէ ինչեր դուս տեց այսօր գլխից,— որ հարուստները, առետրականները վաշխատու, կոփող զջլողներ են, որ միւս բոլոր ուսումնական մասնագէտները, բացի ինքը, փողին և սատանային են ծառայում, որ մենք-ծնողներս՝ Յասմիրին անբաղատացնողներն ենք և այլն. մի խօսքով՝ արիւնս պղտորեց, այրեց փոթոթեց նա ինձ իր յանդուգն, յիմար խօսքերով: Նա մեզ համար կորած որդի է, Օսան, անպէտք, փուչ զաւակ:

ՅՍՍ. (մի քայլ առաջ գալով և պաշտպանողական դիրք ընդունելով) հայրիկ, այդպէս մի ասան, Գարեգինը խելօք է և իմաստուն և իմ ազնիւ եղբայրս:

ՄՈՒՂ. (կտրական ձայնով) դու դարձեալ ձայն հանցիր:

ՕՍ. ազջի, դէ ձէնդ կտրիր, քեզ խօսք չի հասնի է (Յասմիրը յետ է քաշում և կուչ դախս. Օսանը Մուղսուն) այ մարդ, շատ մի տաքանայ, ամեն բան սրտից մի սո, հանգստացիր. հիմիկւան Չահիրները խօ ծնողների զազրը իսկի չեն իմանում. վեր կաց, վերկաց, գնանք միւս սենեակը, սէրն Աստծու, մի բան չպատահի քեզ, էլ ով կլինի իմ տէր տիրականը (Օսանը թելից բննելով, Մուղսին հանդարտ վեր է կենում, ծանրաբայ, փոքր ինչ մէջքը կուցած դուրս է գնում կնոջ հետ):

ՅՍՍ. (անհանգիստ որոնում է Գարեգին, գնում է դէպի այս ու այն կողմը և կանչում) Գարիգ, Գարիգ, (պատասխան չկայ, աւելի բարձր) Գարիգ (ոչ մի պատասխան) ախ, ինչ եղաւ Գարիգի հետ (դուրս է գնում քեմից. գրսից լսում է դարձեալ Յասմիրի Վարիդի,

Գարիգ՝ կանչելու ձայնը. մի քանի վայրկեան լուռ թիւն, յետոյ ինչ որ անորոշ ձայնը են լսում, մտնում են Յասմիրն ու Գարիգը ձեռքը ձեռքին), ախ, Գարիգ Չան, ինչքան ես անհանգիստ եմ քեզ համար:

ԳԱՐ. դու բոլորովին անհանգիստ մի լինիր, Յասմիրի Չան:

ՅՍՍ. դու վերջին ժամանակները բոլորովին փոխել ես.

շատ ես մտածում, շատ տանջում, այդ ես տեսնում եմ, ասան, ինչո՞ւ, ինչո՞ւ. հայրիկը քեզ շատ է նեղացնում. կասէս, կասէս ինձ, Գարիգ Չան (վերջին խօսքերը ասելիս քնշուժեամբ գլուխ է եղբորը):

ԳԱՐ. հա, սիրելիս, վերջին ժամանակները հայրս ինձ շատ է նեղացնում. մանաւանդ այսօր ինձ սաստիկ վշտացրեց. ես իրան հետ բոլորովին քաղաքավարի եմ վարում, իսկ ինքն ինձ անպատում է, նոյն իսկ յիշողներ, անէծքներ է թափում վրաս. բանը այնտեղն հասցրեց, որ համարակալը շարտեց իմ յետեւից. և ինչո՞ւ այս բոլորը. որովհետեւ չեմ քաշում նրանից, ինչպէս չեմ քաշել երբէք ոչ ոքից, ազատօրէն իմ կարծիքը յայտնելու. որովհետեւ ես նրա կամքի և ցանկութեան համեմատ գործ չեմ տեսնում. ծնողները առ հասարակ կարծում են որ իրանք որովհետեւ ծնողներ են, ինչ ուզեն կարող են անել նոյն իսկ իրանց հասակն առած զաւակների հետ:

ՅՍՍ. Գարիգ Չան, հայրիկը գանգատում էր, որ դու նրան սաստիկ անպատել, վիրաւորել ես. նա էլ խիստ բարկացել է քեզ վրայ:

ԳԱՐ. հայրդ միայն երեւակայում է, որ ես նրան վիրաւորել եմ. ես միտք չեմ ունեցել նրան անարգելու. միայն սաստիկ տաքացաւ, երբ ես քեզ պաշտպանեցի տիրացու Դանիէլի հետ քեզ ամուսնացնելու դէմ խօսելով:

ՅՍՍ. նա ինձ էլ սաստեց, Գարիգ Չան. ասաց—դու էլ եղբորդ հատն ու կտորն ես. ճիշտ է, Գարիգ, մենք միմեանց նման է՞նք:

ԳԱՐ. շատ կարելի է նման ենք. զգացմունքներով և բընաւորութեամբ:

ՅՍՍ. վշտանում ես, տխրում, տանջում միայն նրա համար, Գարիգ, որ հայրիկը քեզ հալածում է.

ԳԱՐ. ոչ, սիրելիս. ծնողները հալածանքը մեծ բանի տեղ չեմ դնում, ուրիշ հանգամանքներ կան, որոնք ինձ ստիպում են մտածել և հանգիստ չլինել:

ՅՍՍ. ինձ չէս կարող ասել, Գարիգ Չան, պատճառը:

ԳԱՐ. դու զեռ երեխայ ես, Յասմիրի Չան, 17 տարեկան անմեղ, անզարգացած երեխայ, քո հետաքրքրութեանը ես չեմ կարող այժմս բաւականութիւն տալ, քեզ հարկաւոր է շատ

կարգալ. այն գրքոյկները, որոնք ես քեզ տւեցի. կարգալ ու-
շադրութեամբ. ես զարձեանլ կտամ ուրիշ գրքոյկներ. քեզ ծը-
նողներդ կրթութիւն չտւեցին, հետեւելով իրանց այն յանցա-
ւոր, նահապետական հին հասկացողութեան, թէ աղջկան պէտք
չէ ուսում, գոնէ ընթերցանութեամբ աշխատիր քեզ զարգաց-
նել, կրթել, չարն ու բարին հասկանալ: Ուրիշ հանդամանք-
ների հետ, քո անկիրթ, անզարգացած զրուծիւնը ինձ պա-
կաս չէ վշտացնում: Այժմ էլ քո մեղապարտ ծնողները վճռել
են քեզ ամուսնացնել յիմար և ըթամիտ տիրացու Դանիէլի հետ:

ՅԱՍ. դու չե՞ս հաւանում, Գարիգ ջան, Դանիէլին:

ԳԱՐ. եթէ հաւանէի, այսպէս չէի վատաբանի նրան. նա
երբէք քեզ լաւ և յարմար ամուսին չէ կարող լինել:

ՅԱՍ. հա, Գարիգ ջան, ես էլ չեմ հաւանում նրան:

ԳԱՐ. պատճաններից մէկն էլ այդ է, որ ես չեմ կարող
յարգել այդպիսի ծնողներին. ես ստիպւած եմ նրանց երեսը
այլեւս չտեսնել և հեռանալ այստեղից:

ՅԱՍ. հեռանալ, ո՞ւր, Գարիգ ջան, ուր ես ուզում հեռա-
նալ և ինձ մենակ թողնել:

ԳԱՐ. հանգիստ կացիր, մենակ չես մնայ. քեզ կպտակեն
տիրացու Դանիէլի հետ—անհա և քեզ համար նոր կհանր:

ՅԱՍ. ես չեմ գնալ Դանիէլին:

ԳԱՐ. չես գնալ... գոռով, բռնի կերպով կտան քեզ նրան:

ՅԱՍ. բռնի, գոռով, միթէ կարելի է բռնի կերպով պատկել:

ԳԱՐ. խեղճ, անմեղ երեխայ, միամիտ աղաւնի, դեռ աշ-
խարհի բաներից տեղեակ չես. ծնողներդ ձեռով և անարգան-
քով բաշ կտան քեզ դէպի եկեղեցի:

ՅԱՍ. լաց ու շիւտանով կերթամ եկեղեցի և երբ քահա-
նան պատկելիս կհարցնէ իմ համաձայնութիւնս, ես բարձրա-
ձայն կկանչեմ կասեմ—ոչ, համաձայն չեմ այս ամուսնու-
թեան և ոչ էլ հնազանդ կլինեմ ամուսնուս:

ԳԱՐ. (հրճանքով) դու այդ կասես հրապարակով, առանց
քաշելու:

ՅԱՍ. կասեմ առանց քաշելու, որ ես նրան չեմ սիրում:

ԳԱՐ. ան, հրաշալի աղջիկ, անգին քոյրիկս (նամբուրում է
ձախտար):

ՅԱՍ. (տակն ողևորւած) ես, Գարիգ ջան, չեմ ամուսնա-
նայ մինչև բաւականաչափ մտաւոր զարգացում չստանամ, մին-
չև փոքր ի շատէ կեանքն ու մարդիկ չճանաչեմ. իմ ապագայ
բաղտս կախւած կլինի մեր երկուսիս ընտրութիւնից և հաւա-
նութիւնից. բայց դու ո՞ւր ես ուզում հեռանալ, ասա, ինչդրում
եմ, Գարիգ ջան:

ԳԱՐ. (զղացւած) հանգստացիր, սիրելիս, հանաք էի ա-
նում, եթէ գնամ, դարձեալ կգամ:

ՅԱՍ. ինձ էլ հետդ տար:

ԳԱՐ. (ծիմարում է), հա, հա, հա, կարելի է ես գնում եմ
այնտեղ, ուր երկրաշարժից կտորւում են մարդիկ՝ գոհերին
օգնելու նպատակով կամ գնում եմ պատերազմ թշնամու կրա-
կի առաջ կանգնելու. դու կհետեւես արդեօք ինձ:

ՅԱՍ. Բեդ հետ, այո, կգնամ ամեն տեղ:

ԳԱՐ. (բռն սիրուց զղացւած) խեղճ իմ թանկագին քոյ-
րիկս, հաւատում եմ քո զգացմունքին. բայց ինչո՞վ ես վա-
տակեցի քո այդ անսահման սէրդ: Բեզ վերաբերութեամբ ես
չեմ կատարած իմ բարոյական պարտքի նոյն իսկ հարիւրե-
րորդը, պարտք, որ ունի կատարելու ոչ թէ եղբայրը դէպի ի-
րան քոյրը, այլ նոյն իսկ օտարը, նոյն իսկ ամեն ազնիւ
զարգացած մարդ, որ կտեսնի իր առաջ կանգնած ընտրիւ-
նից ազնիւ զգացմունքներով և ձիրքերով օժտւած այսպիսի
քնքոյշ մի էակ (նամբուրում է): Կգայ ժամանակ, քոյրիկս, թե-
րեւ սիրոյ այդ ազնիւ զգացմունքներդ նւիրես «այլոց» ծառա-
յութեան: («Յասմիկ, Յասմիկ» կանչում են քեմի յետեւից, «Յասմիկ,
ո՞րտեղ ես մայրիկը կանչում է):

ՅԱՍ. Շողիկի ձայնն է, գնամ մայրիկը կանչում է. ցտե-
սութիւն, Գարիգ ջան:

ԳԱՐ. գնա, սիրելիս, գնա (ձամբուրելուց յետոյ Յասմիկը
դուրս է գնում). անհա ձեզ շատ օրինակներից մէկը, անհա ծնող-
ների անբաղտացած մի աղջիկ. ասում եմ անբաղտացած, ո-
րովհետեւ, եթէ ծնողները իրանց նահապետական հայեացքով
չվերաբերէին և կանոնաւոր կրթութիւն տային Յասմիկին,
նրանից շատ լաւ մարդ դուրս կգար հասարակութեան համար.
Իսկ այժմ, բաւական չէ ծնողների զատապարտելի մի վար-
մունքը—աղջկան կրթութիւն տալու պարտազանցութիւնը, նը-
րանք, այդ ծնողները այժմ վճռել են առանց աղջկան հարցնելու
և հակառակ նրա ցանկութեան՝ տալ տիրացու Դանիէլին. անխիղճ,
բռնակալ ծնողներ. մի բոպէ մտածում էք թէ ինչ յանցանք էք
գործում կամ գուցէ կարծում էք թէ լաւութիւն էք անում ձեր
զաւակին, վարելով նրա հետ, ինչպէս ձեր քէֆն է տալիս:
Միթէ կարելի է յարգել այսպիսի ծնողներ, կարելի է մանա-
ւանդ ինձ նրանց երեսը տեսնել այսքան անարգանք ու վիրա-
ւորանք կրելուց յետոյ: Ո՛չ, երկար մնալ անկարելի է ինձ,
խիղճս տանջում է ինձ, պէտք է հեռանալ, պէտք է գնալ այն-
տեղ, ուր ուրիշներն են տանջուած. տանջողը տանջողի, հա-
լածողը հալածողի մօտ է միայն մխիթարութիւն, հոգեկան

հանգստութիւն գտնուում: Բայց Յասմիկս. անխ, նա մենակ կը-
մնայ, ինչ կլինի նրա վիճակը. նա շատ կտանջւի, նա սուգ ու
լացի մէջ կանցկացնի իր մտտղաշ կեանքը. այդ ես գիտեմ.
Բայց ինչ արած, արդէն վճռած է պէտք է գնալ պատրաստել
(քայլերը ուղղում է դէպի դուռը, իսկ հակառակ դռնից մտնում են Օսան
խանուսը եւ Շողիկը):

ՕՍԱՆ ԽԱՆՈՒՄ. Խեղճ մարդը Գարեգնի դարդից հալ ու
մաշ էլաւ. ասա, ինչ ես շատ դարդ անում. Չահանումը որ-
դու գլխին էլ, փողի գլխին էլ. փող ունես, հարստութիւն ու-
նես, կեր, խմիր, վայելիր. ինչ ես աս ու վիշ անում ու օրդ
խաւարեցնում. հիմիկեան Չահիլները ծնողների դադրը չեն ի-
մանում. վաղ ժամանակները երեխան համարձակ չէր կտրող
ծնողներէ աչք ու ունքին մտիկ տալ. 13 տարեկան երեխայ
էի, ուզում էի նշանել. ես չէի գնում, վախենում էի և լաց
լինում. շամփուրներով ձեծելով ինձ քաշ տւին ծնողներս նը-
շանելու. իսկ հիմի աղջկերքը ծնողներէ երեսներն են քաղում
և իրանց ուզածը առաջ տանում (դառնալով դէպի Շողիկը), աղ-
ջի, Շողիկ, կանչեցիր Յասմիկին:

ՇՈՂԻԿ. կանչեցի, այս բոպէիս կգայ:

ՕՍ. Դանիէլն էլ ուշացաւ, խոստացաւ վաղ գալու (Յաս-
միկը յայտնում է). աղջի, ես քեզ եմ ուզում տեսնել, քո յետե-
ւից ման գալիս, հըր ես դէս դէն ընկել:

ՅԱՍ. Ի՞նչ ես կամենում, մայրիկ:

ՕՍ. Դանիէլը այս բոպէիս գալու է, պատրաստիր թա-
ղա շորերդ հագիր:

ՅԱՍ. Ի՞նչու համար, մայրիկ:

ՕՍ. Ինչպէս թէ ինչո՞ւ համար. քո ամուսնացուն կխօսի
քեզ հետ, կարգին պատրաստ, հագնուած չպէտք է լինես:

ՅԱՍ. մայրիկ, ես նրան չեմ ուզում, նա իմ ամուսինը
չէ կարող լինել:

ՕՍ. Ի՞նչ, ի՞նչ ասացիր, աղջի. դու նրան չես ուզում.
Ի՞նչպէս համարձակեցիր էդ խօսքը բերնիցդ հանելու:

ՅԱՍ. մի՞թէ չհաւանած մարդուն կարելի է առնել, մայրիկ:

ՕՍ. (յանկարձ յարձակողական շարժում գործելով), աղջի, դէ
ձէնդ կտրիր է, անամօթ:

ՇՈՂ. (Թեւից բռնում է) գնանք, Յասմիկ ջան, շորերդ հագիր:

ՅԱՍ. բաս, մայրիկ, պոռով էք տալու ինձ Դանիէլին:

ՕՍ. աղջի, էլի խօսեցիր, Շողիկ փէտը բեր մի սրա մէջ-
քը կտտրեմ, է, որ ձէնը կտրի. հերիք չէ Գարեգինը, դու էիր
պակաս. սող սող ուզում էք գերեզման մտցնել խեղճ հօրը.
գնա, հագնելի, քեզ ասում եմ:

ՅԱՍ. (դժգոհ, լացի ձայնով) Ինչպէս որ կամ լաւ է:

ՕՍ. աղջի, գնա, մազերդ սանդրիք, շորդ հագիր, դու էլ
մի կատաղի Գարեգնի պէս է:

ՇՈՂ. Յասմիկ ջան, Յասմիկ, գնանք, մի լաց լինիր (դուրս
են գնում երկուսով):

ՕՍ. էսպէս էլ կրակ կլինի, մտիկ արա—եւ Դանիէլին
չեմ ուզում ասում է. հիմիկեան աղջկերքը այբբէն կարդում
են, գիր գրել սովորում են թէ չէ, կատաղում են շան քածերը.
Իսկ շատ որ սովորում են, վախտին էլ մարդու չեն գնում, կա-
տարեալ լրբանում են ու սիրեկաններ պահում. էգուց չէ միւս
օրը Դանիէլը տէրտէր է օրհնելու, շնորհալի քահանայ է
դառնալու, ծառայելու է Աստու. տաճարին, նրանից էլ աւե-
լի լաւ փեսացու հնձը պիտի ձարենք (ժանրարայլ եւ ինքնավտաս
մտնում է տիրացու Գանիէլը):

ԴԱՆԻԷԼ. (հետևում է տէրտէրակամ ձեւերին). բարով տեսանք,
տիկնանց տիկին, ներողութիւն կանես, հարկաւոր գործ պա-
տահեց, ուշացայ:

ՕՍ. (մտնում է Գանիէլին, կամենալով ցոյց տալ իր տէրտէրափ-
րութիւնը). Թո՛ղ աջդ համբուրեմ, վաղը միւս օրը քահանայ ես
ձեռնադրելու և մանաւանդ որ մեր փեսացուն ես (համբուրում է):

ԴԱՆ. կարդ չէ աջ համբուրելը, քանի որ դեռ ես քահա-
նայ չեմ. ինչևիցէ Աստուած օրհնէ քեզ, տիկնանց տիկին, քո
այդ բարեպաշտութեան համար: Մուղսի աղան ի՞նչպէս է:

ՕՍ. այսօր բէֆ չունի և հանգստանում է իր ննջարա-
նում: Ա՛խ, երբ կլինի, Դանիէլ ջան, տեսնեմ քեզ քահանայ և
յետոյ առաջին պատարագիդ լսեմ շնորհալի ձայնդ «առէք կե-
րէք» ասելիս:

ԴԱՆ. պոսակից յետոյ շուտով, շուտով. անիճւած եպիս-
կոպոսը մեծ պահանջներ է անում. չէ ձեռնադրում, ասում է
ձայն ունես գիտութիւն չունես, ուսում չես առել, նրա ցաւը
գիտեմ ինչ է, փող է. ուզում ձեռնադրութեան համար, ու-
րիշներից 100—150 մանէթ է առնում, ինձնից մի քանի հա-
րիւրներ է պահանջում:

ՕՍ. ինչ կայ որ, մենք էլ կտանք քեզ, Դանիէլ ջան, Յաս-
միկի վրայ փող և տար վճարիր:

ԴԱՆ. «Հա հարուստ մարդու, Մուղսու աղայի աղջիկն ես
առնելու, մեզ բաժին չէ հատնելու», ասում է եպիսկոպոսը:

ՕՍ. այդպէս արծաթասէր է հմ եպիսկոպոսը:

ԴԱՆ. հիմիկեան ժամանակս ով արծաթասէր չէ. միայն
քեզ պէս տիկիներն են, որոնք պահպանում են մեր եկեղե-
ցու սուրբ աւանդութիւնները, նւիրւած. լինելով եկեղեցուն և

նրա սպասաւորներին. ոչ, հաւատը դեռ չի մեռել, տեսնելով տիկնանց բարեպաշտութիւնը և կրօնասիրութիւնը:

ՕՍ. բայց այգալիսի տիկիններ այժմ շատ քիչ են. նորերը, Չահիրները ստուել են եկեղեցուց, Դանիէլ ջան, հաւատը թեթեւացել, թաւացել է այժմ:

ԴԱՆ. օհ, ոչ, ոչ, այդպէս մի ասան, Օսանխանում. եթէ արդար էլ լինի ասածդ, պէտք չէ ասել. պէտք է միշտ լաւն ասել, ծաղկացնել, մարդկանց թերահաւատ չանելու համար:

ՕՍ. գլխաւոր պահասութիւնն այն է, որ եկեղեցիներում լաւ ձայնաւորներ չկան, լաւ չեն կարգում. ամեն եկեղեցում եթէ քեզ պէս շնորհալի ձայնաւորներ լինեն, այն ժամանակ ժամաւորներ շատ կլինեն. երբ քեզ տեսնում եմ պատարազի ժամանակ աւետարան կարդալիս բէմի վրայ և լսում հրաշալի ձայնդ՝ հոգիս զմայլում է, սիրտս մի հանգի է դառնում և ուզում եմ կարծես ծնկաչոք ընկնելով քարերը մաշել և արտասուներով լանալ:

ԴԱՆ. հա, հա, Օսանխանում, ինձ հետ էլ պատահում է, երբ աւետարան, ս. Գիրք կարդալիս աչքս զցում եմ ժողովրդի կողմը և կանանց դասում յանկարծ տեսնում եմ քեզ և կամ ուրիշ բարեպաշտ կանանց՝ հոգիս փառաւորում է, սիրտ եմ առնում, ձայնս շտկում, հոգով համբառնում եմ առ Աստուած՝ լսելի դարձնելու բարեպաշտ ժողովրդի ալօթքն ու մրմունջը (ձայնը փոխելով): Այս ամենը լաւ, բայց ուր է օրվորդը:

ՕՍ. այժմս այստեղ էր, սպասում էր քեզ, զնաց միւս սենեակը. շուտով կգայ (յայտնում է Յամիկը Շողիկի հետ). ահա գալիս է Յամիկը:

ԴԱՆ. (մտնում է առօր փառօր Յամիկին և ձեռք է տալիս) բարով տեսնեցանք, ինչպէս էք թանգազին, նազելի օրվորդ Յամիկ (անտարբեր ձեռք է տալիս նոյնպէս Շողիկին):

ՅԱՍ. (նազած ունի վարպազոյն կարծ զգեստ, մէջքին նորածեղեկացիկ դօտի կսպած, զլսի մազերը սանդղամիջին. պատասխանում է Գանիէլին ստոնածեամբ): Շնորհակալ եմ, այնպէս, ինչպէս ամեն ժամանակ:

ԴԱՆ. շատ ուրախ եմ, շատ ուրախ, լաւ կացիր, Աստուած օրհնի քեզ (աչքը չէ հեռացնում Յամիկից):

ՕՍ. (մի կողմ քաշելով Յամիկին, ակամջին սպառնալիքով ասում է «քեզ քաղաքավարի պահիր», դառնալով Գանիէլին) աղջիկս էսօր մի բիշ քէֆ չունի, Դանիէլ, մրսել է, հարբուխ ունի և գլուխը ցաւում է:

ԴԱՆ. օհ, ինչու, ինչու. այդ լաւ չէ, պէտք է պահպանել, սիրելիս:

ՅԱՍ. մայրիկ, ոչ մրսել եմ, ոչ հարբուխ ունեմ, ոչ էլ գլուխս է ցաւում:

ՕՍ. (բարկացած և չոսած աչքերով) սուտ մի ասի, գիշերս դու չէիր, հա հազում էիր, հա հազում:

ՇՈՂ. գիշերս ես էի հազում, մօքիր:

ՕՍ. ես տեսայ Յամիկն էլ էր հազում:

ԴԱՆ. լաւ չէ, լաւ չէ, պէտք է պահպանել, սիրելիս:

ՕՍ. Շողիկ, գնա սուրճ պատրաստիր, ես էլ գալիս եմ այս բոպէիս, սուրճը կրերես այստեղ, մէկ էլ չգնանք սեղանատուն (Շողիկը գնում է), ասում ես, Դանիէլ, պէտք է պահպանել, ի հարկ պէտք է պահպանել. հիմիկեան աղջկերքը միայն սազին, մօղային են հետևում, ուրիշ էլ բանի պէտք չեն լինում:

ՅԱՍ. ես այդպիսի աղջկերքի օրինակին չեմ հետևում. մայրիկ:

ԴԱՆ. ոչ, ոչ, Աստուած մի արասցէ, ի հարկէ ոչ:

ՕՍ. ես քո մասին չեմ ասում. քեզ էլ որ երկար ժամանակ պահենք առանց մարդու տալու, դու էլ նրանց պէս կը դառնաս:

ՅԱՍ. ով զարգացած աղջիկ է, նա վառ օրինակին չի հետևի. ես էլ Գարեգնի խորհուրդներով և խրատներով կաշխատեմ զարգանալ և վատից հեռու լինել:

ԴԱՆ. (նաւանուծեան նշաններ) հա, հա, այդպէս, ապրես, սիրելիս. վատից հեռու լինել:


ՕՍ. գնամ տեսնեմ, Շողիկն ինչ արեց սուրճը (զուրս է գնում):

ԴԱՆ. (քիչ քիչ սիրտ առնելով մօտնում է Յամիկին). հա, սիրելիս, աղնիւ օրվորդս, վատից հեռու պէտք է լինել (Յամիկը լուռ է, ոչինչ չէ պատասխանում). սիրելի օրվորդս, ինչու ոչինչ չէք խօսում, ամօթխածութիւնից արդեօք. ոչ, ոչ, ինձ հետ համարձակ եղէք (աւելի է մօտնում, իսկ Յամիկը յետ է քաշում):

ՅԱՍ. ես ոչինչ չունիմ խօսելիք:

ԴԱՆ. շատ բան ունինք, սիրելիս, խօսելիք մեր ապագայի մասին. դու իմ անթառամ պսակս ես լինելու, դու իմ հոգին ու սիրտն ես լինելու, դու իմ պահապան հրեշտակն ես լինելու, ապա չունի՞րք ոչինչ խօսելու մեր ամուսնական կենսակցութեան, մեր գալոց օրերի մասին:

ՅԱՍ. երբ այդ ամուսնութիւնը տեղի կունենայ, այն ժամանակ միայն կարող էք հոգ տանել, մտածել թէ ինչպէս ենք, ինչպէս սարքել. իսկ այժմ վաղաժամ անակեայ է:



4221-78

ԴԱՆ. ոչ, ոչ, այդպէս մի ասէք, սիրելիս. նախօրօք պէտք է մտածել և խօսել մեր անելիքի մասին. վաղւան հոգսը այսօր պէտք է քաշել քաղցած չմնալու համար:

ՅԱՍ. վաղւան համար հոգս մի անէք, որովհետև վաղւան օրն իրան համար հոգս կանէ, ասել է Տէրը: Բացի դրանից զդեռ շուրջ շտեմած, պէտք չէ բորիկանալ:

ԴԱՆ. այդ ի՞նչ է նշանակում, ազնիւ, իմաստուն օրիվորդս. կազաչեմ քեզ, մի տանջիր ինձ:

ՅԱՍ. ես առիթ չեմ տեսլ ձեզ տանջելու. ուզում եմ հասկացնել ձեզ, որ շապակ պէտք չէ, դեռ վաղ է ինձ համար ամուսնութիւնը:

ԴԱՆ. ոչ, ոչ, վաղ չէ. պէտք է ընդհակառակը շտապել. գարունն անցնելուն պէս պէտք է պսակենք, որից յետոյ և պէտք է արժանանամ շուտով բահանայական կոչման:

ՅԱՍ. այդ դուք գիտէք, միայն ես այդպէս շուտով մտադիր չեմ ամուսնանալ:

ԴԱՆ. օ, ինչու այդպէս, ինչու այդպէս, անթառամ պըսակս. սիրտս մի մորմոքիր այդպիսի սառը պատասխաններով. այն օրից, երբ քեզի տեսայ, յափշտակեցի, հրեշտակային կերպարանքդ զմայլեցրեց ինձ. Աստուծ, Տէր երկնային թագաւոր, կոչեցի, ահա և իմ բազոս, Քեզ եմ ապւինում, Դու ահապանիր իմ Յասմիկիս. օ, ազնիւ օրիվորդս, նազելի Յասմիկս, (երկու ձեռքը մոկնելով) տներ, տներ ձեռքդ. քեզ իմ ուսերի վրայ կոչեմ, քեզ իմ փարաջայի տակ կպահեմ, քեզ իմ ծոցիս մէջ կոչեմ նշխարքի պէս (բռնում է անսպասելի կերպով Յասմիկի մի ձեռքը եւ ամուսնով դէպի շրթունքը համբուրում է):

ՅԱՍ. (այլայլած ձեռքը յետ է քաշում) հանգիստ կացէք, Քրիստոսի աշակերտն էք լինելու, եղէք միամիտ, որպէս ազաւնի:

ԴԱՆ. ինչպէս հանգիստ մնամ, երբ սիրտս բորբոքում եմ քո պաղարին յայտնութիւններդ. ասա, ինչդրում եմ, ի սէր Յիսուս Քրիստոսի, համաձայն ես արդեօք շուտով պսակելու անարժանիս հետ, իմ բազոտակիցը լինելու:

ՅԱՍ. այդ հարցը ինձ չէ վերաբերում. դիմեցէք իմ ծընողներին, որոնք իրանց իրաւունք են համարում իմ բազոտ որոշելու:

ԴԱՆ. հա, սիրելիս, հա այդպէս. քո ծնողներդ արդէն որոշել են քո բազոտը, նրանք համաձայն են և դու իմս ես լինելու, իմս և ոչ ուրիշի (մտնում է Սիրօք. չարածձի հախացք է պցում տիրացու Գանիէլի վրայ. դիմելով Յասմիկին):

ՍԵՐՈՒ. բարընա խանում, մեծ խանումը կանչում է (Յասմիկը դուրս է գնում շտապ, առանց այլեւայլութան):

ԴԱՆ. չես կարճող ողջունել, երբ ներս ես գալիս, անքաղաքավարի, տաւար:

ՍԵՐ. ես քեզի տեսայ փողոցում, էլ խի՞ պիտի բարեւոյ որ:

ԴԱՆ. տեսնելիս մեծաւորին, պատուաւոր մարդուն—ամեն ժամանակ պիտի բարեւոյ, անասուն:

ՍԵՐ. տաւար, անասուն. բա, խի՞ ես ուշունց տալիս, տիրացու:

ԴԱՆ. նրա համար, որ գոհելի գեղացի ես, հասկացնեմ, էշութիւնդ թողնես:

ՍԵՐ. այ տիրացու, դէ բօլա ուշունց տաս է. դու հէնց ես գիտում քեզի չեմ ձանչնար. դու գեղացի չեմ, հերդ Յաննա վանքի չէր, բոս Օհանի որդին չեմ:

ԴԱՆ. դու ինչպէս երևում է պատկառանք չունիս, անամօթ, լիբը ծառայ ես:

ՍԵՐ. այ տիրացու, լիբը էլ ես, տաւար էլ ես, էշ էլ ես, անասուն էլ ես:

ԴԱՆ. (սաստիկ բարկացած յարձակում է) ի՞նչպէս ես համարձակում—լիբը, անամօթ, գարշելի արարած. ինձ տիրացու Դանիէլ կասեն:

ՍԵՐ. (յետ ու յետ քաշում դէպի դուրս) ինձ էլ քաշալ Սերօք կասեն. քաղցած շուն, ուզում է Մուղսու աղի փեսան դառնալ, բարընին առնել (դուրս է գնում):

ԴԱՆ. սպասիր, սպասիր, լիբը, անամօթ ծառայ. շուտով այս տան տէրը կգառնամ և քո ոտի հետքն անգամ չի լինիլ այստեղ (ինքն իրան). Օսան խանումն ասում էր—հիմիկան աղջկերքն են լրբացել. արա ծառաները, արա հասարակ, բանող խալիսը ոնց են փչացել, շնացել, ամեն պատկառանք ու ամօթ կորցրել: Տես, տես, էն քաշալին «քաղցած շուն, Մուղսու բարընին է ուզում առնել», ասում է: է՛է, ինչ ասեմ, զորդ էր ասում Օսան խանումը—հիմիկա կրօն, հաւատ, պատկառանք ու ամօթ, ամեն ինչ կորել է, աշխարհս տակն ու վրայ է լինում (մտնում են Օսան խանումը, Յասմիկը բերում է սուրճը փինջաններով բաժակախալի վրայ դրած, իսկ Շողիկը կաթնամանով կաթը, սուխարի եւ այլն):

ՕՍ. հիանալի կօֆէ դուրս եկաւ այսօր. ոչ որի տանը մեր քաղաքում այնպէս լաւ չէ պատրաստուում կօֆէ, ինչպէս մեզ մօտ: Համեցէք, անուշ արէք, Դանիէլ, սուխարի, կաթ (ամեն մէկը վերցնում է իրան համար մի թաս սուրճ):

ԴԱՆ. հա, տիկին Օլխաննա, լսել եմ ձեր մասին գովա-

սանք ամեն տեղ և ամենքից իրը առաջնակարգ տանտիկին-
քաղցր հացեղէն, մուրաբա նոյնպէս կարծեմ շատ լաւ էք պատ-
րաստում:

ՕՍ. խմորեղէն նոյնպէս հիանալի, իսկ մուրաբա, էլ մի
ասի. ամեն տեսակ պտղից, մինչև անգամ սերկիկից, ձմերու-
կի կեղևից և գլեհոից: Յասմիկն էլ ինձնից սովորելով սկսել է
լաւ պատրաստել. աղջիկս տնարարութեամբ իսկ ինձ է գցել:

ԴԱՆ. ես շատ եմ սիրում լաւ, տնարար տանտիկին. կինը
որ կայ կին պէտք է լինի ալգ մտքով և մէկ էլ երկիւղած, ջեր-
մեռանդ հաւատով առ Աստուած, եկեղեցին և նրա սպասաւորները:

ՕՍ. անցեալ օրը զոնաղ ունէինք. զմայլւած էր նա իմ
ձեռքով պատրաստած քուֆթայով. ասում էր—Օսան խանում,
այդ ինչ ձեռք է, որ պատրաստում է էսքան համեղ կերակուր-
ես ծիծաղում եմ ու ասում—դեռ այսօր քուֆթան էնքան էլ
իմ ուզածը դուրս չեկաւ. իսկ Մուղսին գովելով ինձ զոնաղի
մօտ ասում է. «իմ կնիկը որ կայ իրան քաշոսկի ամի, ոսկի»:

ԴԱՆ. Աստուած օրհնի, Աստուած օրհնի, Օսան խանում.
Աստուած աւելի կարողութիւն տացէ. ես բազմաւոր եմ, որ
այսպիսի շնորհալի և անւանի գօքանչ պիտի ունենամ. օրի-
վորդ Յասմիկը, յոյս ունիմ, որ մօր խասիաթից և շնորհքից
դաս առած լինի:

ՕՍ. Յասմիկը դեռ ջահիլ է. ինձնից ամեն բան սովորում
է, կղայ ժամանակ, երբ նա օրինակելի տանտիկին կլինի իմ
ձեռքի տակ:

ՅԱՍ. մայրիկ, ինչ որ ասում ես իմ մասին, ճշմարիտը
չես ասում. ես գրքեր կարգալ աւելի եմ սիրում քան կերա-
կուրներ եփել:

ՕՍ. (աշխատելով ցոյց չտալ իր տհաճութիւնը) ճշմարիտ է ա-
սում Յասմիկը, գրքեր էլ շատ է կարդում, կերակուրների ե-
փելն էլ իրան կարգով ինձնից սովորում է:

ԴԱՆ. ի հարկէ, ի հարկէ, այդպէս էլ պէտք է լինի. տնա-
րարութիւնը իրան կարգին, գրքերն իրան կարգին. պարապ
ժամանակ մենք միշտ Աստուծուն պիտի յիշենք. Աստուածաշունչ,
սաղմոս, ժամագիրք կարգանք:

ՅԱՍ. ես ուրիշ գրքեր եմ կարդում:

ԴԱՆ. ուրիշ գրքեր ևս կարգայ և ս. Գիրք, Վարք սըր-
բոց և այլ եկեղեցական գրքեր ևս կարգա, սիրելիս, և կտես-
նես սոցա առաւելութիւնը ուրիշ գրքերից:

ՅԱՍ. Գարեգինն ասում էր հոգևոր գրքեր կարդում են
նրանք, որոնք այս աշխարհի հետ կապ չունեն և ամեն ինչ
սպասում են հանդերձեալ աշխարհից:

ԴԱՆ. ոչ, ոչ, սխալ է այդ, սիրելի օրիվորդս. հոգևոր
գրքեր գրւած են ամենքի համար. պատուական եղբայրդ չա-
րաշար սխալու՞մ է:

ՅԱՍ. բայց եղբայրս շատ է կարդացել, մեծ ուսում ունի,
աշխարհներ է տեսել և գիտէ ճշմարիտը որն է:

ՕՍ. դու Դանիէլին աւելի պիտի հաւատաս. Աստուծո խօս-
քը նրան աւելի լաւ է յայտնի քան Գարեգինին, որը մոլորւած,
թերահաւատ ճանապարհի վրայ է կազնած:

ԴԱՆ. նա մանաւանդ, օրիվորդս, որ պատուական Գարե-
գին եղբայրդ «Փարմասիօնների» երկրումն է կրթութիւն ըս-
տացել, որը խորթ է Հայաստանեայից Առաքելական եկեղեցու
ոգուն և աւանդութիւններին:

ՅԱՍ. ես Գարեգինն ասածներին աւելի եմ հաւատում:

ՕՍ. (նամբրութեամբ զուրս գալով) դու դալաթ ես անում,
որ Գարեգինն աւելի ես հաւատում. նա մոլորւած ոչխար է.
դու էլ հետեւիր նրա յիմարութիւններին:

ԴԱՆ. այդ ոչինչ, ոչինչ, Օսան խանում, մի հերստուէք.
դեռ օրիվորդ Յասմիկը ջահիլ է, կփոխելի հոգով և մտքով իմ
ձեռքի տակ:

ՕՍ. հա, եթէ փոխելի և աւելի չյիմարանայ Գարեգին պէս:

ՅԱՍ. Գարեգինը յիմար չէ:

ԴԱՆ. (սուրճը խմելով) հիմիկս օրւայ ցաւն էն է, Օսան խա-
նում, որ մին փարա ջահիլներ կան, որոնք իրանց «ազաա-
միտ» են հրատարակում, իրանց «ինտլագանտ» թէ ինչ որ դո-
րադար են համարում, որոնք էլ ոչ ոքի չեն հաւանում, բացի
իրանց անձը, իրանք են ու իրանք, էլ ուրիշ ոչ ոք. այդ մոլո-
րեալ ոչխարները ամեն ինչ ուրանում են, ամենի պատիւը վեր
են գցում. էլ ոչ յարգանք հոգևորականին, կուսակրօնին, էլ ոչ
պատիւ ու ակնածութիւն մեծաւորին, իշխանաւորին. նրանք
փչացնում, երես են տալիս թէ հասարակ, աստուածավախ խալ-
խին և թէ մեր նահապետական ընտանիքների ջահիլ, համեստ
օրիվորդներին:

ՕՍ. այդ ինչ որ ասում ես, ամենը իսկ է. միայն մեր
ընտանիքը և Յասմիկը հեռու են այդ տեսակ լակոտ լուկուտ-
ներից: Է՛հ, Դանիէլ, չի արժէ այդ անպէտքների մասին խօ-
սել. համեցէք, էլի սուրճ կամենամք:

ԴԱՆ. ոչ, ոչ, Օսան խանում, բաւական է, շնորհակալ եմ
(վեր է կենում ամոռից, կապտաւուն թաշկինակով քիթը սրբում եւ մի-
րուրը մաքրում է, շորի փէշը թափ տալիս). ժամանակ է, պէտք է
գնալ:

ՕՍ. ինչո՞ւ այդպէս շուտ. խնդրում եմ մնալ ճաշին, Դանիէլ:

ԴԱՆ. օ, ոչ, այդ անկարելի է. ես անչափ ուրախ եմ իմ ապագայ պատւական գործանչիս ձեռքով պատրաստած ճաշը վայելել և օրիվորդ Յասմիկիս հետ միասին սեղան նստել. բայց այսօր այդ անկարող եմ. այս երեկոյեան եպիսկոպոսի մօտ կանչւած եմ. ձեզ մօտ կուշտ կեր ու խումից յետոյ գնալ տուն և քնով անցնել 2—3 ժամ, շատ կարելի է ուշանամ երեկոյեան ժամին և եպիսկոպոսի մօտ, ուրիշ անգամ մեծ ուրախութեամբ. դէ, այժմ մնացէք բարով, աղնիւ տիկին Օվսաննա, սիրելի օրիվորդ Յասմիկ (ձեռք է տալիս նրան, Շողիկին եւս ձեռք մեկնում անտարբերութեամբ հայեացքը դարձրած միայն դէպի առաջինները) ես դարձեալ շուտով կ'մտնեմ ձեզ մօտ:

ՕՍ. սպասիր, սպասիր, Դանիէլ, ծառային կանչեմ, ճանապարհ գցի, գուցէ Մուրկէն ջնջլով կապած չլինի (կանչում է). Սերճ, Սերճ, (սա գլուխը հանում է). ճանապարհ գցի Դանիէլին, Մուրկէն չկծի:

ԴԱՆ. բարև մնաք (ուզուում է դէպի դուրը թշնամական սպանական հայեացք գցելով Սերճի վրայ, որ նոյնն է անում, մասխարա գցում քաչալ գլուխը մի տեսակ պտտացնելով Դանիէլի յետևից):

ՕՍ. (Գիմնով Յասմիկին բարկացած) դու այսօր բոլորովին կատապել էիր. տես, Յասմիկ, կփռշմանես քո գոռոզ վարմունքի համար:

ՅԱՍ. ես Դանիէլին չեմ առնի ու չեմ առնի, մայրիկ (այդ միջոցին շան հուչոցի ձայներ են լսում):

ՕՍ. (աւելի ձայնը բարձրացնելով) մազերդ կքաղեմ գլխիդ, արեղ կխաւրեցնեմ, Յասմիկ:

ՅԱՍ. (սրտնեղ եւ լացի ձայնով) ես Դանիէլին չեմ առնի թէկուզ կտոր կտոր անէք (մտնում է Սերճը):

ՍԵՐ. ամա քիչ մնաց Մուրկէն քրքրէք տիրացուին:

ՕՍ. խօ չվաւսեց շունը Դանիէլին:

ՍԵՐ. չվաւսեց, ամա ընենց վրայ պրծաւ, հաչեց, որ տիրացուի ջանը դող ընկաւ ու հէնցիկ փախաւ որ:

ՕՍ. (Յասմիկին) գնանք, տես թէ օրդ ոնց ենք խաւրեցնում ես ու հէրդ (դուրս են գնում ամենքը բացի Սերճից):

ՍԵՐ. Աստուած, երկինք, էս քաչալ գլուխը (ձեռքով գլուխը տպապացնելով) աւելի շատ բան ա հասկանում տիրացու Դանիէլից:

Բ. Գ Ո Ր Ծ Ո Ղ Ո Ի Թ Ի Ի Ն

Գարեգնի սենեակը. աջ պատին գրասեղան իր գրելու բոլոր պարագաներով. սենեակի ձախակողմեան պատին գրքերի պահարան, նոյն պատի շարունակութեան վրայ մահճակալ. սենեակում կան և մի քանի աթոռներ: Գրասեղանի առաջ պատից կախ տւած են գեղեցիկ պօրտֆէյլ, ջերմաչափ, յետոյ սիմետրիկ կերպով ցցւած են առանց շրջանակների բաւականաչափ թւով լուսանկար պատկերներ գիտնականների, քաղաքական գործիչների, ինչպէս և մասնաւոր անձերի: Սենեակի միջին պատը ունի երկու պատուհան և մի դուռը. դուռը բացուում է դէպի պատշգամբը, որից յետոյ սկսում է պարտէզը: Գարնանային եղանակ է. պատուհանները և դուռը բաց են, որոնցից երևում են մթութեան մէջ ծառերը:

ԳԱՐ. (գրասեղանին նստած շտապ եւ անհանգիստ ինչ որ գրում է. աւարտելուց յետոյ տոմսը դնում է թանաքամանի մարմարինէ պատւանդանի տակ. նա հազնւած է ճանփորդի պէս—երկար ճողով կօշիկներ, սակօյեաժ թեւքին պցած, կարճ պիղժտկով. դրան շէմքին պատրաստի կապած դրւած են մի թեթեւ չէմօղան եւ մի կապոց—բարձի, վերմակի եւ վերարկուի: Անյայտ անձն գլուխը հանում է դնից. Գարեգինը դիմելով նրան կամացուկ): Ահա այս կապոցը և չէմօղանը, վերցրու տար, ես էլ իսկոյն գալիս եմ քո յետևից (անյայտ անձն վերջինից իրրը անհեամանում է): Այժմ ամեն ինչ պատրաստ է. միայն ոչինչ չմտանամ (մտածում է եւ տնտղում գրպանները). անցազիրը... պօրտմօնէ... այստեղ են (նայում է ժամացույցին). արդէն ժամանակ է, ուշանալ լաւ չէ; շտապել պէտք է: Բայց... Յասմիկը—նա մենակ է մնում, ոչինչ, ոչինչ. ուրիշ կերպ չի կարող լինել. ախ, միայն տեսնել կուղէի, գուցէ վերջին անգամ, բայց ոչ, այդ կարող է խանգարել... գնալ, գնալ պէտք է (ձեռքերը տարածելով Յասմիկի ննջարանի ուղղութեամբ). մնաս բարև, սիրելի քոյրիկս, մնաս բարև թանկագին, անուշահոտ ծաղիկ այս չորացած ընտանիքում. եթէ երբեք մենք դարձեալ տեսնենք, ճ, այն ժամանակ շատ բազում ուղիներ կլինենք միասին. մի քանի տարուց յետոյ թերևս աւելի բարգաւաճես, ծաղկես և քո անուշահոտ բուրմունքներից աշխարհիս տանջաւածները միայն

ոգի կառնեն, դու սպեղանի կգնես նրանց վէրքերին, նրանց սփոփանքն ու մխիթարիչը կլինես և նրանք իրանց մրմունջներով կօրհնեն քեզ, նրանց արցունքներով իբր ցօղի կաթիլներ կսրակեն և դու կզւարթանաս, աւելի կբուրես... մնաս բարև, մնաս բարև (ծնորով օղային համարյոք է ուղարկում եւ քայլերը շտապ ուղղելով դէպի դուռը դուրս է գնում, մի քանի վայրկեան լուծիւն. Մուրկէն սկսում է հասել, հաչոցը սաստկանում է, որից յետոյ ոտի թփփոց է լսում եւ յայտնում Սերոբը քնածածակս, զլսաբաց, արխալուխով եւ ոտաբորիկ, դէս դէն է նայում բալկոնից եւ յետոյ պատուհա. նից զլուխը հանելով Գարեգինի սենեակը նայում է շուրջը. տեսնելով ոչ որ չկայ մտնում է ներս):

ՍԵՐ. (նայում է շուրջը) էս ինչա, Գարեգին աղան չկայ, օթախը ըսենց թափթփած. անիծւած շունն էլ ինձ զարթնացրեց, քնահառամ արեց. ամա դորդ. Գարեգին աղան ուր ա գնացել ըսենց կանուխ. կարելի ա, որ գիշերս չի եկել, իր օթախում չի քնել. վերջին վախտերը ըսենց ա անում, գիշերները ուրիշ տեղ ա անցկացնում, տուն չի գալիս: Մենձ ազան, իրան ասածի, գոռոզ մարդ ա. ուզում է, որ ամենքը իրան խօսքովը պար գան. ափսոս չի Գարեգին աղան, օսկի ա օսկի, բարըշնան—պստի բիրն էլ նրան ա գցել, տեղն ու տեղը մեղր ու կաթ ա. բաս ախմախուժիւն չի բա ինչ ա, ըտէնց աղջկան ուզում են իշի գլուխ տիրացու Դանիէլին տալ. ասենք էդ բանը մենձ խանութի բանն ա, նա ես սաբըողը, աղէն էլ նրա խօսքովը ա գնում. գիմմիշ չի լինում. խանութա, ոնց որ տեսնում եմ, շատ ա ուզում նրան. եափշխանի պէս կպել ա տիրացուին էլ պոկ չի գալիս. աղա, ես մին բան եմ փեքր անում էս քաչալ գլխովս (ծնորով զլուխը ցոյց է տալիս), չըլինի թէ խանութը սիրում ա Դանիէլին, ով գիտա ախպէր, աշխարհիս բաները. ջահէլ կնիկ, մարդը պառաւ, հալից ընկած, էէ, մեղայ քեզ Աստուած, մեղայ քեզ, վախտ, վախտ ինչ բաներ ա միտքն անում մարդս. միտք չանի, բա ինչ զահրուժար անի, ըրնումա, ախպէր, ըսենց շատ բաներ ա ըլնում: էէ լուսազէմն ա, պէտքն ա հաւաքել, սարքել. բարըշնա խանութն էլ շատ կանուխ ա զարթնում. անհանգիստ ա ախպօր համար, որ ուշ ուշ ա երևում տանը թէ նրա համար, որ Դանիէլին են տալիս (հաւարում է գետնին թափմիփած թղթերը, աճողները կարգաւորում, մահճակալը, որի վրա մնացել է մուծաքան, թեթեւ վերմակն ու դոշակը, սարքում. մտնում է Յասմիկը):

ՅԱՍ. (առաւօտեան երկար զգեստով, տուֆլիներ հագին, մազերը չսանդրած, ուսերին ընկած) Գարեգինը էլի չի եկել գիշերս:

ՍԵՐ. խաբար չեմ, բարըշնա, գիշերս չեմ տեսել նրան:

առաւօտ կանուխ էլ շան հաչոցի վրայ զարթնայ, եկայ տեսնեմ, ոչ որ չկայ օթախում, թղթերը շաղտւած օթախում, կրաւառը անսարք, աթոռները դէս գէն.

ՅԱՍ. վերջին անգամ դու երբ ես տեսել Գարեգին:

ՍԵՐ. առաջի օրն էր, երբ էր:

ՅԱՍ. ոչինչ չասաց քեզ, ոչինչ չկարգադրեց:

ՍԵՐ. բան չասեց. ընենց մի հանգի էր, տխուր թէ բարկացած, ոնց որ վերջին վախտերը աղի հետ կուելուց յետքը:

ՅԱՍ. դու ինչ ես կարծում, այս գիշեր այստեղ էր թէ ոչ.

ՍԵՐ. Աստուած է խաբար, ինչ ասեմ, բարըշնա խանութ, գիշերը ուշ քնեցի ամա Գարեգին աղին չեմ տեսել:

ՅԱՍ. լաւ, դու գնա, Սերոբ, գործիդ շուտով խանութն ու աղէն վեր կկենան, սամօվարը պատրաստ լինի (Սերոբը դուրս է գնում). անխ, Աստուած, մի քանի օր է Գարեգին չեմ տեսել. վերջին անգամ հայրիկի հետ կուելուց յետոյ միայն երկու անգամ եմ տեսել, երկու անգամ է միայն գիշերել տանը: Հէնց այս գիշեր խառն ի խուռն երազներ տեսայ, որոնք ինձ հանգիստ չտւին: Եթէ մի անգամ էլ գայ տուն Գարիգոս, բաց չեմ թողնելու նրան, կխնդրեմ, կաղաչեմ, որ ինձնից չըհեռանայ, կամ թէ ուր գնում է ինձ էլ հետը տանի: Ա՛խ, ինչ վատ երազներ տեսայ, ես երազներին չեմ հաւատում, բայց անհանգիստ են անում: Չգիտեմ ինչպէս անեմ, որտեղ տեսնեմ Գարեգին, որ խնդրեմ ինձ էլ իրան հետ վերցնի, ինձ համար էլ անտանելի է դարձել այս տունը, մանաւանդ այն ժամանակից ի վեր, երբ ծնողներս սկսել են ինձ հալածել, կամենալով ըռնի կերպով ամուսնացնել Դանիէլի հետ. ոչ, ես կիփախեմ, կկորչեմ, կընկնեմ խոր անդունդը և առանց Գարեգինի, առանց նրա հոգեշունչ, ազնիւ խօսքերի չեմ կարող ապրել... արդեօք այստեղ է եղել այս գիշեր. (անհանգիստ նայում է շուրջը, մօտենալով մահճակալին տնտղում իրերը). նրա տաք վերմակը այստեղ չէ, բարձր այստեղ չէ, այս ի՞նչ է նշանակում (աւելի անհանգիստ. դիմելով դէպի դրասեղանը լուսանկար պատկերների մէջ դտնում է Գարեգինի նկարը եւ ուրախ բացականչում) անն գտայ Գարեգինս (համբուրում է մի քանի անգամ. շարունակում է քրքրել դրասեղանի իրերը, արկղը, պօրտֆելը. դտնելով թանարպամնի պատուանգանի տաղ ծրարը՝ կարդում է հասցէն—«սիրելի քոյր Յամիկին»): այս ի՞նչ է, (անհամբեր, շտապով ծրարը բաց է անում եւ տեղ տեղ կանգ առնելով կցկտուր կարդում է.): «Միբելի և անմոռանալի քոյրիկս! Այս տոմսը երբ էլ գտնելու լինիս և կարդաս, ես արդէն շատ հեռու կլինիմ (կանգ). մի որոնէք ինձ, ապարդիւն կլինի, որովհետեւ չէք կարող գտնել ինձ. տայ Աստուած, որ մենք դարձեալ

երբ և իցէ տեսնենք, ո՞վ գիտէ կտեսնենք արդեօք (կանգ. բացականչում է. տէ՛ր Աստուած). մի վշտանար, մի տխրիք, որ հեռանում եմ, թողնելով քեզ միայնակ, առանց նոյն իսկ քեզ տեսնելու, այլապէս չէի կարող վարել, թէև գիտես դու իմ զգացմունքը գէպի քեզ... մնաս բարև ազնիւ քոյրիկս, հազարաւոր համրոյրներ, մնաս բարև գուցէ ընդ միշտ: Քո Գարիգ» (աճնդ միշտ, քո Գարիգ» խօսքերը կարդալիս սոսկալի սրտածմիկ ճիչ է արձակում կարծես զնրկակհար եղած եւ կանչելով «Գարիգ, Գարիգ» ընկնում է ածողի վրայ զրեծէ ուշագնաց. ներս է մտնում Սերորը):

ՍԵՐ. (ուսից թեթեւ բռնելով եւ թափ տալով) բարըշնա խանում, ի՞նչ պատահեց, հիւանդ ես, բարըշնա:

ՅԱՍ. (ուշքի է գալիս) ա՛խ, տէր Աստուած, (դիւ ձայնով) Գարիգ, Գարիգ (զարձեալ ընկնում է):

ՍԵՐ. բարըշնա, ի՞նչ պատահեց, ասա՛, բարըշնա (ձայն չէ հանում). ահա ինչ օրը գցեց, խեղճ իմ բարըշնին էն աւանակ տիրացու Գանէլը (շտապ եւ անհանդիստ մօտենում է զրանը եւ բարձր կանչում «խանո՛ւմ, խանո՛ւմ, շուտ հասէք»): ներս են վազում սրբտապատառ Օսանը եւ Շողիկը):

ՕՍ. (մտնելիս) ի՞նչ գոռոց էր, ինչ խաբար է, ինչ պատահեց:

ՍԵՐ. բարըշնան, հիւանդ է և ուշքը կգնայ (Օսանը եւ Շողիկը շրջապատում են):

ՕՍ. Յասմիկ, Յասմիկ, աղջի, ինչ պատահեց քեզ:

ՅԱՍ. (աչքերը բաց է անում) ոչինչ, մայրիկ, (ձուլում է. Գարիգ, Գարիգ):

ՕՍ. աղջի, ուշքդ հաւաքիր, դէ ասա, ի՞նչ է պատահել, ինչի՞ ես Գարիգ կանչում:

ՅԱՍ. Գարիգ չկայ, մայրիկ, ես կմեռնեմ, Գարիգը չկայ այլևս...

ՕՍ. ինչպէս թէ չկայ, ո՞ւր է գնացել, ինչ է պատահել, ասա պարզ հասկանամ:

ՅԱՍ. առ կարգս (տալիս է տոմսը) հայրիկին կանչէք, թող Գարիգին գտնի շուտով. (հեկեկալով լաց է վնում):

ՇՈՂ. (նոյնպէս լացի ձայնով). Յասմիկ ջան, լաց մի՛ լինիր:

ՕՍ. Շողիկ, գնա շուտ, կանչիր հայրիկին (Շողիկը զուրս է գնում, նրա հետ եւ Սերորը. ծրարը կարողում է կցկտուր եւ մեծ դժուարութեամբ) ո՞ւր է գնացել կամ ինչ է պատահել նրան, ոչինչ չեմ հասկանում այս գրածից (ներս են մտնում Մուղսին, Շողիկը եւ Սերորը):

ՄՈՒՂ. էս ի՞նչ զալմաղալ էք գցել

ՕՍ. առ, վերցրու կարգա, տես ինչ է գրում պատահանորդիդ:

ՄՈՒՂ. (ակնոցները դնելով բթին, մտքումը կարդում է ծրարը): Հըմ, հըմ. գրում է, որ հեռանում է մեզնից, թէ ո՞ւր, չէ գրում: Չեմ հասկանում, սա ինչ օյիւն է. սրանով ուզում է երևի ծնողացը վախացնել. հանգիստ կացէք, զարգակ բան է, կանցնի մի քանի ժամանակ, կփոշմանի, էլի յետ կգայ:

ՅԱՍ. (մինչև այդ ժամանակ լուռ, զուկը դրած ձեռքերին եւ ածողի մ'չքին յենած՝ յանկարծ ճչում է) Գարիգ, Գարիգ:

ՄՈՒՂ. Յասմիկ, խելարութիւն մի անիր, Գարեգինը կորչող պտուղ չէ:

ՅԱՍ. (զառնալով դէպի հայրը վշտացած) հայ՛ի, դու միշտ այդպէս վատարանում ես Գարեգինին. նա իր հեռանալու դիտաւորութեան մասին ինձ յայտնեց վերջերս, ես չհաւատացի. նա կատարեց իր խօսքը. դէ այժմ գտիր, հայր, գտիր Գարեգինին (կսկիծով լաց է վնում):

ՄՈՒՂ. Յասմիկ, հանգիստ կացիր, ասում եմ քեզ: Ի՞ զուր էք դրա համար վշտանում:

ՅԱՍ. (հնծկտանքով) եթէ ես հաստատ համոզւած չլինէի, որ Գարեգինը մեզնից բաժանւել, հեռացել է «գուցէ և ընդ միշտ», ինչպէս ինքն է գրում, որ նա իր խօսքի տէրն է, ես այսքան չէի վշտանալ, չէի տանջւել:

ՄՈՒՂ. (փոքր ինչ մղմացած) հանգիստ եղիր, հոգիս, մի վշտանար, ամեն միջոց գործ կղուրի, Գարեգինին ոչինչ չի պատահի:

ՕՍ. պէտք է ոստիկանութեան յայտնել, այս այն կողմը մարդիկ ուղարկել:

ՄՈՒՂ. Օսան, դու Յասմիկին տար հանգստացրու. այդ բաների մասին դուք հոգս մի անէք. ամեն ինչ այսօր և եթէ կկարգադրուի (Օսանը նշան է անում, Շողիկը Յասմիկին թեւից բռնում միաժամանակ երեքով զուրս են գնում. Մուղսին դիմելով Սերորին) Սերոր, դու այսօր տանից դուրս կերթաս հարց ու փորձ կանես ծանօթներին, բարեկամներին Գարեգինի մասին, կիմանաս վերջին ժամանակները ում մօտ էր գիշերները անցկացնում և թէ ով է նրան տեսել և երբ տեսել. հասկացա՛ր:

ՍԵՐ. հասկացայ, աղա, աչքիս վրայ, հարց ու փորձ կանեմ:

ՄՈՒՂ. աշխատիր ամեն կերպ իմանալ նրա ուր լինելու մասին և շուտով խաբար կրերես, դէ գնա այժմ (Սերորը զուրս է գնում. Մուղսին մտածմունքների մէջ ընկած նստում է ածողի վրայ) էլի նոր օյիւն է ուզում սարքել մեր գլխին Գարեգինը. օ՛,

փուշ դաւակ. օյինքազութիւններով դու ուզում ես անուն հա-
նել և ծերացած, ալեո՞ր ծնողդ խայտառակել: Բայց արդեօք
օյին է խաղում թէ ճշմարիտ գլուխը ուղի արաւ ծնողներից,
ինչ որ փորձանք բերելու իր գլխին. չէ, Յասմիկի կսկիծը
բան է նշանակում, նրա սիրտը կարծես բան է զգում. չինի՞
արդարև գլուխն ուզում է փշացնել Գարեգինը. եթէ այդպէս
էլ անի, ո՞վ է մեղաւոր. անշուշտ ինքը. բայց եթէ ես... ես մի-
թէ կարող եմ մեղաւոր լինել, մինչդեռ նրա բարիքը, նրա լա-
ուութիւնն էի ցանկանում երբեմնակի նախատելով նրան. իսկ
եթէ այդ պատճառ դառնար նրա կորստեան. օ՛, ծանր է մը-
տածել: Չէ, պէտք է միջոցներ ձեռք առնել, պէտք է որոնել,
պէտք է ոստիկանութեան յայտնել: Ո՞վ Աստուած, մի դարձ-
րու քո երեսը ինձնից, խնայիր, հեռու պահիր ինձ դառնու-
թիւնից իմ այս ծերութեան հասակում (մոնում է գանիէլը):

ԳԱՆ. բարով, Մուղսի աղա, ի՞նչպէս է ձեր թանկագին
առողջութիւնը (ակնածու՞ծեամբ և խոնարհու՞ծեամբ ձեռք է տալիս):

ՄՈՒՂ. բարով, Գանիէլ. քէփա լաւ չէ, առողջութիւնս
խանգարւած. հիմի էլ նոր դարդ է աւելանում ինձ. Աստուած
բարկանում է վրաս, ո՞ր մեղքերիս համար, Տէրը ինքը միայն
գիտէ:

ԳԱՆ. հա, այս բոլորիս ինձ յայտնեցին, Գարեգնի անհե-
տանալու մասին. հոգ մի անէք շատ, Մուղսի աղա, ամենա-
կարող Աստուածը բարի է, նա չի կորցնի ձեզ պէս ազնիւ
մարդկանց. Գարեգինը երեխայ չէ, զարգացած երիտասարդ է,
իր գլխին չար բան չի բերի:

ՄՈՒՂ. շնորհակալ եմ խրախուսանքիդ համար. գիտեմ
Գարեգինը անմիտ երեխայ չէ. բայց ո՞վ գիտէ, Գանիէլ, երի-
տասարդ է, ինքնասէր և տաքարիւն, նա վերաբորւած էր ինձ-
նից մանաւանդ վերջին անգամ ինձ հետ ընդհարում ունենա-
լուց յետոյ. անհանգիստ եմ այդ կողմից և վախենում եմ դըլ-
խին որեւէ փորձանք չբերէ:

ԳԱՆ. Աստուած ողորմած է և բարի. երկմիտ մի լինիք,
Մուղսի աղա, պատահածի վրայ մի տրտնջաք, վասն զի ամեն
ինչ Աստուածանից է, նա մեծ է, և հզօր. ամենայն ինչ նովաւ
եզև և առանց նորա եղև և ոչինչ՝ որ ինչ եղևն:

ՄՈՒՂ, լաւ ես ասում, Գանիէլ, ամա չի լինում, մարդ
ենք, միտք ենք անում չարն ու բարու մասին:

ԳԱՆ. չարը սատանան է, բարին հրեշտակը. արդար, բա-
րեպաշտ մարդկանց պահապան է հրեշտակը, որից հեռու է
փախչում սատանան. միամիտ եղէք, հրեշտակը ձեզ օգնական
և պահապան կլինի:

ՄՈՒՂ. ուրեմն ի՞նչ անենք, ձեռքներս ծալենք և նստենք,
միջոցներ ձեռք չառնենք որոնելու կորած որդուն:

ԳԱՆ. ոչ, ոչ, Մուղսի աղա. դուք արդար էք. պէտք է
աշխատել, որոնել, միայն ես ասում եմ, որ պահապան հրեշ-
տակը ձեզ պահապան լինելով կօգնէ, ճանապարհը ցոյց կըտայ:

ՄՈՒՂ. թող այդպէս լինի, եթէ հաւատացած ես:

ԳԱՆ. այդպէս է, այդպէս. հաւատ քո կեցուցին գրեզ. ա-
պաւինեցէք առ Աստուած և ամենայն ինչ նովաւ եղիցի:

ՄՈՒՂ. պէտք է միայն շտապել ոստիկանութեան յայտ-
նել, դէս դէն մարդիկ ուղարկել:

ԳԱՆ. Տէրն մեր Յիսուս Քրիստոս փարատէ այս տանից
ամեն վիշտ և փորձանք:

ՄՈՒՂ. ամեն, ամեն, օրհնանքդ լսելի արասցէ Աստուած:

ԳԱՆ. Մուղսի աղա, հարկաւոր է և ուրախութեան օրե-
րի մասին մտածել. եպիսկոպոսը խոստացաւ շուտով ձեռնադ-
րել, ձեր բարեհաճ կարգադրութեամբ հարսանեաց պատրաս-
տութիւն պէտք կլինի շուտով տեսնել:

ՄՈՒՂ. Գանիէլ, տեսնենք ինչ է լինում Գարեգնի հետ.
միտո՞ժամանակ պէտք կլինի սպասէք, եթէ Աստուած մի արաս-
ցէ, մի փորձանք պատահի նրա հետ, վշտի և տխրութեան օ-
րերում, գիտես, որ հարսանիք անել անկարելի կլինի:

ԳԱՆ. շատ ծանր է թւում ինձ այդ յետաձգումն, որով-
հետև այդպիսով ցարձեալ յետաձգում է քահանայ ձեռնադր-
ւելս. բայց ինչ արած, պէտք է խոնարհել ճակատագրին. եթէ
դուք, Մուղսի աղա, այդպէս էք ցանկանում, եղիցի ձեր կամքը:

ՄՈՒՂ, մի քանի ամիս առաջ թէ յետոյ ձեռնադրւել, միև-
նոյն է. միայն թէ ուրախ և հանգիստ օրերին հարսանիք ա-
նենք. իսկ դու ապահով եղիր. հարսանիք կանենք և առօք
փառօք քահանայ կձեռնադրւես, եպիսկոպոսը իմ կամքին հա-
կառակ բան չի անի:

ԳԱՆ. շնորհակալ եմ, Մուղսի աղա, թող ձեր կամքը կա-
տարւի:

ՄՈՒՂ. ինձ հարկաւոր է տանից դուրս գնալ Գարեգնի
համար. մնացէք այստեղ. Օսանին կասեմ, որ քեզ մենակ թո-
ղեցի:

ԳԱՆ. Տէր ընդ ձեզ, Մուղսի աղա (Մուղսին դուրս է գնում)
ձեռնադրութիւնս էլի յետաձգւեց ամիսներ, ու գիտէ գուցէ և
տարի. անբաղա մարդ եմ, շատ անբաղա. եպիսկոպոսը չէ
ձեռնադրում, ասում է կրթութիւն, ցենց չունես, թէև գիտեմ
նրա փորացաւն ինչ է, ակնարկներից երևում է, որ մեծ գու-
մար է պահանջում. բայց որտեղից կարող եմ վճարել, եթէ

Մուզսի աղայի փեսան չդառնամ և նա ինձ չօգնէ: 15 տարի է աշխատում եմ քահանայ ձեռնադրւել և ինձ չի յաջողում, որովհետև աղքատ մարդ եմ և հարուստ բարեկամներ չունեմ: Բաղտիս անիւը կարծես սկսել էր պատւել և ես յոյս ունէի շուտով Մուզսի աղայի փեսան դառնալ, բայց էլի անիւը ուրիշ կողմը շուռ տւեց, թեքեց: Ինչ արած, պէտք է սպասել, ճարս ինչ որ. էհ, բաղտ եմ ասում էէ. բաղտ (մտնում է Օսան խոնումը):

ՕՍ. անխ, դու այստեղ ես, Դանիէլ ջան (կրրոտ կերպով համբուրում է ձեռքը, իսկ Գանիէլը նրա մակառք) ես մտածում էի հէնց քո մասին. Գարեգինը օյիւններ է խաղում մեր գլխին, նրա պատճառով դու էլ ես անհանգստանում. հարսանիքը ուշանում է, հետևապէս ձեռնադրութիւնդ էլ յետաձգւում է: Ինչքան կուզէի, որ շուտով հարսանիք լինէր և յետոյ տեղափոխւէիր վերջապէս մեզ մօտ իբրև տանու փեսայ:

ԴԱՆ. սիրելի տիկնանց տիկին, իմ ապագայ պատւական զորանչս. ճշմարիտ է, ինձ չափադանց անախորժ է հարսանեաց յետաձգումը, բայց ինչ արած, պէտք է խոնարհւել ճակատագրին. որքան բաղտաւոր ինձ կզգայի, Օսան ջան, քեզ տեսնել շուտով իմ զորանչ. ո՛ր է իմ սիրելի օրիվորդ Յասմիկ:

ՕՍ. Յասմիկը իր սենեակումն է և շատ վատ է զգում իրան. նա Գարեգինի համար սաստիկ վշտանում է և շարունակ լաց է լինում և մազերը գլխին փետում:

ԴԱՆ. օ՛հ, խեղճ օրիվորդս. ուրախութեան օրեր տեսնելու փոխարէն վիշտ և տխրութիւն ես ճաշակում. պէտք է սակայն սիրտ տալ, հանգստացնել, քաջալերել օրիվորդին:

ՕՍ. չի լինում, Դանիէլ. ինչքան ասում ես, այնքան աւելի է հեկեկում. նա խելագարի պէս սիրում է Գարեգինին:

ԴԱՆ. օ՛, սե բաղտ. ուրեմն օրիվորդս տանջւում է Գարեգինի համար, իսկ ինձ երեւի բոլորովին մոռացել է և իսկի չի էլ մտածում թէ ես ինչքան կտխրեմ նրան այդ դրութեան մէջ տեսնելով:

ՕՍ. մի քանի անգամ արդէն ուշաթափւել է և ոչ ոքի վրայ էլ ուշադրութիւն չէ դարձնում և կանչում է շարունակ — Գարիգ, Գարիգ:

ԴԱՆ. ոհ, որքան ծանր է ինձ այդ լսել.

ՕՍ. հիմի էլ ասացի, Դանիէլն այստեղ է, գնանք նրա մօտ—ասաց—թո՛ղ ինձ հանգիստ, ոչ ոքին չեմ ուզում տեսնել:

ԴԱՆ. ով երկինք, միթէ նա ինձ չէ սիրում:

ՕՍ. ոչինչ, եթէ չէ սիրում, մենք սիրել կտանք նրան

քեզ, ինձ վրայ վստահ եղիր, Դանիէլ ջան, բնաւ երկմիտ մի լինիր:

ԴԱՆ. (զգացած մօտենում է Օսանին) անխ, տիկնանց տիկին, որքան ինձ մխիթարում ես, որքան ես պարտական եմ քեզ, Օսան ջան (համբուրում է արագաբար մի քանի անգամ ձեռքը, իսկ Օսանը կրրոտութեամբ համբուրում է իրան Գանիէլին մի քանի անգամ):

ՕՍ. անխ, Դանիէլ ջան, իսկ ես քեզ որքան եմ սիրում...

ԴԱՆ. միթէ կարելի է այդպէս, միթէ կարելի է, սիրելի տիկին:

ՕՍ. կարելի է թէ չէ կարելի, այդպէս է ինձ իմ սիրտս թելազրում:

ԴԱՆ. սակայն այդ մեղք է, Օսան ջան:

ՕՍ. մեղք է այն, որի համար տարիներ շարունակ տանջւում է մարդս:

ԴԱՆ. ամուսնական անհաւատարմութիւնը ժխտում է քրիստոնէական եկեղեցին. մի շնար, ասել է Տէրն մեր Յիսուս Քրիստոս:

ՕՍ. 35 տարեկան հասակից ահա արդէն 10 տարի շարունակ տանջւում եմ իմ ամուսնու թուլութեան պատճառով, կարելի է միթէ այսպիսի գէպքերին վերաբերել աւետարանի խօսքերը. ախ, Դանիէլ ջան, հերիք է այդ մասին խօսես (զրկում է եւ համբուրում):

ԴԱՆ. (սիրտ առնելով նոյնպէս կրրոտ համբոյրներ է տալիս) անխ, Օսան ջան, ես ես քեզ սիրեցի, ապա Յասմիկս...

ՕՍ. այդ մասին յետոյ... յետոյ. գնանք, գնանք շուտով իմ սենեակը (Թե Թեւի բռնած դուրս են գնում. մտնում են Յասմիկն ու Շողիկը. վերջինս Յասմիկի թեւից բռնած):

ՇՈՂ. Յասմիկ ջան, համբերութիւն ունեցիր, Ասուած վկայ ամեն բանին ճար կլինի և վերջը բարի:

ՅԱՍ. անխ, Շողիկ, Շողիկ, որքան անհոգ սիրտ ունիս «ամեն բանին ճար կլինի և վերջն էլ բարի». դու բոլորովին մօրս ազդեցութեան տակ, նրա պէս անհոգ և անզարդ ես դարձել:

ՇՈՂ. շատ կարելի է այդպէս լինի. բայց ի՞նչ կարող ես անել լաց ու սուգ անելով և քեզ մաշելով:

ՅԱՍ. պատահած դժբաղտութիւնը թանգազին եղբօրս հետ գտնադին կսկիծ է պատճառում ինձ, Շողիկ. չգիտեմ ուրիշները ինչպէս, բայց ես այդ կսկիծը անկարող եմ լինում յաղթահարել. ո՞վ գիտէ, ինչ կարող էր պատահել նրա հետ, ինչ փորձանք. ով գիտէ կենդանի է թէ մեռած այժմս. անխ,

Փարիզ, կլսեմ արդեօք դարձեալ քո ձայնը, քո ազնիւ խօսքերը, որոնցով ինձ ներշնչեցիր:

ՇՈՂ. (զրկելով Յասմիկին և լացի ձայնով) հանգիստ եղիր, Յասմիկ ջան, հանգիստ եղիր ի սէր Աստծոյ:

ՅԱՍ. հանգիստ լինել անկարելի է, զգացմունքս խեղատում, չէ թոյլ տալիս հանգիստ լինել:

ՇՈՂ. արդէն ապուն գնաց հարց ու փորձ անելու, աստիկանութեան յայտնելու. հաւատացիր, Յասմիկ ջան, որ նչինչ ֆրաս չի պատահի Փարեզնի հետ:

ՅԱՍ. դու այնպէս ես խօսում, կարծես մի բան գիտես և չես ասում. ասա խնդրում եմ, Շողիկ, գիտե՞ս արդեօք որեւէ հաստատ բան Փարիզի մասին:

ՇՈՂ. ես ոչինչ չգիտեմ, բայց սիրտս վկայում է, որ ոչինչ չի պատահի Փարեզնի հետ, որովհետեւ նա երեխայ չէ, զարգացած, խելացի մարդ է և ինձ թւում է թէ նա միայն բարի և խելացի գործ կտեսնի:

ՅԱՍ. ախ, Շողիկ ջան, այդ այդպէս է և ես այդ բանի մէջ կասկած չունիմ. միայն սիրտս չէ հանգստանում. որեւէ դժբաղդ դէպք, փորձանք տեղի է ունենում շատ անգամ բոլորովին անկախ մարդու կամքից և խելքից. այդ կողմից ահա ես շատ երկմիտ եմ, մանաւանդ որ Փարիզը զգայուն սրտի տէր է և ընդունակ ինչ առիթով էլ լինի վճռական քայլեր անելու մէջ:

ՇՈՂ. ինչեւիցէ, Յասմիկ ջան, դու գիտես թէ ես քեզ որքան եմ սիրում. աշխատիր հանգիստ լինել, սիրելիս, յուսալով որ Փարիզը ողջ և առողջ կյայտունի դարձեալ. նամանաւանդ առայժմ յուսահատուելու տեղիք չկայ, քանի որ ամեն միջոց ձեռք կառնի նրա ուր լինելը իմանալու:

ՅԱՍ. շնորհակալ եմ, Շողիկ ջան, քո քաջալերելի խօսքերի համար. գիտեմ, որ դու ինձ անկեղծ սիրում ես, ինչպէս և ես քեզ. ուրիշ կերպ չէ կարող լինել մանկութեան ընկերուհիներին:

ՇՈՂ. խոստացիր, Յասմիկ ջան, պահպանել քեզ, և աշխատել չընկճւել զգացմունքներին. ես կուզէի իմ սիրտս բանալ քեզ իբր իմ սիրելի ընկերուհուս:

ՅԱՍ. խօսիր, խօսիր, Շողիկ, ես կլսեմ քեզ մինչև վերջ: ՇՈՂ. տեսնում ես դու, Յասմիկ, ինչպէս եմ ես ինձ պահում, կարծես մի անհոգ, անզարգ, անզգայուն մէկը լինեմ, այդպէս չէ. ինչպէս դու էլ անւանցիր ինձ փոքր ինչ առաջ թերևս վշտի ճնշման տակ: Բայց դու տեսնէիր, սիրելիս, թէ ինչպէս մարդկանց աչքից հեռու միայնակ սենեակում, անկիւն-

կիւններում, անկողնում, հառաչում, ողբում եմ անբաղա՛վ ճակս. դու գիտես, որ ես մանկութիւնից զրկւած հօրից, մօրից, կատարեալ անօգնական որբ ապաստան եմ գտել միակ ազգականիս մօտ, իմ հօրեղբոր և քո հօր ընտանիքում. գիտես թէ այս խնամակալութիւնը ինչ հետքեր է թողել իմ սրտիս մէջ, ինչ թանգ է նստել ինձ վրայ. այս ընտանիքում ես մի անշունչ առարկայ եմ, որ ըստ քմահաճութեան կարելի է լինում այս այն կողմը շարժել, կատարեալ մի մանեկեն. ախ, սիրելի Յասմիկ, դու զգում ես այդ ծանրութիւնը և հարւածներ է, որ կրում ես. իսկ քո տանջանքները աւելի ևս կսկիւծ են պատճառում իմ ջախջախւած սրտին:

ՅԱՍ. (Թաշկինակը տանելով աչքերին, լացի ձայնով) շարունակիր, շարունակիր, Շողիկ, ես լսում եմ:

ՇՈՂ. այժմս 22 տարեկան հասակումս եմ, զուրկ կամքից, ցանկութիւնից, որեւէ հաճոյքից. լսում եմ ու կատարում այն ամենը, ինչ թելադրում է ինձ. թէ կեանքն է ինձ պատժել և թէ բնութիւնը. սեմ եմ ես հարկաւոր. ոչ ոքին. բայց իբրև փալաս, այն, հարկաւոր եմ ամենքին: Եթէ հնարք լինէր ազատել ճնշող խնամակալութիւնից և աշխատէի արհեստանոցում և գործարանում կամ մի արհեստ, անկախ պարագմունք ունենայի, այն ժամանակ ազատօրէն կտնօրինէի իմ վիճակս, իսկ այժմս., ձեռք ու ոտքս կապած այս նահապետական ընտանիքում մի քայլ առաջ չեմ կարողանում անել և եթէ քեզ տիրացու Դանիէլի պէս մարդու հետ ես ամուսնացնում, ով գիտէ վաղը ինձ ինչ է սպասում, ինչպիսի գազան մարդու ճանկն եմ ընկնելու, կամ արդեօք արժանանալու եմ երբեւիցէ բաղտի, քանի որ հասակս արդէն պառուած աղջկայ հասակ է համարւում մեղանում, որի համար էլ վճուել են քեզ այդպէս շուտ մարդու տալ:

ՅԱՍ. ես տիրացու Դանիէլին երբէք չեմ առնի, Շողիկ, թէկուզ ծնողներս ինձ կտոր կտոր անեն:

ՇՈՂ. լաւ է, որ դու վճուել ես այդպէս, իսկ ես վճուողականութիւնից էլ զուրկ եմ բնաւ: Ուրեմն կարող ես երևակայել մի դրութիւն աւելի ծանր քան իմ դրութիւնը: Ախ, Յասմիկ, դու երջանիկ ես գոնէ նրանով, որ գիտես թէ ինչ անել և ինչպէս տնօրինել վիճակդ. իսկ ես... Տէր իմ Աստուած, ինչու ստեղծեցիր ինձ (վարդանալով տանել կսկիւծը հեկեկում է և ընկնում Յասմիկի գիրկը):

ՅԱՍ. (նոյնպիս արտասելով). ախ, ինչպէս կուզէի օգնել քեզ, Շողիկ ջան, և սիտիել դառնացած վիճակդ:

ՇՈՂ. օգնել ինձ, ոչ ոք թերևս չէ կարող. ես ոչնչու-

Թիւն եմ և կորած մի ոմն այս աշխարհում... (մտնում է Օսանը):

ՕՍ. Խնչ մասլահաթի մէջն էք (Շողիկին) աղջի, գետինը մտած, Խնչ ես վեր ընկած էստեղ, գեազանս ուր է, հալա չի չի եկէլ:

ՇՈՂ. դեռ չի եկել. ապուն նրան ուղարկեց այս այն կողմը հարց ու փորձ անելու:

ՕՍ. այդ ես գիտեմ, որ ուղարկեց. ինչի՞ ուշացաւ անիծւածը. հազար մի բան կայ անելու տանը, դուք կտրւածներդ էլ, եկել էք էստեղ մասլահաթ անելու. էլ չէք ասում խոհանոցը, տուն տեղը թափթփած է և պէտք է կարգի բերել, (Շողիկին) գնա խոհանոցը, ամանները լւա, մաքրիւր, իրիկւանից անամօթ գեազէն թողել է հէնց այնպէս, չէ մաքրել (Շողիկը դուրս է գնում): Իսկ քեզ խօս խօսք չէ կարելի ասել, այնպէս ես թնթոռչել:

ՅԱՍ. ես, մայրիկ, ոչինչ չեմ կարող շինել, մինչև որ Գարեգոս չվերագառնայ:

ՕՍ. կարելի է, որ Գարեգինը իսկի էլ չվերագառնայ, դու ուրեմն այդպէս պիտի մնաս ողորմելի:

ՅԱՍ. հա, այսպէս ողորմելի կմնամ:

ՕՍ. յիմար, բէնամուս աղջիկ. տեսնենք ինչ է լինելու Գարեգինի հետ, վաղը միւս օրը Գանիէլի հետ պէտք է վերջացնենք, իսկ դու պիտի շարունակես, հա, բո այդ յիմարութիւններդ:

ՅԱՍ. ես արգէն յայտնել եմ ձեզ, որ ես Գանիէլին չեմ առնելու, իսկ այս տխուր օրերին ես մարդու գնացողը չեմ:

ՕՍ. դու էլի սկսեցիր այդպէս խօսել, անամօթ աղջիկ:

ՅԱՍ, ուրիշ կերպ չեմ կարող խօսել, երբ զօռով չսիրած մարդու հետ էք ինձ ուզում ամուսնացնել:

ՕՍ. ձէնդ կտրի, լիբբ, անզգամ աղջիկ. չհամարձակւես էլի մի աւելորդ ի սք ասելու:

ՅԱՍ. մայր, ես արժան չեմ այդ անպատիւ խօսքերի, իսկ քեզ անվայել արտասանելու:

ՕՍ. (բարկացած մտնելով յանկարծ աստակ է տալիս Յասմիկին) կերամբ, կերամբ, փուչ, անզգամ գաւակ (Յասմիկը ձիչ արձակելով եւ «վա՛յ, Տէր իմ Աստուած» կանչելով դուրս է վազում սենեակից. յայտնում է Սերոբը):

ՍԵՐ. աղէն տանն է, խանում:

ՕՍ. աղէն տանը չէ, ո՞րտեղ ես, ո՞ւր ես կորել մինչև հիմա:

ՍԵՐ. աղէն զրկեց դէս դէն հարցուփորձ անելու Գարեգինի մասին:

ՕՍ. մինչև հիմա, մինչև հիմա, ամեն ինչ թափթփած, տանը, խոհանոցում, անասուած, անհոգի գեազա:

ՍԵՐ. արա, Խնչ անէի խանում, աղի հրամանը չկատարէի որ:

ՕՍ. դէ, կորիր գնա, աչքիցս հեռացիր, մուռտար շուն, ծառաների մէջ հոգի, խղճատանք կայ որ (Սերոբը փնթփնթալով դուրս է գնում). աղէն զրկեց դէս դէն, զրկեց— ժամանակին տուն արի, գիտես, որ տանը հազար ու մի բան կայ շինելու. չէ, մինչի դէս դէն չընկնի, սրա նրա հետ զրոյց չանի, չհաշայ, ինչու կգայ ժամանակին տուն. չէ, ես պէտք է շինեմ քո բանը, ոնց չէ, քաչալ մուռտար շուն. էհ, մախլաս. Աստուած ազատէ գեազաների ձեռքից. ամեն բանն էլ թորս է գնում. գեազան— շուն, որդին փուչ, աղջիկը անկոտորում-անբեւ. ես չեմ առնի, ասում է, Գանիէլին. տեսնենք ոնց չես առնի, տեսնենք վաղը միւս օրը ոնց ենք մաղբիբցք քաշ տալով եկեղեցի տանում և Գանիէլի հետ պսակում. իսկ Գանիէլը, խեղճը ինչքան է անհանգստանում, մտածում, որ էսքան ուշանում է բանը, ո՛հ, Գարեգին, անիծւած, փուչ գաւակ (մտնում է Մուղսին):

ՄՈՒՂ. (անհանգիստ և յոգնած դէմքով) գնացի այս այն կողմը... պօլիցիային էլ յայտնեցի, տեսնենք ինչ է բերում մեզ Օսան, մեր բաղար. Սերոբը չի եկել դեռ ես:

ՕՍ. շատ ուշ, հէնց այս բոպէիս եկաւ:

ՄՈՒՂ. բաս ոչինչ խաբար չբերեց:

ՕՍ. ոչինչ չհարցրի, միայն բարկացայ ուզ գալու համար:

ՄՈՒՂ. էհ, Օսան, թող տեսնենք, ինչ է գալիս մեր գլուխը. Սերոբին ես էի ուղարկել, թող ուշ գայ, միայն թէ բարի խաբար բերի:

ՕՍ. խոհանոցը, տունը թափթփած, գիտեմ նա իսկի էլ տան բանի համար չէ ուշանում, այլ դէս դէն ընկնում է և սրա նրա հետ դարդակ զրուցի բռնում:

ՄՈՒՂ. էհ, էհ, Օսան, մի քանի օր թէկուզ թափթփած մնայ տունը միայն թէ Գարեգինի մտին հոգ տանենք:

ՕՍ. Գարեգինը եթէ բարի ժառանգ լինէր, այսքան նեղութիւն չէր տալ իր ծնողներին. ուրեմն այդպէս շուտ մոռացար թէ ինչքան էր վշտացնում նա քեզ մանաւանդ:

ՄՈՒՂ. հա, մոռացայ. միակ իմ հոգսս այժմ այն է, որ Գարեգինը չկայ և ով գիտէ թերևս մեր պատճառով նա իր գլուխը մի փորձանք բերէ:

ՕՍ. խեղճ մարդ, այդպէս շուտ կակղեցար և մոռացար

նրա օյինները, նրա լեզուն և վարմունքը: Յասմիկը—նրա կօպիան կայ, այստեղ է, նրանով ուրախացիր:

ՄՈՒՂ. Եթե, Օսան, դու այնպէս ևս խօսում, կարծես թէ նրա մայրը չլինես:

ՕՍ. ուրիշ տեսակ ինչպէս խօսեմ, քանի որ դադել է ծընողաց սիրտը, հիմի էլ Յասմիկն է շարունակում նրա գործը:

ՄՈՒՂ. Ո՛ւր է Յասմիկը, էլի էնպէս լաց է լինում թէ հանգստացաւ:

ՕՍ. գիտեմ ես որտեղ է. ծեծ կերաւ ու դուրս փախաւ, երևի իր օթախումբ կլինի:

ՄՈՒՂ. (զարմացած) ծեծ կերաւ ու դուրս փախաւ, ինչո՞ւ, ումից ծեծ կերաւ:

ՕՍ. ծեծ կերաւ ինձնից իր անամօթ, անպատկառ խօսքերի համար. Դանիէլին, ասում է, չեմ գնա, չեմ գնա թէկուզ կտոր կտոր անէք:

ՄՈՒՂ. Ի՞նչ Աստուած իմ, իմ այս ծերութեան հասակին մի թէ պիտի տեսնեմ դաճութիւններ: Կանչիր, Օսան, կանչիր այստեղ Յասմիկին (դուրս է գնում Օսանը, որից յետոյ մտնում է Սերոբը). աա, եկար Սերոբ, ի՞նչ արեցիր, ո՞ւմ տեսար, ո՞ւր գընացիր:

ՍԵՐ. աղա, շատ մարդի հարցրի, շատ տեղ գնացի, ամմա բան չիմացայ. սաղ մահլէն պտիտ արի. գնացի Կիրակոսենց, Զարաֆենց տները, ուր Գարեգինը գնում էր հընկերների մօտ, հարցրի, ասացին խաբար չենք. դիւքանչիներին, մաղաղիէքում հարցրի՝ ասացին—տեսել ենք մի քանի օր առաջ, ամմա երէկ էսօր չենք տեսել. գնացի փօշտի ստանցին՝ բո ասած ջահլիլ, ասացին, չենք տեսել:

ՄՈՒՂ. ո՞նց որ տեսնում եմ դաճն օրեր պիտի քաշենք. եթէ դորդ Գարեգինը մի փորձանք բերի իր գլխին, դա իմ վերջն էլ կբերի: Աշխատիր, Սերոբ, բանիդ ազատ վախտը աշխատիր էլի հարց ու փորձ անել:

ՍԵՐ. աչքիս վրայ, ամեն ձեռքէս ելածը կանեմ Գարեգին աղի համար:

ՄՈՒՂ. գնա, գնա, Սերոբ, Աստուած քեզ հետ, դու գիտես ու քո մարդկութիւնը (Սերոբը զուխ տալով դուրս է գնում. քեմի յետեից լսում են ձայներ).

ՅԱՍ. «Յող ինձ հանգիստ, մայր, չեմ ցանկանում, չէ»:

ՕՍ. «աղջի, գետինը մտած, հէրդ է կանչում, հ'րդ», այս ձայների վրայ Մուզսին դուռը բաց է անում):

ՄՈՒՂ. ինչ զարմազալ է, ինչ պատահեց ձեզ (մտնում է նրանց հետ եւ Շողիկը):

ՅԱՍ. հայր, սաս վերջնականապէս, ի՞նչ արեցիր, ի՞նչ իմացար Գարեգինի մասին:

ՄՈՒՂ. հանգիստ եղիր, աղջիկս. ամեն բան իրան կարգով կերթայ:

ՅԱՍ. այս տխրութեան վայրկենին, խնդրում, աղաչում եմ, հայր, ազատել ինձ հալածանքներից. ինձ բռնութեամբ ուղում էք ամուսնացնել չսիրած մարդու հետ, հարկադրելով ինձ համաձայնել գնալ եկեղեցի և պսակել, երբ Գարեգինս այստեղ չէ. ես անկարող եմ, այդ իմ ուժից վեր է, անհնարին է ինձ այդ կրկնակի վիշտը տանել:

ՄՈՒՂ. բոլորովին հանգիստ եղիր, աղջիկս, ամուսնութիւնդ յետաձգւած է, տխուր օրերում ուրախութիւն անել չէ կարելի:

ՅԱՍ. եւ որովհետեւ ժխտում եմ Դանիէլին, ստիպւած եմ լինում կրել կշտամբանք, անվայել խօսքեր, նոյն իսկ ծեծ:

ՕՍ. աներես, անամօթ աղջիկ. դեռ այդ քեզ քիչ է, արժանի ես աւելի վտտի. դու աղքատի, մուրացկանի աղջիկ պիտի լինէիր, քաղցած ու տկլոր բուչէքն ընկնէիր, որ ծնողաց դադրն իմանայիր և նրանց խօսքը գետին չգցէիր:

ՄՈՒՂ. դէ, բաւական է, Օսան (զիմելով Յասմիկին) մի վըշտանար, սիրելիս, հանգիստ եղիր, ոչինչ չի լինի, թող այնպէս լինի, ինչպէս դու ես ուղում, թող քո կամքդ կատարի:

ՕՍ. այ դու ողորմելի մարդ. ծնողական կամքդ կտարեց, փալաս դարձար, էլ ինչո՞ւ ես ապրում աշխարհիս երեսին:

ՄՈՒՂ. Օսան, դու քարասիրտ ես, մի որդիս չկայ, միւսի հետ էլ ուղում ես, որ փորձանք պատահի:

ՕՍ. չարը ամառի անպէտք, փուչ ժառանգին:

ՄՈՒՂ. չէ, չէ, ես այդպէս չեմ կարող ասել:

ՕՍ. դու մեռար, չկաս այլևս, երբ դաւակներդ բո կամքդ կտարեցին, երբ նրանք քեզ յաղթեցին:

ՄՈՒՂ. օ՛, ս՛. դառը փորձը ցոյց է տալիս, որ զիջում պէտք է անել նոր սերունդին, նրանք ուրիշ աշխարհի ծնունդ են:

ՕՍ. հը, հը, հը, փո՛ւչ աշխարհ, փո՛ւչ դաւակներ:

Գ. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

Ապակէ սենեակ, որը ծառայում է տաք եղանակներին իբրև թէյարան և որի մէջ բացի կարևոր կահկարասիքից զետեղւած են ծաղկամաններ ծաղիկներով և բոյսերով. սենեակի առաջ գտնուում է ծառայիտ պարտէզը, որը երևում է սենեակի ապակիներէ միջով և թէ երբ դուրը և պատուհանները բաց են լինում:

ՅԱՍՄԻԿ (մայիսեան արշալուսին առաւօտեան երկար զդատով լիջի է պարտէզը. քայլերը անորոշ կերպով ուղղում է դէպի այս այն ծառը. վերջապէս կանգ է առնում մի ծառի տակ, Գարեգնի սովորական պարապելու սիրելի տեղում, ուր տնւած է անշարժ կերպով մի կտոր փայտէ սեղան. այդ իղիլիական միայնակութեան մէջ նա սկսում է կակը-ծալի երգել,

Գնաց, գնաց, սիրելիս գնաց,
էլ մի որոնէք, էլ մի փնտրէք.
Ախ նորան ո՞վ էր ճանաչում,
Նորա քաղցը ձայն ով էր միշտ լսում.
Հիանալի էր, գեղեցիկ էր նա
Նորա պէս սիրելի էլ ով կունենայ:

Ախ, սիրուն, էլ ինչու այդպէս
Տանջում ես ինձի... և այլն.

երբը աւարտելուց յետոյ),

Ախ, ախպէրս, ախպէրս. ահա Գարիգիս սիրելի տեղը, կարծես նրա սուէրը աչքիս առաջ է, բայց նը-բան իբան չեմ տեսնում. ախ, ինչ անեմ ես, ո՞վ կօգնի ինձ ար-դեօք գնալու եղբորս մօտ, ախ սրտեղ ես, Գարիգ, ձայն հա-նիք, որ ես գամ քեզ մօտ, ինչո՞ւ. դու ինձ մենակ թողիր, դու չխղճացիր ինձ, միթէ դու անխիղճ էիր. ոչ, Գարիգս անխիղճ չէր, նա լիառատ զգացմունք էր. ապա ինչո՞ւ թողեց ինձ այս ողբալի դրութեան մէջ. նա գոնէ ինձ ասէր թէ ինչ է ուզում

անել, կամ ուր է ուզում գնալ. բայց ոչինչ ասաց, նա ինձնից գա-ղեց, ասաց դեռ երեխայ ես. երեխայ, 17 տարեկան, միթէ ես երեխայ եմ: Ուրեմն վատ արեց Գարիգը. այդպէս է արդեօք. ոչ, ոչ, նա երբէք վատ բան չէ արել, երբէք ինձ չէ ցանկա-ցել վիշտ պատճառել. նա գիտէ թէ ինչ է անում և եթէ այդ-պէս վարեց, երևի այդպէս էլ հարկաւոր էր: Իսկ ես անօգ-նական, որք մնացած, Տէր իմ Աստուած, ինչ անեմ (ծնում է) Գարիգ, Գարիգ (ծնալու ժամանակ նա դարձեալ այս այն կողմն է ընկնում, կարծես կորուստը որոնելով և յետոյ անզգայաբար, խելացնո-րի պէս զիմում է ապակէ սենեակը. Յասմիկի ձայնի վրայ յանկարծ յայտն-ւում է Շողիկը կիսարուն, կիսանազին):

ՇՈՂ. Յասմիկ ջան, դու այստեղ ես առաւօտեան այս ժամին. դժւ էիր ճշողը, օհ, Տէր իմ Աստուած, հանգստացիր, սիրելիս, հանգստացիր, Յասմիկ ջան (զրկում է նրան):

ՅԱՍ. գիշերը անհանգիստ և անքուն անցրի, անզգար ցնցումներ էի ստանում և քնից արթնում, երազ տեսայ իբր բարձրանում եմ, բարձրանում սարի զագաթը—Գարիգս տես-նելու այնտեղից, բայց չտեսայ, զագաթից ցած անդունդը գա-հավիժեցի. արթնացի, տեսայ երազ էր, յետոյ իջայ պարտէ-զը թարմանալու:

ՇՈՂ. խեղճ իմ Յասմիկս:

ՅԱՍ. Գարիգս չկայ և չկայ, Շողիկ. չնայած ձեռք ա-ռած միջոցներին ոչինչ չկարողացանք իմանալ. ոչ, այսպէս շարունակել ապրել անկարելի է:

ՇՈՂ. Յասմիկ ջան, քեզ մատաղ լինի Շողիկը, համբե-րութիւն ունեցիր դարձեալ, ազաչում եմ քեզ. դեռ ամեն բան վերջացած չէ, մի յուսահատուիր:

ՅԱՍ. ախ, Շողիկ, դու սկզբից մինչև վերջը յուսադրում ես ինձ, բայց ոչինչ չի դուրս գալիս. համբերել այլևս դժւար է, տանջւել և մինչև վերջ տանջւել... օհ, աւելի լաւ է միան-գամից վերջ տալ տանջանքին...

ՇՈՂ. այդ սե մտքերից հեռու կացիր, սիրելիս, եթէ տանջանքին վերջ տալու հարկ լինէր, ես վաղուց ինձ կեան-քից պիտի զրկած լինէի, բայց կեանքը քաղցր է... թէև տան-ջանքներով լիառատ. մի յուսահատուիր, երզում եմ ընկերա-կան ազնիւ խօսքով, ես քեզ չեմ թողնի երբէք, քեզ հետ կլի-նեմ ընդմիշտ. միտնել, թող միասին մեռնենք (զրկում են և համբուրում):

ՅԱՍ. ախ, սիրելի ընկերուհիս. դու իմ միակ պաշտպանս, շնորհակալ եմ ազնիւ զգացմունքներիդ համար. օ, եթէ Գա-

չիգս իմանար, ով է ինձ այս դժբաղտ օրերին փորձանքից պահպանողը:

ՇՈՂ. խոստանում ես, խոստանում ես ուրիմն, սիրելի Յասմինկ, որ այսուհետև աւելի համբերատար կլինես, որ աւելի քաջութեամբ կկրես վիշտը, տանջանքը. այդ հարկաւոր է, դու վերջերս բոլորովին քայքայել ես. նախկին թարմութիւնդ և գեղեցկութիւնդ կորցրել, նիհարւել, կմախք դարձել:

ՅԱՍ. խոստանում եմ, եթէ միայն բաւականաչափ ոյժ, կարողութիւն կլինի ինձանում:

ՇՈՂ. ոյժ և կարողութիւն կլինի, եթէ քեզ կպահպանես սանձահարելով զպացմունքներդ. հաւատացիր, որ տոկունութեամբ և համբերութեամբ կարելի է միայն չարը յաղթահարել:

ՅԱՍ. դու աւելի փորձւած ես կեանքի դաճնութիւնների մէջ. կաշխատեմ, Շողիկ ջան, քո բարի խորհուրդների համաձայն վարել. տեսնենք ինչ կլինի վերջը:

ՇՈՂ. ես կօգնեմ քեզ ամեն բանի մէջ. կանչիր ինձ հէնց որ կզգաս, որ վիշտը քեզ ընկճում է, արտասուք քեզ խեղտում է և որևէ սև միտք քեզ կրծում է. հաւատացիր, որ ես կկարողանամ ամօքել քո վիշտը, սրբել արցունքդ, փարտակ քեզ կրծող միտքը...

ՅԱՍ. (զրկում է եւ ջերմութեամբ նամբուրում) ախ, ազնիւ սիրելի Շողիկ, որքան ես դու ինձ սիրում:

ՇՈՂ. իսկ այժմ գնանք, սիրելի. գիշերը բոլորովին անքուն ես անցկացրել, նեարդերդ բոլորովին խախտւած են, քեզ հարկաւոր է փոքր ինչ հանգստանալ (Յասմինին թուից բռնելով դուրս է տանում. մտնում է Սերոբը):

ՍԵՐ. (ապակի Սենեակի իրերը կարգաւորում է, ծաղկամանները ջրում. սկսում է նստել եւ ձեռքով ինչպէս, զուխը տմբամբացնում է). էհ, անտէր բինթա կապել ա, թունդ մըսել եմ, գլխիս էլ մազ չկայ, ցուրտը տալիս ա հա տալիս. գրուստա քաշալ ա, ինձ էլ քաշալ Սերոբ կասեն. ամմա գլուխ եմ ասում էէ, Աստուած, երկինք, որ ուսումարանում կրողացած ըլիի, գլուխս փարփեսօրի գլխից կանցնէր: Ասա ինչի. բաս, որ ասում էի խանութը սիրում ա տիրացուին, սուտ չէր, սիրտս իմացաւ, ախպէր, խելքս բան կտրեց ու ասացի. ինքս ինձ ասում էի, Սերոբ, բամբասանք անել մեղք ա. արա, հիմիկս ոնց, աչքովս տեսածին էլ չհուսատամ. երէկ չէ մէկէլ օրը ոչ որ չկար տանը, գալիս եմ քաղաքից, ինչ եմ տեսնում փանջարի արանքից — խանութը նստած տիրացու Դանիէլի գոգին ձեռքը ձտով գրցած: էէ, խանութ եմ ասում էէ, մէր եմ ասում էէ. որդին ա հա վրայ չորրորդ ամիսն է չկայ ու չկայ, խեղճ Մուղսի աղէն

գլուխը կորցրել է, բարընա խանութը հալւում, մաշում է ախպօր համար, մէրը սկսել ա սիրահարութիւններ անել, էն էլ ում հետ, շուն Դանիէլի հետ, բարընի փեսացուի հետ. բաս սա Աստուած պատիժ, կրակ չի բաս ինչ ա (գալիս է Օսան խանութը):

ՕՍ. այ գեագա, գլուխ մեռած, ո՛ր ես, ի՛նչ ես շինում էստեղ, կանչում եմ, կանչում, որ ջհաննամն ես կորել:

ՍԵՐ. խանութ, շուշարանդը կարգի էի բերում, ծաղիկներ էի ջրում:

ՕՍ. հա, տեսնում եմ, ոնց ես կարգի բերում ամեն բան, կուխին կխտտո—մի ամիս է չես աւելել, ամանները չլացած, թողի և կեղտի մէջ կոխած. հողը քո քաշալ գլուխը, լաւ ես դուրսդ անում. գնա. շուտ արա, աղէն սապօգները ուզում է, վաքսիր, տար իրան տուր:

ՍԵՐ. կուխին, խանութ, երէկ եմ աւելել, մենակ էսօր չեմ աւելել. էն ամանները, որ ամեն օր չենք բանացանում, լացած, դարսած ա. ամենը թամուզ, սարքած ա. խի՛ ես վատամարդի ըլում, խանութ. ես քաշալ գլուխը (ցոյց տալով ձեռքով) սաղ մի օղլուշաղ ա պահում, խի՛ ես ֆօղում:

ՕՍ. դէ, ուխդ քեզ պահիր, կորիր. շուտ արա, տար աղին սապօգները:

ՍԵՐ. ինձնից, իմ գուլուղից անգոհ էք, խանութ, ասէք, Սերոբ, գնա, էլ չենք ուզում քեզ, պրծաւ գնաց: որտեղ ըլնի գուլուղ կմանեմ, մին կտոր ցամաք հաց կձարելի:

ՕՍ. քեզ ասում եմ, շատ մի դուս տայ գլխիցդ, գնա աղէն կանչում է. յետոյ արի սամօվարը բեր այստեղ. ամեն գալուսկեղէն պատրաստիր, որ աղէն հեռը պէտք է տանի, էսօր կարելի է ձանապարհ ընկնի, հասկացած թէ ոչ. գնա, էլ մի կանգնի ու արջի պէս մի մտիկ տայ երեսիս (Սերոբը գլուխը տմտմբացնելով եւ «մախա» ասելով դուրս է գնում) յիմար գեագա, ժամանակ է գտել դատողութիւններ տալու, զուլուղ չեմ անի ասում է. ջհաննամը զուլուղ չես անի, էլ քաշալ Սերոբ չենք կարայ գտնի. հա, էսօր Մուղսին ուզում է ձանապարհ ընկնել. գնալ ուրիշ քաղաքները որդու հուկից. ես ասում եմ, այ մարդ, աւելորդ է, բայց չէ, էլի իրան էնն է քշում, իրան ասածի մարդ է, որդիքն էլ բնութիւնով հօրն են գցել. Դարեգինը մի բարի պտուղ էլ լինէր, էլի հա. էէհ, էս բոլորը ոչինչ, Դանիէլիս բանն է ուշանում, խեղճը շատ է տանջում, վերջերս էլ սկսել է լղարել. եթէ մի օր չէ կարողանում գալ ինձ տեսնելու, խեղճի սիրտը ձաքում է. բայց Մուղսուց շատ է քաշում, վախենում, ես սիրտ եմ տալիս, հանգստացնում.

ախ, երբ կլինի մեր տուն տեղափոխելի բոլորովին (մտնում է Մուղսին)

ՄՈՒՂ. (վերջերս շատ է ընկճել, կնճառուել, մազերն աւելի սպիտակի). Օսան. էս ինչ է, սամովարը հալա պատրաստ չի:

ՕՍ. հիմի կրերի սամովարը. քետֆուր գեադէն քնով էր անցրել, վերջերս շատ է, թարսել, մուռտարել:

ՄՈՒՂ. (խորը հոգոց հանում, չիբուխ քաշելով քթից ծուխ հանում) է՛հ, Օսան. գեադէն, գեադէն, մեծ գարդը թողել ես գեադայի յետեից ես ընկել:

ՕՍ. բառ չասե՛մ, որ գեադան անպիտան է, յիմարութիւններ է անում, պահելու գեադա չի. մեծ դարդ. մեծ դարդն էն է, որ Յասմիկի պսակը էսքան ուշանում է փուչ Գարեգնի պատճառով, աղջիկը օրէցօր հալւում, մաշւում է, կպտուաւի, ինչպէս շատ ուրիշ աղջիկներ և էլ ոչ որ ուզող չի լինի, տղան փուչ դուրս եկաւ, աղջկանից էլ դարդակ կնստենք, եթէ օր առաջ չմտածենք նրա բաղտաւորութեան մասին:

ՄՈՒՂ. Օսան թող Աստուած սիրես այդ անտեղի գրուցարանութիւնները. երբ տանը մի անբաղտութիւն է պատահում. հարսանիք, ուրախութիւն անել կարելի չէ. թող աղջիկս մէկ, երկու տարի նստի տանը. դեռ ջահիլ է, միայն թէ Գարեգնի հետ ոչինչ չպատահի, Գարեգնին ողջ առողջ դարձեալ ես տեսնեմ:

ՕՍ. ես ձեռքերս լացել եմ Գարեգնից, սիրտս էլ վաղուց տրդէն լացած է. նա որդի չէր, այլ պատուհաս. նրանից մի օր հանգիստ, խաղաղութիւն չտեսայ ընտանիքում, միշտ կռիւ, զալմաղալ, անհամութիւն և ուրիշ ոչինչ:

ՄՈՒՂ. թող, ասում եմ, քո այդ աւելորդարանութիւնները. երէկ, միւս օրը, անցեալում ինչ որ կատարւել է մոռացիր, մտածիր միայն այսօրւայ մասին. խօսիր ինչպէս մայր, որը ծնել է որդի և կրել տանջանքներ և որին նա այժմ կորցրել է:

ՕՍ. Գարեգինը յիմարութիւններ անելուց յետոյ գլուխը վեր առաւ ու գնաց, անհետացաւ. ես ինչ անեմ և կամ ինչ կարող եմ անել:

ՄՈՒՂ. հէնց ես էլ ասում եմ, որ այս բանը պատահեց, թէ ում մեղաւորութեան պատճառով թողնենք այդ, մենք իբրև ծնող, մտածենք, հետամուտ լինենք, ամեն կերպ աշխատենք իմանալ մեր որդու վիճակի մասին (լուխին. Սերոբ Ներսէ քերում սամովարը, դնում սեղանի վրայ. դիմելով Սերոբին) Սերոբ, Յասմիկին ու Շողիկին կանչիր, նրանց յայտնի է, որ թէյի ժամանակ է և այսակող պէտք է լինեն. յետոյ Թիֆլիսի սից լրագիր պէտք է ստացւած լինի, բեր տեսնենք մեր տը

ւած յայտարարութիւնը տպւած է թէ ոչ (Սերոբը դնում է. Օսանը սամովարի յետեից է լինում, թէյ գցում եւ այն):

ՕՍ. այսօր պօշտալիօնը երկու համակ բերեց և լրագիր:

ՄՈՒՂ. հա, տեսնենք ինչ կայ լրագրում. անցեալներում շարաբեր և մտատանջ լուրեր կարդացի, այդ սե լուրերը աւելի ես անհանգիստ են անում ինձ:

ՕՍ. ինչպիսի լուրեր կարդացիր, որ անհանգիստ արին քեզ:

ՄՈՒՂ. կարդացի, որ Թիֆլիս քաղաքով անցնող գետում գտել են խեղտուած դիակ, այնքան այլանդակուած, որ անկարելի է եղել որոշել դէմքը գծագրութիւնը և իմանալ ով լինելը և թէ կրբ է պատահել մտաւորապէս այդ դժբաղտութիւնը նրա հետ. մի ուրիշ աւելի վրդովեցուցիչ լուր. ուղարկել են երկաթուղու ապրանքատար գնացքով ուրիշ քաղաք մի արկղ, որի վրայ գրւած է եղել «Չվէյցարական պանիր». նկատում են, որ արխն է կաթկաթում այդ արկղից, բաց են անում և տեսնում—օ՛, սարսափ, մարդ կտոր կտոր արած, առանց գլխի:

ՕՍ. լաւ, ասենք սարսափելի լուրեր են, բայց ինչու են անհանգիստ անում քեզ այդ լուրերը, չեմ հասկանում:

ՄՈՒՂ. էհ, ով դիակ է, Օսան. Գարեգինը չկայ և ամեն դժբաղտ դէպք ակամայից յիշեցնում է ինձ նրա կորուստը և կարծես նրա անձի հետ կապւում (մտնում են Յասմիկը, Շողիկը և Սերոբը, որը տալիս է Մուղսին լրագրի համարը. Շողիկը սամովարի յետեից է լինում, թէյ լցնում քաժակները եւ ամեն մէկի առաջը դնում մէկ քաժակ. իսկ Յասմիկը նստում է մի կողմը սաստիկ մոլայւած. Մուղսին լրագրի յայտարարութիւնների բաժնում գտնելով իր տւած յայտարարութիւնը կարդում է). «Իմ որդի Գարեգին Մելքոնեան արդէն երեք ամիս է անհետացել է. աղաչում եմ բարի մարդկանց բարեհաճել տեղեկութիւն տալու իմ որդու վիճակի մասին, եթէ որեւէ կերպ յայտնի է կամ յայտնի կլինի իրանց այս հասցեով.—Ն. քաղաք, 2-րդ կարգի վաճառական Մուղսի Կարապետ Մելքոնեան. խոստանում եմ լաւ վարձատրութիւն: Որդիս 28 տարեկան է, միջահասակ, գեղեցիկ տղամարդ, կրում է ակնոցներ: Մուղսի Կարապետ Մելքոնեան» (յայտարարութիւնը կարգալիս Յասմիկը հեկեկում է, նրան ձայնակցում է և Շողիկը, Մուղսին նոյնպէս յուզւած է. շարունակում է ինչ որ լրագրում որոնել կարծես կորածը գտնելու տենչով. կարդում է լուրերի մէջ դարձեալ մի լուր). «Երէկ երեկոյեան մօտ ժամի 6-ին տեղի ունեցաւ քաղաքի «Օրիանտ» հիւրանոցում հետեւեալ ողբերգական դէպքը. գաւառացի երիտասարդ Մ. ազգանունով ատրճանակի հարւա

ծով անձնասպանութիւն գործեց. դիակը դտնդւմ են արեան լճի մէջ շաղախւած, գնդակը նստած է թոքերի մէջ. հանգուցեալը տոմս չէ թողել. ինքնասպանութեան պատճառները յայտնի չեն. ենթադրում են սիրահարութիւն և ընտանեկան զրժտութիւններ: (Յասմիկը սրտամկիկ ճիչ է արձակում և ամոռի վրայ նստած ուշաձափւածի տեսք է ստանում, Շողիկը դրկում է նրան և հանգստացնում):

ՄՈՒՂ. (սաստիկ այլալուծ և սպոյնած) գաւառացի երիտասարդ **Մ.** ազգանունով. գուցէ **Մելքոնեան.** **Տէր** իմ **Ասուած.** չէ, անկարելի է սպասել, պէտք է գնալ, պէտք է որոնել (զրլուխը կորցրածի պէս դէս դէն է նայում ցանկանալով շուտափոթ կարգադրութիւն անել). **Յասմիկ,** **Շողիկ,** **Տէր** է **Մերորը.** հա, **Մերոր** այստեղ ես, գնա, շուտ արա, գնա այս ըոպէիս պատի ստանցիան, իսկոյն պատերիք կառք ուղարկելու, պէտք է ճանապարհ ընկնել. գնա, շուտ էլ մի կանգնիր (Մերորը գուրս է գնում, դռանը հանդիպում է տիրացու Գանիէլին և խեճ հայեայր պցելով՝ արագաբար հեռանում. Գանիէլը նկատելով ընդհանուրի յուլւած դրութիւնը ստուած կանգնում է մի կողմը) ով երկինք, ով ամենակարող **Ասուած,** որ մեղքերիս համար ես ինձ պատժում այս ձերութեան խորին հասակում. մի՞թէ գերեզմանին արդէն մօտեցած պիտի տեսնէի ես այս դաւնութիւնը, օ՛, որդեկորոյս անբաղա հայր (պիսին երկու ձեռքով տալիս է), դու ապրում ես դարձեալ, դու կենդանի ես, դու շնչում ես ինչո՞ւ համար (Գանիէլը այդ միջոցին մօտեցել է Օսանին և երկուսով ինչ որ փսփսում են իրար հետ):

ԴԱՆ. (մօտենալով Մուղոն) **Մուղսի** աղա, **Մուղսի** աղա, ամենակարող **Ասուած**ը փարատէ ձեր վիշտը և համբերութիւն տացէ ձեզ, մի տրտնջաք, ապաւինեցէք առ **Ասուած,** նա **Ամենատես** է և **Ամենագութ:**

ՄՈՒՂ. ոչ, Դանիէլ, ամենակարող **Ասուած**ը ինձ թողել է, բարկացել է ինձ վրայ. վերջին աղօթքս և ժողովանքս է առ **Ասուած**—մահ, մահ, բայց նա չի տալիս. տանջւիր դեռ ես, **Մուղսի,** վաղ է քեզ դեռ մեռնել, քո այդ տանջանքը ընդունելի է միայն **Աստուծոյ** աթոռի առաջ:

ՕՍ. հանգստացիր, այ մարդ, **Ասուած** սիրես հանգստացիր. Գարեգինը ծնւեց, մեծացաւ, միայն ցաւ ու տանջանք դարձաւ ծնողաց համար. նա քո կեանքիդ էլ վերջ կրերի:

ՄՈՒՂ. Օսան, վերջ տուր քո այդ գատողութիւններիդ. կառքը գալու է այս ըոպէիս, պատրաստիր ինչ որ հարկաւոր է ճանապարհի համար:

ՕՍ. երէկանից ամեն ինչ պատրաստ է, զակուսկեղէնը նոյնպէս: Միայն ես հակառակ եմ քո այդ ճանապարհորդութեան:

ԴԱՆ. ես ես խորհուրդ չէի տալ, **Մուղսի** աղա, ճանապարհորդութիւնը ի զուր, ապարդիւն կանցնի, վասն զի երկարատե կլինի և յոգնեցուցիչ:

ՄՈՒՂ. Դանիէլ, ես չեմ հասկանում թէ ինչ ես ուզում ասել. «ապարդիւն կանցնի, վասն զի երկարատե կլինի ճանապարհորդութիւնը»:

ԴԱՆ. այսինքն ուզում էի ասել, որ երկարատե կլինի ճանապարհորդութիւնը և կարող է ոչ մի հետեանք չունենալ:

ՄՈՒՂ. կարող է ունենալ և լաւ հետեանք: Ձեր ասածից այնպէս է դուրս գալիս, որ իսկի հարկաւոր չէ տեղից շարժւել որոնել անհետացած որդուն:

ՕՍ. այո, աշխատել, դէս դէն ընկնել, եթէ յոյս ունիս, որ դրանից մի բան դուրս կգայ. միւս կողմից Գարեգինը ծնողաց սրտում սաղ տեղ չէ թողացել, նա արդէն չափազանց շատ է վիրաւորել ծնողաց սիրտը, որ...:

ՄՈՒՂ. (վրդովւած՝ խօսքը կարելով) Օսան, ես դարձեալ քեզ խնդրում եմ վերջ տալ քո հակաճառութիւններին. ես չեմ ցանկանում այլևս լսել այդպիսի չոր ու ցամաք խօսքեր. ինձ անտանելի է այդ լեզուն: Սպասել այլևս երկար չեմ կարող (ձեռքերով անորոշ շարժւածքներ անելով) այ աղջկեքք, Շողիկ, Յասմիկ, շուտ արէք, գնանք, պատրաստեցէք իրերը, կառքը էս է գալու է (Յասմիկը մինչև այդ ժամանակ ամոռի վրայ նստած գլուխը ձեռքերի մէջ ուշազանցի դրութեան մէջ էր գտնուում. երբեմն, երբեմն նկատելի էր ինչպէս ամբողջ մարմնով ցնցումներ էր անում, իսկ Շողիկը կանդնած էր նրա կողքին լուռ, ընկճւած դրութեան մէջ. Մուղսու խօսքերի վրայ, Շողիկը բռնում է Յասմիկի ձեռքից, վերկայնում և Մուղսու ձեռ մրտամանակ զուրս են գնում):

ՕՍ. **Մուղսին** սկսում է բոլորովին խելքը կորցնել, խօսել չի լինում նրա հետ, մի քանի ամիս առաջ ինչպէս էր վերարեւելում գէպի Գարեգինը, իսկ այժմ խելագարւում է նրա համար:

ԴԱՆ. երևի սաստիկ սիրում է Գարեգինին. հայրական սէրն է գէպի որդին, որ դրդում է **Մուղսուն** այդպիսի թէկուզ սխալ քայլեր անել:

ՕՍ. հայրական սէրը ոնց չէ. նա իսկի էլ չի սիրել Գարեգինին. կարող եմ ասել, որ ինքն էլ հէնց դարձաւ գլխաւոր պատճառը, որ Գարեգինը գլուխը վեր առաւ, գնաց, անհետացաւ:

ԴԱՆ. ինչպէս, **Մուղսին** ասում ես դարձաւ պատճառը Գարեգինի անհետանալուն:

ՕՍ. նախատինք, հայհոյանք էր, որ թափում էր Գարեգ-

նի գլխին, իսկ նա էլ չէր համբերում և սաստիկ վշտացնում ծնողին իր պատասխաններով և արարքներով. վերջին անգամին նոյն իսկ Մուղսին դուրս արաւ Գարեգնին տանից և հաշի «չօտկն» էլ շարտեց վրան:

ԴԱՆ. ուրեմն Մուղսին զգում է այդ պատճառով իր մեղաւորութիւնը. ճշմարիտ որ շատ ծանր բան է այդ, ահա թէ ինչու այդքան անհանգիստ է որդու անհետանալու համար:

ՕՍ. այս բոլոր հանգամանքները, սիրելի Դանիէլ, ազդում են և քեզ վրայ. որքան ես անհանգիստ եմ քեզ համար, որ սկսել ես վերջերս տանջել:

ԴԱՆ. հա, Օսան ջան, ես սաստիկ անհանգիստ եմ, գիշերները քուն չունիմ: Միակ միութարութիւնս այն է, որ քեզ պէս պաշտպան և օգնող ունեմ. ուրախ տրամադրութիւն եմ ընդունում, երբ քեզ յիշում եմ, դարդերս ցրում են, վիշտս փարատում, երբ քեզ տեսնում եմ (ձեռքը համբուրում է):

ՕՍ. Տէր Աստուած, ոչ ոք չգայ կամ տեսնի (դէս դէն նախելով պատուհանից, դռնից եւ ապանոված զգալով զրկում է եւ համբուրում Գանիէլին): Մուռտար ծառան չգայ յանկարծ, չտեսնի. նա կարծես անցեալ անգամ նկատեց մեզ, նրանից յետոյ նա սաստիկ հետամուտ է մեզ. բան հասկացաւ անիծւած, քաջալ շունը:

ԴԱՆ. այն, այն, ամենայն զգուշութիւն, ամենայն զգուշութիւն, սիրելիս (համարյոք է տալիս երկիւղից դէս դէն նայելով. մի քանի վայրկեանից յետոյ մտնում են Յասմիկը, Շողիկը եւ Մուղսին. վերջինս հագել է ճանապարհորդական, երկար ծոով կօշիկներ, սերժոնկ եւ աշնանային երկար վերարկու, պայուսակը թեւին զցած եւ դառան թանկազին սև մորթու գզակ դիւին. Շողիկը տխուր է. Յասմիկը ընկճւած է եւ մնջացած, հազիւ կարողանում է մի տեղում կանգնել):

ՄՈՒՂ. ահա և ամեն ինչ պատրաստ. ուրախ եմ, սաստիկ ուրախ. նախագգում եմ, որ պէտք է յաջողւի ինձ տեսնել Գարեգնին (ձեռքերը տարածելով դէպի երկինք, յուզւած) ո՞վ Տէր, հարցումն մի արա իմ մեղքերի համար. խնայիր ինձ, իմ ծեղութեանս (Յասմիկը եւ Շողիկը հեկեկում են. Գանիէլը եւ Օսանը ալայլւած են. խուլ կերպով լսում է մօտեցող կառքի ձիաների տրոփիւնը եւ զանգերի ձայնը, մտնում է Սերորը):

ՍԵՐ. աղա, կառքը արգէն պատրաստ է:

ՄՈՒՂ. ես ես պատրաստ եմ. գնա, տաք վերարկուն և անկողնի կապոցը դուրս տար և տեղաւորիր կառքի մէջ (Սերորը գնում է). ժամանակ է արդէն ճանապարհուել (զղացած). դէ սիրելիներ, մնացէք բարեաւ, մաղթեցէք Աստուածանից յաջողութիւն (համբուրում է Օսանին, Գանիէլին եւ յետոյ Յասմիկին եւ Շողիկին, արտասուք են թափում, Յասմիկը եւ Շողիկը հեկեկում են):

ԴԱՆ. գնաս բարեւ, Մուղսի աղա, բարի ճանապարհ, ամենակարող Աստուածը օրհնէ և առաջնորդ եղիցի քեզ քո ուղեւորութեան մէջ (Մուղսին դարձեալ համբուրելով Յասմիկին քայլերը շտապ ուղղում է դէպի դուրս):

ՅԱՍ. (կարծես յանկարծ ոգի աննելով Մուղսու յետեւից) հայր, աղաչում եմ քեզ վերադարձիր Գարեգնի հետ (երեսը դարձնում է դէպի հասարակութիւնը, չօրում է եւ ձեռքերը դէպի երկինք բարձրացնում) ով երկինք, տուր ինձ իմ ազպէբս (Շողիկը թաշկինակը աչքերին հեկեկում է. Գանիէլը եւ Օսանը այլայլւած են. լսում է հեռացող կառքի ձայնը):

ՊԱՏԿԵՐ՝ ԵՐԿՐՈՐԴ.

Պօստային տրակտի կայարան. ստարօստայի գրասենեակը, որտեղից ճամբորդները տուժակ են ստանում. սենեակի ձախ կողմում դրւած է շատ հին, թանաքի սլոյտերով ծածկւած մի երկար գրասեղան, որի վրայ անփոյթ կերպով դարուած են մատենաներ, համարակալ, հաստափոր թանաքաման և կեղտից սևացած գրչակոթեր. այս այն պատի տակ անփոյթ կերպով թափած են հաստ պարանի կտորներ, ձիի սանձ, հին թաղիք, դատարկ արկղ և այլն. երկու հատ տարուբա, որոնցից մէկը ստարօստի համար է, լրացնում են սենեակի կահ կարասիքը. սենեակի աջակողմեան դուռը տանում է կից աւելի վայելուչ սենեակը չինօֆիկներին և հարուստ ճամբորդների համար. միջին պատի դուռը ծառայում է իբրև գլխաւոր մուտք եկող գրնացողի համար:

ՍՍՍՐՕՍՍ. (միջանասակ, կարմիր թշերով, մօտ 35 տարեկան մարդ, արխալուզով, դիւին ձին դիտարկ, ոտքերին կոշտ քրթից պործած դուլպա եւ քօշիկ եւ մէջքին կաշւէ դօտի (քամար). սեղանի առաջ նրստած կարդում է լրագիր). կարդում ես, կարդում ես, չի պրծնում, էնքան մանր տառերով էլ տպած ա սր. ամմա ինչ բաներ ա պատահում աշխարհիս երեսին, ինչ երեւելի խալխեր են ապրում Եւրոպիա ասած անտէր երկրում. ես մաթալ եմ մնացել, մաթալ. հաւատալս չի գալիս, հարաբ դրուստ ա թէ դիժ սարքովի ա գրած (կից սենեակից լսում է ստիճանաւորի խրոխտ, հրամայողական ձայնը):

ԱՍՏԻՃԱՆԱԻՈՐ. Эй, староста, скорѣй, свинья, нечего такъ долго заставить ждать.

ՍՍՍՐ. (մօտենալով դանը ստրկական վախկոտութեամբ) Баринь,

ви десить минутъ нѣту, что прѣзжали, сичас будить готово, я емщику сказалъ.

ԱՍՏԻՃ. да, скорѣй же, а то «сичасъ» получите вы отъ меня.

ԱՍՍԲ. сичвсь, ей Богу, сичасъ, баринъ (անհանձնակիտ կերպով շտապ մտնելու է միջին դռանը եւ դռուում) **Մօսի,** **Մօսի** (պատասխան չկայ. դարձեալ կանչում է) **Մօսի,** **մօ Մօսի:**

ՄՕՍ. (հեռւից) հն:

ԱՍՍԲ. դահրումար, դէ ձէն հանի է, ի՞նչ ես շինում, արի բարի:

ՄՕՍ. հն, ինչ ա, գալիս եմ, գալիս էս սնաթիս. ձիանոնց կօրմ եմ տալիս:

ԱՍՍԲ. ամեն բան թող արն, արի չուստ վրագու բան ա:

ՄՕՍ. էս սնաթիս, էս սնաթիս (ստարուտան յետ է դառնում եւ նստում իր տեղը. մտնում է Արսէն Վիրապեան):

ՎԻՐԱՊ. բարիաջողում:

ԱՍՍԲ. Աստու բարին:

ՎԻՐ. խնդրեմ մինչև հետևեալ ստանցիան ինձ կվիտանցիա տեցէք, պարնի լծէք:

ԱՍՍԲ. մենակ էք թէ երկուսով, ձեր ազգանունը ինչ է:

ՎԻՐ. մենակ եմ. իմ ազգանունն է Արսէն Վիրապեան (ստարուտան դրում է կվիտանցիան. մտնում է Մօսին):

ԱՍՍԲ. Մօսի, չուստ արա, կալեասկան լծիք չինօվելիկի համար, վառագցնում է. դէ, էլ մի կանգնիր, բէջիթ ժաժ արի, թող ուղ ըլի գլխներիցս, օյինչի մարդ ա երևում:

ՄՕՍ. ձիանոնց կօրմ եմ տեղ, էս նմուտին, չեովեր սահաթ չի անցնի, պատրաստ կըլի:

ԱՍՍԲ. լծի, լծի, թէ չէ էս սնաթիս էլի կըգողայ անիծւածը. (դուրս է գնում Մօսին):

ՎԻՐ. ստարուտա, խնդրում եմ ինձ շուս ճանապարհ գցել:

ԱՍՍԲ. շուս չեմ կարող ճանապարհ դնել, ձիանք չկան. պատաժիր շատ գնաց. 3, 4 սնաթից յետոյ կարելի է:

ՎԻՐ. ինչպէս թէ 3, 4 ժամից յետոյ, ի՞նչ էք ասում, միթէ կարելի է այդքան երկար սպասել տալ:

ԱՍՍԲ. ասում եմ, որ սվարօդնի ձի չկայ, 3, 4 սնաթից յետոյ կլինի:

ՎԻՐ. ես չեմ կարող այդքան սպասել, դարձեալ խնդրում եմ ինձ շուսով ճանապարհ դնել:

ԱՍՍԲ. ես ոչինչ չեմ կարող անել, երբ սվարօդնի ձի կլինի, ճանապարհ կդնենք:

ՎԻՐ. (տարայած) ես գիտեմ, որ ազատ ձիաներ ունէք, չէք տալիս. իսկ եթէ ես կակարգ ունենայի, իսկոյն ճանապարհ կըդնէիք. ողորմելի մարդիկ, երբ պէտք է խելքի գար եւ կարգ սովորէք:

ԱՍՍԲ. ինչ ես շատ չաթի փոթի անում. ձիանք կան եւ հանգստանում են. ես խօմ չեմ կարայ լծելի եւ տանի. մի ֆլաս բան ա պատահում ձիան հետ, խաղէինը իմ ետից է բռնում եւ տօնլուզս կտրում:

ՎԻՐ. լաւ, լաւ տեսնենք, ով է չաթի փոթի անում. մի քիչ էլ կսպասեմ, ճանապարհ չէք դնի, ես ստիպւած կլինիմ «ժալօքնայեա» գրքի մէջ բողոք գրելու:

ԱՍՍԲ. իրաւունք ունիս գրելու, ինչ կամենաս (լսում է կից սենեակի դռան թխթխոց եւ կանացի ձայն, «ձի, староста, скорѣй, подавай экипажъ, баринъ сердится». ստարուտան սարսփահար արագ մտնում է, դուր մի քիչ բանալով արանքից խեղճացածի ձայնով պատասանում) баринъ, ей Богу, сичасъ будить, емщикъ пошелъ кормъ давать лошады и запрягать. ей Богу сичасъ придотъ (լսում է աստիճանաւորի խրոխտ ձայնը):

ԱՍՏԻՃ. я тебѣ сейчасъ покажу кормъ давать, мерзавецъ (ստարուտան դիտապատա յետ դռնալով արագ դիմում է դէպի միջին դուր կառապանի յետեից):

ՎԻՐ. ողորմելի ստրուկ մարդիկ, լախթի հարւածներով են միայն ձեզ կառավարում. թշւառականը դեռ «ազատամիտ» լրագիր էլ է կարդում: Շուսով երկաթուղին կանցնի այստեղով, այն ժամանակ ձեր «քօքը» կտրելի, այ խաղէիններ եւ արենդատօրներ, ձեզնից կազատի երթեկող հասարակութիւնը, որ այնքան նեղութիւններ է կրում ամեն տեսակ անկարգութիւններից եւ կամայականութիւնից: «Մի ֆլաս պատահում է, խաղէինս տօնլուզս կտրում է», ասում է ստարուտան. սուս չէ ասում, ի հարկէ, ողորմելին: Մեղաւորը այստեղ ստարուտան չէ, այլ այն տիրող կարգերն ու կանոնները, որոնք դըրդում են նրան ստրկաբար խոնարհելի զօրաւորների առջ, իսկ միւս սովորական ճանրօրդների հետ կոպիտ վարելի ե քթից քաշըջել: (այստեղ են ստարուտան եւ կառապանը):

ԱՍՍԲ. (գիմելով դէպի աստիճանաւորը եւ կամացուկ, կիսով չափ բանալով դուրը) ваше благородіе, экипажъ готово.

ՄՕՍ. (ստարուտաի յետեից նքա խօսքը լրացնելով) баринъ, сейчасъ готово.

ԱՍՍԲ. Մօսի, վէշէիքը տար, դարսի, թող ուղ ըլնի շուսով. (Մօսին մտնում է աստիճանաւորի սենեակը. ստարուտան գնում է դուրս ճանապարհ դնելու աստիճանաւորին: Յայտնում է Մուզսի աղան):

ՄՈՒՂ. (դէս գէն է նայում, գործելով յողմած եւ հիմաժափում մարդու տպաւորութիւն. նրա աչքին է ընկնում չլիրապետանք, ցնցում է ամբողջ մարմնով եւ փառում նրա զիրկը) **ախ, որդիս, որդիս, Գարեգինս.** ես գտայ քեզ վերջապէս:

ՎԻՐ. (գրկից ազատելով յետ ու յետ է քաշում վախեցածի պէս) **ինչ ես կամենում, ձերունի, ո՞վ ես, չեմ ճանաչում քեզ:**

ՄՈՒՂ. **ախ, դու իմ որդին չես, իմ Գարեգինս չես, ո՞վ երկինք (նայում է, եւ կրկին զրկում):**

ՎԻՐ. **հանգատացիր, պատուական ձերունի, դու երեւի սը-խալեցար. նմանութիւն գտար. ես քո որդին չեմ:**

ՄՈՒՂ. կրկին եւ կրկին նայում է Վիրապետին) **ախ, Տէր իմ Աստուած, որքան նմանութիւն Գարեգինին. ճիշտ Գարեգինս (ծոցից հանում է Գարեգինի նկարը), առ նայիր, որդի, տես թէ սը-քան դու նման ես Գարեգինս:**

ՎԻՐ. (նայում է նկարին) **ճիշտ որ մեծ նմանութիւն. դու իրաւունք ունէիր սխալելու. ձերունի (նկարը յետ է զարձնում): Սակայն ասացէք, բարի ձերունի, ի՞նչ է պատահել ձեր որդու հետ, ո՞ւր է նա այժմ:**

ՄՈՒՂ. որդիս ա՛նա մի քանի ամիս է չկայ, անյայտացել է. չնայած ձեռք առած միջոցների, ոչ մի հնարք չեղաւ ինձ մինչև այժմ նրա հետքը գտնելու. տեսնում ես ա՛նա, սիրելի, քո առաջ մի ալևոր, վշտահար հայր, որը խելագարի նման որոնում է իր կորուսած որդուն և չէ գտնում:

ՎԻՐ. **շատ, շատ ցաւալի է այդ, բարի ձերունի. ասացէք խնդրեմ, ինչպէս է ձեր ազգանունը և որտեղացի էք:**

ՄՈՒՂ. **ես Ն. քաղաքի երկրորդ կարգի վաճառական եմ. ազգանունս Մուղսի Կարապետ Մելքոնով, որդուս անունն է Գարեգին: Իսկ ձեր ազգանունը ինչպէս է, որդի, ինչով էք պա-րապում և որտեղ էք լինում:**

ՎԻՐ. **իմ ազգանունս է Արսէն Վիրապետան. Շ. աւանիցն եմ, ուսուցիչ եմ և գնում եմ կարևոր գործի համար թիմական տեսչին ներկայանալու:**

ՄՈՒՂ. **դուք իսկ և իսկ իմ որդին էք. հասակը, գէմքի գծադրութիւնը, աչքերը, մի խօսքով ամենը նոյն իսկ շարժ-ւածքներն ու ձայնը. Տէր Աստուած, որքան նմանութիւն. ազա-չում, խնդրում եմ, այ որդի, խղճացէք անբաղտացած վշտա-հար հօրը և այցելեցէք մեր քաղաքը, շնորհ բերէք իմ տունը, որի դռները բաց կլինեն ձեզ համար. գրկաբաց կընդունենք ձեզ իբր մեր որդի Գարեգինին (զրկում է լաց լինելով):**

ՎԻՐ. **շնորհակալ եմ, բարի ձերունի. խնդրում եմ հանգս-տացէք, խոստանում եմ անցնել ձեր քաղաքով և անպատճա**

մտնել ձեզ մօտ, եթէ իմ այցելութիւնը որևէ կերպ կամօքէ ձեր վիշտը:

ՄՈՒՂ. (ձեռքից բռնելով) **ուրեմն ազնիւ խօսք էք տալիս, ախրելի որդի, որ անպատճառ կգաք մեզ մօտ:**

ՎԻՐ. **երկմիտ մի լինէք, հաստատ, ազնիւ, խօսք եմ տալիս:**

ՄՈՒՂ. **ես կլինեմ կարճ միջոցից յետոյ տանը. թերևս երկու երեք շաբաթից յետոյ. ես ունիմ նոյնպէս մի գեռահաս դուստր, որը խելագարի պէս սիրում էր իր եղբորը և որը այժմ սաստիկ տանջուում է. ձեր այցելութիւնը մեզ անչափ ուրախութիւն կպատճառէ, իսկ եթէ բաղոյր բերեց և Գարեգ-նիս ողջ և առողջ գտայ, այն ժամանակ ձեր տեսութիւնը, սիրելի որդի, կրկնակի ուրախութիւն կպատճառէ մեզ:**

ՎԻՐ. **անկեղծ յաջողութիւն եմ ցանկանում ձեզ, բարի ձերունի. իմ խոստումս ես ազնւաբար կկատարեմ:**

ՄՈՒՂ. **դուք կգտնէք մեր տանը սիրալիբ ընդունելու-թիւն, այնպէս ինչպէս իմ հարազատ որդիս (մտնում է ստա-րօստան):**

ՄՍԱՐ. **պարոն վարժապետ, աստիճանաւորին ճանփու գրի. նոր ձիանք եկան միւս ստանցից. 2 ձի կարող եմ բաց թողնել. չեմ ուզում, որ զանգատաւոր լինէք և անգոհ, ձեզ էլ ճանփու կգնեմ այս բուլէիս:**

ՎԻՐ. **ուրեմն փոշմանեցիք, զղջացիք, պ. ստարօստա, ձեր անտեղի վարժունքի համար:**

ՄՍԱՐ. **ինչ անեմ, ախպէր, ես մշտական աշխատում եմ ձաժփորդներին նեղութիւն չտալ, ամա չի լինում, վախենում եմ, ախպէր, էս չինօֆսիկներից, արքունական ճանփորդներից և խաղէիններից. ես էլ օղլուշաղի, ընտանիքի տէր եմ, մի կտոր հացից էլ զրկել քիւլփաթին չի լինի:**

ՎԻՐ. **լաւ, լաւ, եղբայր, արա, ինչպէս ուզում ես, միայն թէ ոչ ոքին ֆլաս չլինի իմ պատճառով:**

ՄՍԱՐ. **արդէն կարգադրել եմ, ձիանքը լծում են:**

ՎԻՐ. **շատ բարի, դէ ուրեմն գնամ իրերս հաւաքեմ, դար-տեմ (ղիմելով Մուղսի ազային) ցտեսութիւն և յաջողութիւն, ով բարի ձերունի. անհոգ եղէք և վստահ, որ ես կկատարեմ խոս-տումս:**

ՄՈՒՂ. **ցտեսութիւն, սիրելի որդի. վստահ եմ ձեր ազնւ-ւութեան վրայ. անհամբեր կսպասեմ ձեզ. այնպէս իմացէք, որ ձեր հայրական տունն էք այցելում. գնացէք խաղաղութեամբ (զրկում-համբուրում են):**

Գ. Գ Ո Ր Ծ Ո Ղ Ո Ի Թ Ի Ի Ն

Մուզսի աղայի տան դահլիճը. դա մի ընդարձակ սենեակ է շքեղ կահաւորւած վերջին տարազով. ունի 2 դուռը՝ աջակողմեան և ձախակողմեան պատերին և պատուհաններ. բացի վիէննայի աթոռներից, կըր քառանկիւնի և թղթախաղի համար ծառայող սեղաններից, դահլիճի աջ կողմում դրւած է թաւշով ծածկւած մի գահաւորակ (դիւան), առաջը սեղան նոյնպէս թանգագին ծածկոցով և շուրջը բաղկաթոռներ միևնոյն պոյնի թաւիշով ծածկւած. երկարութեամբ յատակի վրայ ձգւած է Մերվի խալ. գահաւորակի վերև պատից կայ կախւած մի քառանկիւնի ոսկեգոյն շրջանակով հայելի, իսկ միւս պատերին կան կախւած փոքր թէ մեծ գիրքով զանազան նկարներ հասարակական գործիչների և գրողների, ինչպէս և յայտնի հոգևորական բարձրագոյն անձինքների: Դահլիճի զարդարանքը լրացնում են այս այն կողմը դարւած ծաղկամանները անուշահոտ, գեղեցիկ ծաղիկներով:

ՇՈՂ. (զբողւած է կարգի բերելով դահլիճում գտնւած իրերը. ալբոսը գնում է իր նշանակած տեղը, ամոռները ուղղում է, թողի շորով մաքրում է փոշին կամ կարասիքից, ծաղկամաններին երբեմն մօտենալով հոտ է քաշում և երբեմն էլ կանգ առնում և խօսում ինքն իրան) Ինչ, հրաշալի առաւօտ. բնութիւնը կանչում է մարդկանց դէպի իրան ծոցը վայելելու նրա հրաշալիքները, ազատ շնչելու թարմ, գով օդը, կենելու ազատ լեռան բարձունքները և այնտեղից դիտելու և հիանալու կարկաշատ առուներով, անուշահոտ ծաղիկներով, ծածկւած բլուրներով և մշտադալար ձորակներով. Ինչ, ինչպէս գեղեցիկ է ստեղծւած բնութիւնը, բայց ինչու գեղեցկութեան հետ և մարդիկ գեղեցիկ չեն. ինչու այդ հրաշալի բնութեան դիմաց տեսնում ենք մարդկանց մեծամասնութիւնը վշտով համակւած, սուգի և տանջմանքի մատնւած: Մի քանի ամիս է անա ևս և Յասմիկը տնից դուրս գրել դէպի բնութիւնը, գէպի այն վայրերը, ուր չկայ վիշտ, հոգս, տխրութիւն: Ապուն վերադարձաւ իր ճանապարհորդութիւնից և աւելի ևս վատթարացաւ մեր վիճակը: Գարեգինը չկայ և չկայ, մանաւանդ Յասմիկի գրութիւնը աւելի ևս ողբալի

է դառնում: Ինչ կլինի այս դժբաղտութեան հետևանքը, Սասաւած միայն գիտէ. ապուն երևի կսկիծից կմեռնի, իսկ Յասմիկի հետ մի ծանր դժբաղտութիւն կարող է պատահել: Էն, կեանք, կեանք, որքան քաղցր ես. բայց որքան և գառը... (նայում է դէպի դուռը), ինչու Սերոբը չէ գալիս ջրելու այս ծաղիկները (գնում է դէպի միջին դուռը և կանչում է) Սերոբ, Սերոբ, լէիկան բեր, ծաղիկները պէտք է ջրել (մտնում է Սերոբը լէիկան մեքին):

ՍԵՐ. (սկսում է ջրել) Շողիկ խանում, իմացայ, որ մարդ պիտի գայ, ձվ պիտի գայ որ:

ՇՈՂ. հա, մարդ է գալու. աղէն սպասում է նրան, անէն պատմեց թէ ինչպէս նրան պատահել է կայարանում և Գարեգինի տեղ ընդունել նրան, այնքան նման է Գարեգինին:

ՍԵՐ. երբ պիտի գայ որ այդ դռնաղը:

ՇՈՂ. ամեն բոլոր սպասում ենք, որովհետև նամակ ունի ստացաւ՝ աղան պարտից, որ գալիս է մեզ մօտ հիւր: Իսկ Սերոբ, վերջացրու ծաղիկներ ջրելը, իսկ ինձ հարկաւոր է գրնալ Յասմիկ բարիչնի մօտ:

ՍԵՐ. գնա, գնա, Շողիկ խանում, Յասմիկ բարիչնի մօտ, մխիթարիք, խեղճի ջանին լափ ոսկոր ու կաշին է մըացել ազպօր խաթեր (Շողիկը գնում է Սերոբը շարունակում է ջրել, երբեմն փչում լէիկի ծակոտիկները) փո՛ւ՛ւ, փո՛ւ՛ւ, էօ անտէր լէյկի ծակերն էլ կալել են, վախտ ա գտել սա էլ մարդ չարչարելու, փո՛ւ՛ւ, փո՛ւ՛ւ (այ դուռը բարխում են, մօտենալով դռնը) ձվ ես, ի՛նչ ես կամենում (լսում է Վիրապեանի ձայնը):

ՎԻՐ. Մուզսի աղէն տանն է:

ՍԵՐ. Տանն է, ի՛նչ ես կամենում, ձվ ես:

ՎԻՐ. ցանկանում եմ տեսնել, ես ուսուցիչ Արսէն Վիրապեանն եմ, յայտնիր աղին:

ՍԵՐ. համեցէք գալը, աղէն ձեզ սպասում է (ներս է մտնում դահլիճը, զխաբըր գնում է սեղանի վրայ և սպասողական դրութիւն է ընդունում. Սերոբը ոտից գլուխ նայում է Վիրապեանին և չէ կարողանում ծիծաղը պահել):

ՎԻՐ. յայտնեցէք շուտով Մուզսի աղին իմ գալու մասին. սաս, Արսէն Վիրապեանը դահլիճում սպասում է (Սերոբը շարունակում է հոճոցով ծիծաղել, նայում է ծիծաղում, նայում է ծիծաղում), ինչի՞ էք ծիծաղում, հոճոճում, ի՛նչ պատահեց:

ՍԵՐ. հէնց ընենց, ոչինչ, բան չի պատահել (հոճոց աւելի կատաղի ձայնով):

ՎԻՐ. «հէնց ընենց, ոչինչ, բան չի պատահել», ինչպէս չի պատահել, որ մի գլուխ ծիծաղում ես և չգիտեմ թէ ինչու:

ՍԵՐ. բան չի պատահել, էն Աստուածը, բան չի պատահել (նայում է եւ ծիծաղում):

ՎԻՐ. դադարեցէք ծիծաղել և յիմարութիւն անել, յայտնեցէք աղին իմ մասին:

ՍԵՐ. շատ բարի, էս սհաթիս (նայում է եւ ծիծաղում):

ՎԻՐ. սօ, ինչ կայ ծիծաղելու, դադարի ասում եմ քեզ:

ՍԵՐ. քեզ խօսմ վնաս չեմ տալիս, այ աղա (ծիծաղում է):

ՎԻՐ. վերջապէս համը տանում ես, այ ծառայ, ես կհեռանամ այստեղից, կտեսնեմ աղի հետ քաղաքում և կպատմեմ այս եղելութիւնը (զխարկը վերցնում է):

ՍԵՐ. լաւ, լաւ, աղա ջան, մի բարկանար, ես քո հոգուն մեռնեմ, էս ա գնում եմ աղին յայտնեմ (հոծում է դարձնալ):

ՎԻՐ. ինչպէս երևում է դու ինձ համբերութիւնից պիտի հանես քո այդ տխար վարմունքով:

ՍԵՐ. աղա ջան, մի բարկանար, քեզ մատաղ, բա ռնց չծիծաղես, բա էսքան նմանութիւն (ծիծաղում է):

ՎԻՐ. նմանութիւն ունի հետ. աղի անյայտացած որդու հետ. լաւ, ինչ կայ ծիծաղելու:

ՍԵՐ, ռնց չկայ ծիծաղելու. ախպէր, էս հասակին մարդ եմ, էսէնց նմանութիւն մարդ մարդի հետ չեմ տեսած:

ՎԻՐ. գարմանալու ոչինչ չկայ, եթէ մարդ մարդու հետ նման է լինում:

ՍԵՐ. ախր, էսէնց նմանութիւն, նմանութիւն օրինակ իմ քինթն նման ա իմ ախպօր քթին, մի աչք նման կլի մէկէլ աչքին, էս իմ քաչալ գլուխը նման կարող ա ըլնի մի ուրիշի քաչալ գլխին, ամա ընեսց նման, ռնց որ դուն ես իմ Գարեգին աղին—չի պատահի, Աստուած, երկինք չի պատահի (նայում է եւ ծիծաղում):

ՎԻՐ. (սկսում է նոյնպէս համակերպել եւ ծիծաղել) ինչպէս երևում է, դու սարսաղ մարդ ես. հերիք է ծիծաղես, գնա, շուտ արա, աղին յայտնիր:

ՍԵՐ. (ծիծաղում է) էս ա գնում եմ, (նայում է) ոտից վըլուլու լափ նման, իսկի գանազանութիւն հէչ չկայ. բոյբուսաթը, խօսալը, ձէնը, դունչը, երեսը, մագերը, քինթը, աչքերը, ճակատը, Տէր Աստուած, ըսենց նմանութիւն (վարակիչ ծիծաղ):

ՎԻՐ. (նոյնպէս ծիծաղում է եւ կեղծ բարկութեամբ ասում) սօ, հերիք է, գնա լաւ, թիթեամիտ ծառայ:

ՍԵՐ. լաւ, լաւ գնում եմ (գնում է կամօղակ ծիղաղելով, մի քանի անգամ յետ ու յետ նայում ծիծաղում, մինչեւ որ անհետանում է բեմից):

ՎԻՐ. յիմարը ծիծաղը չէ կարողանում պահել. ինչպէս երևում է շատ մեծ նմանութիւն են գտնում իմ և Մուղսի որդու մէջ. եղբայր եղբօր հետ, ազգական ազգականի հետ կարող է սաստիկ նման լինել, բայց օտարը օտարի հետ. օրինակ, ես ճանաչում էի երկու եղբայրներ միմեանց սաստիկ նման. մի օր սրանք երկաթուղու դնացքով ճանապարհ են ընկնում, երկրորդ թէ առաջին կարգով չեմ յիշում. կայարանում նրանցից մէկը իջնում է բան տանելու. ուշանում է, երրորդ գանգը արդէն տաժ է, գնացքը շարժում է. վագօնում գտնուող եղբայրը սաստիկ անհանգիստ լինելով դէս դէն է ընկնում կանչում—Միմօն, Միմօն. Միմօն չկայ, յանկարծ տեսնում է իր դէմքը վագօնի հայելու մէջ «սօ, Միմօն, ո՞ւր ես, արի է՞».

բայց հայելու մէջ տեսած Միմօնը ինքն էր, այն ինչ իսկական Միմօնը տեսնելով գնացքը շարժում է թուկ էր ուրիշ վագօնը: Սակայն սրանք եղբայրներ էին: Չէ, օտարը օտարի հետ էլ կարող է սաստիկ նման լինել. օրինակ, ես և Մուղսի աղաի որդին. մի ուրիշ օրինակ էլ գիտեմ. ճանաչում էի մի ուսուցիչ Փիլիպոսեան ազգանունով սաստիկ նման մի ուրիշ ուսուցչի Բարաջանեան ազգանունով. աշակերտների ծընողները կամ ուրիշները շարունակ շփոթում էին. Փիլիպոսեանին դիմելով Բարաջանեան էին անւանում և Բարաջանեանին Փիլիպոսեան (մտնում է Մուղսին):

ՄՈՒՂ. (այլալուծ) ախ, ազնիւ բարեկամ, ազնիւ որդի, ինչքան շնորհակալ եմ ձեզից, որ այցիկիցիք (զրկում են):

ՎԻՐ. ես ձեզ խորտացայ և իմ պարտքը միայն կատարեցի ձեզ այցելելով:

ՄՈՒՂ. դուք ինձ անչափ ուրախացրիք, որդի, իմ այս անմխիթար դրութեան մէջ:

ՎԻՐ. ինչպէս եղաւ, Մուղսի աղա, ինչ հետեանք ունեցաւ ձեր ճանապարհորդութիւնը:

ՄՈՒՂ. ոչ մի հետեանք, որդի. թէ ինչ եղաւ որդու հետ, մեռած է թէ կենդանի այժմս, Աստուած միայն գիտէ:

Խնդրում եմ նստեցէք, հանգստացէք, սիրելի որդի, ձեզ տեսնելով տեսնում եմ Գարեգինին:

ՎԻՐ. հաւաստի եղէք, Մուղսի աղա, ես կաշխատեմ իմ կարողութեան չափ օգտակար լինել ձեզ և ամօքել ձեր վիշտը:

ՄՈՒՂ. շնորհակալ եմ, որդի, անչափ շնորհակալ եմ. դուք կմտաք ձեզ մօտ, մեր տանը, չէք գնա ուրիշ տեղ, ես կընդունեմ ձեզ իմ տանը իբրև իմ որդի և կապրէք ձեզ մօտ ինչպէս իմ սիրելի որդին:

ՎԻՐ. ես եկայ ձեզ այցելելու ժամանակաւորապէս իբրև

Տիրբ. ես պաշտօն ունիմ, ուսուցիչ եմ. ինձ անհնար կլինէր ընդունել ձեր առաջարկութիւնը. ես կաշխատեմ միայն շուտ շուտ այցելել ձեզ:

ՄՈՒՂ. ոչ, ոչ, խնայեցէք ինձ. պաշտօն այս քաղաքումն էլ կգտնէք, ես խոստանում եմ ամեն կերպ, ինչպէս կամենաք, տեղաւորել, միայն թէ մի թողէք ինձ անմխիթար գրութեան մէջ, օգնեցէք ինձ իբրև ձեր հարազատ հօրը:

ՎԻՐ. շատ ծանր առաջարկութիւն է, որի մասին պէտք է շուրջ մտածել (մտնում են Օսանը, Յամբիրը եւ Շողիկը):

ՄՈՒՂ. ահա և իմ կինը, իմ աղջիկը և իմ եղբոր աղջիկը:

ՅԱՍ. (շփոթ նայելով) Աստուած իմ, իսկ և իսկ Գարեգին եղբայրս:

ՇՈՂ. Տէր Աստուած, իսկ Գարեգինն է, որ կայ:

ՕՍ. ահա և երկրորդ Գարեգինը:

ՎԻՐ. (մտնում է քաղաքավարութեամբ և մտք է տալիս ամեն-քին) ես չափազանց ուրախ եմ ծանօթանալով Մուղսի աղայի պարկեշտասուն ընտանիքի հետ:

ՅԱՍ. ասացէք, խնդրեմ, յարգելի պարոն, չէք տեսել արդեօք որեէ տեղում ձեր նմանին, իմ թանգագին եղբոր Գարեգինին:

ՎԻՐ. շատ ցաւում եմ, օրիորդ, որ չեմ կարողանում ձեր հարցին դրական պատասխան տալ:

ՄՈՒՂ. (դիմելով Օսանին) Օսան, տեսնում ես մեր այս յարգելի բարեկամ պ. Վիրապեանը որքան նմանութիւն ունի մեր Գարեգինի հետ, և որքան ուրախ կլինենք ամեն անգամ տեսնելով յիշել մեր սիրելի Գարեգինին. առաջարկում եմ, խնդրում եմ պարոնին մնալ մեզ մօտ մշտապէս, պարոնը առայժմ բացասում է:

ՕՍ. այդ դու գիտես, ինչպէս ցանկանում ես, կարգադրել. ես հակառակ ոչինչ չունիմ ասելու, եթէ պարոնը ցանկութիւն ունի նոյնպէս մեզ մօտ ապրելու:

ՅԱՍ. ան, հայրիկ, որքան դու գեղեցիկ միտք ես յղացել. յարգելի պարոն, աղաչում եմ ձեզ մեզ մի թողէք անմխիթար. դուք իսկ և իսկ իմ եղբայրն էք:

ՇՈՂ. որքան լաւ կլինէր, պարոն, որ մեզ մօտ մնայիք:

ՎԻՐ. ես սաստիկ զգացւած եմ ձեր սիրալիր ընդունելութիւնից և մանաւանդ առաջարկութիւնից. ինձ հարկաւոր է մտածել. պէտք է այնպէս անել, որ եթէ ընդունեմ նոյն իսկ ձեր առաջարկութիւնը, իմ այս քաղաքում վարած կեանքը աննպատակ և անօգտակար չանցնի:

ՄՈՒՂ. այդ մասին անհոգ եղէք, սիրելիս, դուք միշտ

ասպարէզ կգտնէք այստեղ ձեր ոյժերը նւիրելու համար բարի գործերին:

ՅԱՍ. այո՛, այո՛, սիրելի պարոն. կգտնէք միշտ օգտակար գործ. մեզ մի թողէք անօգնական:

ՎԻՐ. ես պատրաստ եմ միշտ ձեր այս վշտացեալ դրութեան մէջ ծառայութիւններ մատուցանել, սակայն կրկնում եմ վճռական պատասխանի համար ինձ հարկաւոր է մտածել:

ՄՈՒՂ. շատ բարի, մտածեցէք, սիրելիս, միայն իմացէք, որ մեզ մօտ կգտնէք միշտ պատիւ և բարեկեցութիւն:

ՎԻՐ. այդ բանում ես բնաւ կատկած չունիմ:

ՕՍ. Շողիկ, գնա, սուրճի պատրաստութիւն տես:

ՎԻՐ. ոչ, խնդրում եմ նեղութիւն մի քաշէք. ձեզ մօտ ես մտայ կարճ միջոցով. ինձ այժմ պէտք է գնալ մի քանի շտապ կարգադրութիւններ անելու քաղաքում:

ՄՈՒՂ, փոքր ինչ մնացէք, սուրճ կխմէք, յետոյ կերթաք:

ՅԱՍ. մնացէք, պարոն, խնդրում եմ մնացէք:

ՎԻՐ. այժմ ինձ կնեռէք, խնդրեմ. ես յետոյ, այսօր, վաղը դարձեալ կմտնեմ ձեզ մօտ, անհոգ կացէք:

ՕՍ. կէս ժամ չի քաշի, սուրճը պատրաստ կլինի:

ՎԻՐ. աիկին, խնդրում եմ մի պնդէք, հաւատացէք որ ինչ անգամներին միշտ կընդունեմ ձեր հերքասիրութիւնները:

ՄՈՒՂ. թող ձեր ցանկութիւնը լինի, սիրելիս, մի մոռանաք մեր խնդիրը և մեր առաջարկութեան պատասխանը անհամբեր կսպասենք:

ՎԻՐ. անհոգ եղէք, Մուղսի աղա, այսօր կամ վաղը ձեզ այցելելուն պէս կյայտնեմ իմ վճռի մասին:

ՅԱՍ. այդ վճիռը, վստահ եմ, պարոն, ձեր բարութեան վրայ, բացասական չի լինի:

ՇՈՂ. ես ևս բոլորովին վստահ եմ:

ՎԻՐ. ես այժմ չեմ կարող, յարգելի օրիորդներ, ձեզ վաւերական կերպով տալ իմ այս կամ այն վճիռը. բայց մի քանի արգելափակ հանգամանքներ հարթելուց յետոյ միայն հաւանականօրէն ձեր ցանկութիւնը կատարելի:

ՄՈՒՂ. աշխատեցէք ամեն կերպ, որդի, այդ խանգարող հանգամանքները վերջացնել. ընդունելով մեր խնդիրը՝ դուք ազատած կլինէք մի ընտանիք ոչնչանալուց, մի անբաղտ ծեղացած հօր կեանքը սպառնող մօտալուտ վտանգից, իսկ մի ջահիլ աղջկան իսպառ թառածութիւն էք:

ՎԻՐ. Մուղսի աղա, շատ ծանր պարտականութիւն էք դնում վրաս. հնարաւոր է ինձ, ոյժեցս վեր չէ՞ արդեօք կատարելու այդ դերը:

ՄՈՒՂ. ոչ, ձեր ոյժից վեր չէ, ես վստահ եմ ձեզ վրայ, դուք կարող էք այդ անել:

ՎԻՐ. եթէ հաւաստի լինէի, որ ընդունակ կարող էի լինել մի այդպիսի վսեմ գործ կատարելու—այսինքն մարդ ազատել կորստեան վտանգից, ձեր խնդիրըը, հաւատացէք, կըստանան ցանկալի լուծումն:

ՄՈՒՂ. հաւաստի եղէք, որ արդար է իմ յայտնածը, որ դուք կարող էք հոգի փրկել կորստեան վտանգից:

ՎԻՐ. եթէ այդպէս է, ես շուտով կ'մտնեմ դարձեալ ձեզ մօտ և կաշխատեմ տալ ձեզ հաւանականօրէն դրական պատասխան. իսկ առայժմ ցտեսութիւն, Մուղսի աղա. ցտեսութիւն, օրիորդներ, տիկին (ամենքին քաղաքավարի ձեռք է տալիս):

ՄՈՒՂ. ցտեսութիւն, գնացէք, սիրելի, եթէ շտապ գործ ունէք (Վիրապեանը դնում է):

ՕՍ. կատարեալ Գարեգինն է, կարծես իմ ծնունդը. բայց ինչ օգուտ, եթէ նա մեզ մօտ ապրելու լինի, չեմ հասկանում:

ՄՈՒՂ. ինչպէս ինչ օգուտ. մթթէ դու չես ցանկանում, որ նա մեզ մօտ ապրէ:

ՕՍ. ես արդէն ասացի, որ ես հակառակ ոչինչ չունիմ. միայն նրան տեսնելով միշտ Գարեգինը կ'իշխի, նրա կարօտը կսաստկանայ, աւելի սիրտ ու հոգի կ'մորմորի:

ՄՈՒՂ. ոչ, այդպէս չէ. նրան տեսնելով կարծես տեսնում եմ իմ հարազատին և մի առանձին մխիթարութիւն եմ զգում: Վերջապէս ուսում առած, կրթւած անձն է, մեզ, մեր գործին կարող է օգտակար լինել, իսկ արդէն գերեզմանին մօտեցած իմ այս հառակին նրա ներկայութիւնը սիրտսնք և նեցուկ կարող է հանդիսանալ, առանց որի ով գիտէ ինչ կարող է պատահել ինձ և մանաւանդ Յասմիկի հետ, որին տեսնում ես թէ ինչ հալն է ընկել:

ՅԱՍ. այո, այո, հայրիկ, դու արդար ես. պարոնի ներկայութիւնը յոյս և ապւենէն կարող էր լինել մեզ համար. ես չափազանց ցանկանում եմ նրա այստեղ լինելը. ախ, ինչքան նա նման է Գարեգինի:

ՄՈՒՂ. այո, սիրելիս, կաշխատենք նրան մեզ մօտ պահել: Այժմ ամեն ինչ երեսի վրայ ընկած թէ ընտանիք, թէ գործ. ամեն հաշիւներս, պահանջելիք կամ ստանալիքներս կորստի են մասնուում. ոչ մի օր, ոչ մի գիշեր հանգիստ չունիմ Գարեգինի անյայտանալուց յետոյ, տեսնենք թէ վերջը Աստուած ինչպէս կ'անօրինէ մեր վիճակը (ձեռքով յուսահատական շարժում անելով և քայլերը սղդղելով դէպի դուռը) օ՛հ, դառն վիճակ,

«և բազա, այս էր միթէ իմ կեանքիս ճակատագիրը (դուրս է դնում, նրա յետելից և՛ Օսանը):

ՅԱՍ. խեղճ հայրիկ. նա ցոյց է տալիս ինձ վրայ, իսկ ինքը որքան է այժմս տանջուում և ինչ օրի է ընկել, բոլորովին արևորել, դիակ է դարձել:

ՇՈՂ. դու աւելի լաւ օրի չես ընկել, սիրե ի Յասմիկս, եթէ այսպէս շարունակելի կեանքը, դու և ավուեն լաւ բաղտի չէք հանդիպի. իսկ ես հանգիստ, անվրդով սրտով առաջ եմ նայում դէպի ապագան, դէպի կեանքը և մի տեսակ նախազգացումն ինձ միշտ պահպանում և յոյս է տալիս, որ ապագան փայլուն պիտի լինի և որ մենք կտեսնենք դարձեալ թերևս աւելի երջանիկ, ուրախ օրեր քան մինչև այժմս: Մի վըհատելիք, տոկուն եղիր. ահա և մի բարեբաղտ դէպք. պարօնը եթէ համաձայնի մեզ մօտ ապրելու, նա անչափ կ'թեթևացնի ք. և թէ ավուի վիճակը իր խելացի խորհուրդներով և վերաբերմունքով:

ՅԱՍ. Շողիկ ջան, Շողիկ, դու իմ սրտից ջուր ես խըմում. երանի քեզ, որ այդպիսի անազարտ, մաքուր սիրտ ունիս, մի այնպիսի համբերատար սիրտ, որը ընդունակ է տանել ալեկոծ կեանքի արհաւիրքները, մի սիրտ, որ անհուն ծով է և փոթորիկները ոչինչ նրա համար: Դու ներշնչում ես ոգի ապրելու, տանելու կեանքի տանջանքները և սիրելու կեանքը. շնորհակալ եմ, անչափ շնորհակալ, իմ պահպան հրեշտակ: Արդարեւ, ինչքան լաւ կ'լինէր, եթէ պ. Վիրապեանը տար իր համաձայնութիւնը. ես նրան առաջին անգամից սաստիկ հաւանեցի:

ՇՈՂ. պ. Վիրապեանը այնպիսի անձն է երևում, որին կարելի է սիրել:

ՅԱՍ. այո, նոյն իսկ սիրելի: Իսկ և իսկ Գարեգինն է:

ՇՈՂ. ամեն բանից երևում է, որ ազնիւ երիտասարդ է և զարգացած անձն:

ՅԱՍ. ուսուցիչ է պաշտօնով. ես առ հասարակ ուսուցիչներին շատ եմ յարգում և սիրում: Գարեգինն էլ ուսուցիչ էր, բայց կեանքի ուսուցիչ:

ՇՈՂ. մի խօսքով երկնքի մանանայ կ'լինի Վիրապեանը մեզ համար մեր այս նեղ, դառն օրերի ժամանակ: Իսկ եթէ Գարեգինն ևս մի օր յայտնէր յանկարծ, որ ես մեծ յոյս ունիմ, այն ժամանակ կեանքի հարսանիք կսկսէր մեր ընտանիքում:

ՅԱՍ. հա, Շողիկ ջան, հա. այդ օրը մեր վերածնութեան օրը կ'լինէր, մեր իսկական երջանկութեան սկիզբը:

ՇՈՂ. քաջ եղի՛ր, սիրելիս, և վստահ, որ երջանիկ օրեր ևս կտեսնենք, կտեսնենք անպատճառ (անպատասխան կերպով դուր թաքցում է և մտնում է տիրացու դասիցը, որի վրայ տնօրենիամբ նայում են օրիորդները):

ԴԱՆ. ողջոյն ձեզ, օրիվորդներ (ծեղք է տալիս, Շողիկին անտարբերութեամբ). քէֆներդ հարցնեմ, ինչպէս էք, սիրելիներ:

ՅԱՍ. (արհամարհանքով) կանք, ապրում ենք, օրէցօր:

ԴԱՆ. Օսան խանումը այստեղ չէ՞, սուր է, խնդրեմ յայտնեցէք իմ գալու մասին (Շողիկը դուրս է գնում). օրիվորդ Յասմիկ, ազնիւ օրիվորդ (մտնում է), մենք մնացինք մենակ, մենք պիտի խօսենք, քանի որ ոչ ոք մեզ չէ խանգարում:

ՅԱՍ. ի՞նչ էք կամենում:

ԴԱՆ. ես շատ եմ տանջւում, սիրելի օրիվորդս, մտէք իմ դրութեան մէջ. հոգևոր կոչում ունիմ, պէտք է հոգեկան անդորրութիւն ունենամ, որպէս զի հանգիստ սրտով աղօթեմ Աստծուն մարդկանց երջանկութեան և հոգու փրկութեան համար. խնայեցէք ինձ, սէրն Աստծու:

ՅԱՍ. ասացէք, ի՞նչ էք կամենում:

ԴԱՆ. ձեր ձեռքը, ձեր սիրտը, ձեր կամքը. մի տանջէք ինձ երկար, վերջացրէք մեր ամուսնանալու խնդիրը:

ՅԱՍ. ես մտադիր չեմ ամուսնանալու իմ եղբորս կորստեան առիթով. ես արդէն մերժեցի ձեզ իմ ձեռքը:

ԴԱՆ. (աւելի մտնում է) խնայեցէք, սէրն Աստծու, խնայեցէք ինձ հոգևորականիս, որ եկեղեցուն և Աստծուն է սպասաւորում (չորում է, աղբրազին ձեռքը տարածելով դէպի Յասմիկը ինչպէս Աստծուն աղօթելիս) աղաչում եմ օրիվորդ, մի անբաղտացնիր, մի թաղիր ինձ ողջ ողջ, այլևս ապրելու հալ չի մնացել ինձնում:

ՅԱՍ. վերկացէք, ինձ անախորժ է ձեր վարմունքը. շատ ցաւում եմ, բայց ոչինչ չեմ կարող անել, ես ձեզ չեմ սիրում, էլ ինչ էք կամենում իմանալ ինձնից:

ԴԱՆ. (զիսին երկու ձեռքով տալիս է և ողբի ձայն հանում) ով անբաղտ մարդ, ով անողոք կեանք. օրիվորդը ինձ չէ սիրում. մնաք բարև յոյսեր, մնաք բարև ծրագիրներ (վերկենալով և զիմելով Յասմիկին) օրիվորդ, ախր ես աւելի քան երկու տարի սպասում եմ ձեզ, աւելի քան երկու տարի է ձեր պատճառով յետաձգում է իմ քահանայ ձեռնադրելիս. դուք միթէ այդ քանի մասին գէթ մի բոպէ չէք մտածել, չէք մտածել, որ ինձ ձեր մերժումով կարող էիք անբաղտացնել, կոչումից և նպատակից ձեռնունայն դարձնել:

ՅԱՍ. (ստոնութեամբ) ես միայն զարմանում եմ, որ դուք

կարծում էք, որ ես որեւէ մէկին կարող էի անբաղտացնել կամ շեղել իր գործից. ես ձեզ երբէք չեմ սիրել, երբէք ձեզ խոստում չեմ տւել. ծնողներս են միայն այդ բանում մեղաւոր. ձեր նպատակը քահանայ ձեռնադրելն է, որի իրագործումը վերջապէս կախւած չէ կարող լինել ինձանից. կայն և ուրիշ շատ օրիորդներ. դուք ազատ էիք նրանցից ընտրութիւն անել և նպատակիդ իրագործումը շտապեցնել:

ԴԱՆ. ոչ, դուք միայն իմ ուշք ու միտքը յափշտակեցիք, ձեզ սիրեցի, ձեր ընտանիքը սիրեցի. նպատակիս իրագործումը միայն ձեզնով կլինի, ձեր հօր աջակցութեամբ, ձեր օգնութեամբ. առանց կողմնակի միջնորդութեան, առանց «և»-ի քահանայ չեն ձեռնադրում. ահա այս է հանգամանքը, ահա իսկութիւնը. ո՞վ ազնիւ օրիվորդ, մի ժխտէք ինձ, մի մերժէք ինձ ձեր օգնութիւնը:

ՅԱՍ. շատ ցաւալի է, որ ծնողներիս պատճառով ձեր գործը այսպէս խճճւել է. բայց ես դարձեալ խնդրում եմ, ճշնշում մի գործէք իմ խղճիս վրայ. խնդրում եմ ինձ ազատ թողնել. յայտնում եմ կտրական, որ ես ձեզ չեմ սիրում, իսկ դուք հասկանում էք ի հարկէ, որ դուրս չսիրած մարդու գնալ անտանելի է, իսկ կենակցութիւնը չսիրած մարդու հետ դժոխային:

ԴԱՆ. ուրեմն ձեռքերս լւանամ, բոլորովին յոյսս կտրեմ, գնամ ջուրն ընկնեմ, ինչ անեմ, ասէք, օրիվորդ:

ՅԱՍ. այո, յոյսերդ կտրէք ինձնից. խորհրդակցեցէք ծընողներին հետ, նրանք թերևս կօգնեն, մի ելք ցոյց կտան ձեզ. իսկ իմ մասին այլևս խնդիր մի յարուցանէք:

ԴԱՆ. չէ, անբաղտ մարդ եմ ես, շատ անբաղտ. ի՞նչ անեմ, որ բարին տղամ գլուխս, սեւ մօտ ողբամ իմ սև օրս. միակ յոյսս մնացել է Օսանս, նա միայն կարող է ազատել ինձ այս դրութիւնից, նա է միայն Աստուածավախ և մարդասէր անձն (մտնում է Օսանը) ահա և տիկին Օսանը, իմ բարբերարը, իմ նպատարարը (զիմում է նրան և ձեռքը սեղմում):

ՕՍ. բարև Դանիէլ, սուր ես չեմ երեւում, երկու օր է մեզ չեմ այցելել (Յասմիկը հեռանում է):

ԴԱՆ. ախ, Օսան ջան, ես շատ անհանգիստ եմ. ոչ ուտելիս է ուտել, ոչ քնելիս է քնել. թէ ինչ եմ անում, ուր եմ գնում, տուն գալիս կամ տնից հեռանում, այդ բոլորը անում եմ խելքը կորցրածի, դժւածի պէս. ախ, տիկին Ովսաննա, միակ յոյսս դուն ես, միակ պաշտպանս և նեցուկս (մտնում է և գրկում):

ՕՍ. (համբոյրներ է տալիս). սիրելի Դանիէլ, հանգստացիր,

շատ մի տանջիլը քեզ, ես քեզ համար պատրաստ եմ ամեն նեղութիւն կրելու և ամեն ջանք դորձ գնելու մինչ նպատակիդ հասնես. ինչ էր խօսում հետդ գլուխ մեռած Յասմիկը:

ԴԱՆ. նա բաց է բաց մերժում է ամուսնանալու ինձ հետ. յայտնեց բացորձակապէս, որ ինձ չէ սիրում և որ ես իմ գլխի ճարը տեսնեմ:

ՕՍ. փուշ, անզգամ աղջիկ. գիտեմ նրա կամակորուժիւնը. իսկ եղբայրն է, որ կայ. երկուսն էլ կամակորուժեամբ հօր խասիաթին են ընկել: Այժմ էլ մի նոր ցաւ է աւելանում մեզ. անցեալ անգամ քեզ ասացի, որ Մուղսին իր ճանապարհորդութեան ժամանակ պատահել է մի ուսուցչի՝ Արսէն Վերապեան ազգանունով, որը չափազանց նման է Գարեգնին. նա այժմս եկել է Մուղսու հրաւիրանօք, մեզ մօտ էր: Մուղսին առաջարկեց նրան մեզ մօտ ապրելու, նա դեռ ևս իր համաձայնութիւնը չէ տւել, բայց տրամադրութեանը նայած՝ հաւանական է, որ համաձայնի:

ԴԱՆ. ինչու նոր ցաւ ես համարում այդ:

ՕՍ. նոր ցաւ չէ, ապա ինչ է. նա կխանգարէ մեզ, մեր Յասմիկի ամուսնական գործը. դու դարձ մի անիթ, սիրելիս, դեռ ամեն բան վերջացած չէ. ես դարձեալ կաշխատեմ փորձել ազդելու Մուղսու վրայ Յասմիկին քեզ տալու. իսկ եթէ վերջապէս այդ մեզ չի յաջողւի, այն ժամանակ իմ պարտքս լինի քեզ համար յարմարաւոր հարսնացու ընտրելու և նիւթապէս օգնելու, որպէս զի շուտով քահանայ ձեռնադրես:

ԴԱՆ. (զգացւած և արտասախտան մօտնում է Օսանին) ով իմ ազնիւ տիկինս, սիրելի Ովսաննա, իմ բարեբարս, ինձ երջանկացնողս (համբոյրներ է տալիս, Օսանն էլ փոխադրածաբար):

ՕՍ. սիրելի Դանիէլ, գնանք այստեղից, դահլիճում անյարմար է մեզ մնալ, Մուղսին էլ թերեւ շուտ վերադառնայ տուն:

ԴԱՆ. գնանք, գնանք, անգին խնամակալս, ես քեզ հետ եմ միշտ, ուր որ գնաս և տանես ինձ (ղուրս են գնում միմեանց ձեռքից բռնած. միւս գոնից մտնում է Սերօքը, որը նկատում է նրանց, իսկ նրանք սրան ոչ):

ՍԵՐ. (խոհարարի գոփոցը ստաջին կապած, չստերով և գլխաբաց, ամանները մտրելու համար քամանի շորը ուսին զցած, նայում է գնացողների յետեից ապշած, գլխով և ձեռքով զարմացական շարժումներ անելով) այ, մաշալլա, մաշալլա, ապրէք, թագ ու պսակին էլ արժանանաք: Նամուս եմ ասում էէ, նամուս, ամօթից ընկել, երեսներիդ մեռունն էլ լափ գնացել ա, այ տափը մանէք երկուսով, տափը (սկսում է որոնել գահլիճում) Շողիկ խանումը

չաքուշը վերուց, ինչ արաւ, ուր դրեց, գիտում չեմ (այս այն կողմն է գնում, չէ գտնում) չաքուշը չկայ ու չկայ. ինչ կանես, թաղա չուխա եմ առել բաղարում, դէս դէն ա գցում, փչանում, պէտք է մեխ խփել կախ տալ, շնորքին մնայ, ամեն վախտին մանէթներ չունեմ, որ թագա, թագա հագուստ առնեմ: Ամիսը ութ մանէթ տօնլուդ եմ ստանում, ինչ բան ա որ, օրը վեց շահի էլ չի գալիս, ամա օրը վեց հետ էլ արիւն են թքացնում գեադի սրտից խանուսներն ու խաղէյիները. հէնց են գիտում հեշտ ա ու ոչինչ բան ա ծառայութիւնը. հալա մի բան էլ մենք ենք պարտական մնում, հալա մենք պէտքնա շնորհակալ ըլինք, որ նրանք մեզ պահում են, հաց են տալիս, լաւութիւն են անում, էսա նրանց մասլահաթը: Էս ա մի լաւ քովին ա ուզում գայ մեզ մօտ ապրելու. իսկ Գարեգնի սուրաթին, խասիաթն էլ լաւ խասիաթի տէր պէտքնա որ ըլնի: Ամմա, ախպէր, չեմ կարում, ծիծաղս պահել, էնքան Գարեգնին նման ա: Արսէն աղան, որ գայ մեզ մօտ, հէնց եմ գլխում, որ աւանակ տիրացու Գանիէլի ոտը կտրւի էս տնից. հայժանը շատ ա թունդ կպել խանումի ջանին. շունը միշտ էլ յետքի գոնիցն է գալիս մտնում տուն, որ իրան չտեսնենք: Ամմա ինչ կղնքսէի էտ շանը, տարդա տեղ ընկնէր ձեռքս. էն վախա թող իր ուշուցները միտքը բերէր, լաւ ծամէր ու կուլ տար: Ամենը դէնը, բանս մնաց կուխնում, գնամ, գնամ, տեսնենք ոնց ա էս օրն էլ մթնում (ղուրս է գնում, մտնում են Յասմիկն ու Վերապեանը):

ՅԱՍ. ախ, սիրելի պարոն, շատ ուրախ եմ, որ եկաք, ձեզ տեսայ պատուհանից կառքով գալիս և ես շտապեցի ձեզ գիմաւորելու. մեր գնացիք այդպէս շուտ և եկաք:

ՎԻՐ. կառքով գնացի հեռագրատուն, հեռագիր տւեցի ուր հարկն էր և տեսայ կարճ միջոցով իմ մի բարեկամիս, որը ուսուցիչ է այս բաղաքում և որի հետ կարեւոր խորհրդակցութիւն ունենալուց յետոյ ուղևորեցի շտապով գէպի ձեզ:

ՅԱՍ. յոյս ունեմ, որ բարի համբաւով շտապեցիք մեզ մօտ:

ՎԻՐ. այո, յարգելի օրիորդ, եկայ իմ վճռի մասին յայտնելու ձեզ:

ՅԱՍ. կարելի է արդեօք իմանալ ինչ վճռեցիք. տաէք խնդրեմ, եթէ կարող էք:

ՎԻՐ. ի նկատի ունենալով ձեր դրութիւնը և թախանձանքը, ցանկանալով օգնած լինել իմ կարողութեան չափ մի վշտահար քնտանիքին, ես վճռեցի, յարգելի օրիորդ, ընդու-

նել ձեր առաջարկութիւնը և շտապեցի այդ մասին հաղորդելու ձեզ, ձեր հօրը:

ՅԱՍ. (հիացմունքով) դուք չափազանց ուրախացրիք ինձ, յարգելի պարոն, ախ, որքան դուք բարի էք և ուշադիր՝ դէպի նեղեալները:

ՎԻՐ. չեմ քաշուում յայտնելու, յարգելի օրիորդ, որ իմ կեանքիս սկզբունքը միշտ եղել է ոյժիս և կարողութեանս չափ օգնել նեղեալներին և թոյլերին:

ՅԱՍ. ես զգացւած եմ ձեր այդ ազնիւ յայտնութիւնից:

ՎԻՐ. չնայելով, որ բարոյապէս ես կապւած էի այն ժողովրդի հետ, որի խաւերում ես ապրում էի երկար տարիներ և ծառայում, հետեապէս շատ ծանր էր և դժուար միանգամից վճռել հեռանալ նրանից, բայց և այնպէս ինձ թւում է թէ իմ որոշումը չէ կարող խղճի խայթ պատճառել և բարոյապէս անհանգիստ անել ինձ, ի նկատի ունենալով, որ այստեղ ես, ինչպէս և ամենուրեք կան կարօտեալներ, տանջւածներ և թոյլեր, որոնք հաւասարապէս արժանի են օգնութեան, յոյս ունեմ, որ ես ասպարէզ կգտնեմ այստեղ ևս բարոյալիս և հոգեկան զգացմունքներիս բաւարարութիւն տալու համար: Իսկ դուք, օրիորդ, թւում է թէ ընդունակ թէտք է լինիք օժանդակելու և խրախուսելու ինձ իմ այսպիսի գործունէութեան ասպարէզում: Դուք առաջին անգամից ինձ վրայ լաւ տպաւորութիւն գործեցիք և եթէ ես չեմ սխալւում, դուք ևս զգայուն պիտի լինիք դէպի ընկճւածները և հարստահարւածները:

ՅԱՍ. ախ, ազնիւ պարոն, դուք յիշեցնում էք ինձ կատարելապէս իմ եղբորս, որը համակւած էր ամբողջ էութեամբ այդպիսի զգացմունքներով. նա իմ ուսուցիչս է եղել, իմ առաջնորդս, իմ լուսաւորիչս: Ես սիրում էի նրան խելագարի նման, սիրում էի, ոչ թէ միայն ինչպէս քոյրը կարող էր սիրել եղբորը, այլ դեռ ևս մի բան աւելի—սիրում էի, ինչպէս իմ կրթիչս, իմ դատաւարակս, իմ գաղափարական ծնողս: Դուք արժանի էք նոյն տեսակ զգացմունքի ոչ թէ միայն իմ կողմից, այլ այն բազմաթիւ անբաղանջ կողմից, որոնց արտասուքը յանձն էք առել սրբելու և վիշտը ամոքելու: Հաւաստի եղէք, ազնիւ պարոն, որ ես ձեզ հետ կլինեմ միշտ, կօժանդակեմ ըստ կարողութեան ձեր վսեմ գործին:

ՎԻՐ. ես շատ երջանիկ եմ ինձ այս բոպէիս զգում լսելով ձեր բերանից, ազնիւ օրիորդ, այդպիսի խրախուսանք և սրտառուչ խօսքեր: Ես չեմ սխալւել իմ վճռի մէջ ապրելու ձեզ մօտ. ձեր ներկայութիւնը և զգացումները կներշնչեն իմ մէջ նոր եռանդ աւելի անձնւիրաբար գործելու տանջւածների:

շրջաններում (սօսնալով Յասմիկին) տեղեք ձեր ձեռքը, պատահան օրիորդ, և խոստացէք, որ անբաժան ընկեր կլինէք իմ գործունէութեան ասպարէզում:

ՅԱՍ. (մեկնում է ձեռքը) ահա իմ ձեռքը, սիրելի պարոն, ես միշտ պատրաստ եմ ծառայելու ձեզ և ձեր ազնիւ նպատակներին:

ՎԻՐ. այսուհետև ճանաչեցէք ինձ ինչպէս ձեր բարեկամի. մեր փոխադարձ յարաբերութիւնները կլինեն պարզ, հասարակ, ընկերական. ես ատում եմ պաշտօնական, կեղծ քաղաքավարական ձևերը: Ես կանւանեմ ձեզ պարզապէս «Յասմիկ», իսկ դուք ինձ «Արսէն» և ուրիշ ոչինչ:

ՅԱՍ. թող այդպէս լինի, պաշտօնական նազ ձեռքը ինձ երբէք սիրելի չեն եղած:

ՎԻՐ. ո՞վ է այն օրիորդը, որին ձեզ հետ առաջին անգամ տեսայ. ինչպիսի աղջիկ է և ինչ է անունը:

ՅԱՍ. իմ հանգուցեալ հօրեղբօր աղջիկն է, բոլորովին որը է և մանկութիւնից գտնւում է մեր ընտանիքում ծնողներիս խնամակալութեան ներքոյ. անունն է Շողիկ. մի հիանալի, ազնիւ աղջիկ—նոյնպէս կեանքի և բնութեան գոբաղտութիւններից դառնացած: Նա ինձ համար մանկութիւնից եղել է միշտ անփոխարինելի ընկերուհի և մանաւանդ մեզ պատահած դժբաղտութեան ժամանակ ապացուցեց ինձ իր ընկերսիրութիւնը և անձնւիրութիւնը:

ՎԻՐ. իսկ ի՞նչ կարող էք ասել ձեր ծնողների, նրանց բնաւորութեան մասին. ասէք, խնդրեմ, այնքան միայն, որքան այդ թոյլ կտան ձեր համեստութիւնը և հայեացքների անկախութիւնը ծնողների վերաբերմամբ: Կարծեմ Մուղսին պէտք է որ բարի մարդ լինի:

ՅԱՍ. հարցը շատ քնքոյշ հարց է, բայց և այնպէս ես կյայտնեմ ազատօրէն իմ կարծիքը: Ծնողներս նահապետական հայեացքների տէր մարդիկ են. հայրս իրաւի բարի մարդ է, բայց բնաւորութեամբ տաք և յամառ. իբրև նահապետական ընտանիքի ներկայացուցիչ՝ նրա պահանջը եղել է միշտ անպայման հնազանդութիւն իրան և իր հայրական կամքի կատարումն, եթէ նոյն իսկ կատարողը պարզ տեսնում է, որ այդպիսով իրան անձին սաստիկ ֆլաստում է: Հէնց այդ էր գլխաւոր պատճառը այն կռիւների և ընդհարումների, որ տեղի էին ունենում շարունակ անյայտացած եղբօրս և հօրս մէջ: Եղբայրս անյայտացաւ, հայրս բոլորովին փոխւեց, կակղեց, խեղճացաւ. վիշտը, հոգսը միւս կողմից սաստիկ կտորեց նրան: Ինչ վերաբերում է ձօրս, պէտք է ասեմ, որ նա բացի նահա-

պետական հայեացքներ ունենալուց, բնաւորութեամբ էլ չար կին է. նա բռնակալ է և եսասէր: Ծնողներս վճռել էին՝ բռնութեամբ ամուսնացնել ինձ մի ազէտ տիրացուի հետ, որին ևս ատում եմ. ևս կարողացայ ինձ պաշտպանել ծնողական այդ բռնի արշաւանքի դէմ. հայրս նահանջեց, զիջաւ, իսկ մայրս դեռ շարունակում է հալածել: Մայրս նոյնպէս եկեղեցասէր է և սաստիկ ցանկանում է, որ ևս տիրացու Դանիէլի կինը լինեմ և ինքը տէրտէր փեսայ ունենայ:

ՎԻՐ. շատ շնորհակալ եմ, Յասմիկ, անկեղծ յայտնութիւններդ համար: Այդ թուցիկ ծանօթութիւնը ինձ կարեւոր էր, որպէս զի ևս կարողանամ զորա համեմատ վարել և գործ տեսնել. (լուում է ոտի ձայն). կարծեմ մարդ է գալիս (մտնում է Մուղսին):

ՄՈՒՂ. աա, սիրելի բարեկամ, դուք արդէն այստեղ էք:

ՎԻՐ. Այո, Մուղսի աղա, շտապեցի գալ իմ վճռի մասին յայտնելու ձեզ:

ՄՈՒՂ. համաձայնութիւն արդեօք թէ անհամաձայնութիւն:

ՎԻՐ. համաձայնութիւն. ևս վճռեցի ընդունել ձեր վճիռը, յուսալով որ օգտակար կլինեմ ձեզ, ձեր ընտանիքին և թէ այն հասարակութեան, որի շրջաններում ինձ վիճակած կլինի այսուհետև ծառայել:

ՄՈՒՂ. (ողևորւած) դուք անսահման ուրախացրիք ինձ, սիրելի որդի, դուք եկաք ժամանակին սփռփելու մի վշտացեալ ծերունու, որի կեանքի օրերը արդէն համբարւած են. շնորհակալ եմ, որդի, շնորհակալ եմ ձեր առաքինութեան և բարեսրտութեան համար:

ՎԻՐ. կաշխատեմ, Մուղսի աղա, ճշտութեամբ կատարել իմ պարտքը լսելով միշտ խղճի թելադրութիւններին:

ՄՈՒՂ. (ծեղփց բռնելով) գնանք, սիրելիս, դուք այժմս մեր ընտանիքի անբաժան անդամն էք, մեր որդին, մեր Գարեգինը, (գութս նս գնում),

Ե. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Գարեգինի անյայտանալուց չորս տարի յետոյ:

Գարեգինի սենեակը, ինչպէս նկարագրւած է երկրորդ գործողութեան սկզբում, այժմ ծառայում է իբր «գրասենեակ Վիրապեանի համար և՛ երբեմն էլ իբր ընդունարան. մահճակալը հեռացրւած է սենեակից և նրա տեղ զբւոյս է կուշտ:

(Մտնում են Յասմիկն ու Վիրապեանը).

ՎԻՐ. այո, սիրելիս, ծանր և դառն օրեր ենք այժմ տեսնում. մարդուս կեանքի մէջ այսպիսի մոռնատներ յաճախ չեն կրկնում, սա ժողովրդական մի ազէտ է, որը յիշեցնում է մեզ բարբարոսութեան դարերը, սա ապացոյց է, որ բռնութիւնը դեռ ևս վերջնականապէս խորտակւած չէ. նա օրհասական ճգնաժամի մէջ է և յուսահատ կռիւ է մղում: Գնացի՛ր, տեսա՛ր արդեօք, ինչպէս ևս քեզ սասցի, այն հինգամեայ մանկանը, որը գնդակահարւած, կիսամեռ ընկած է մօր գոգում. օ, ևս չեմ կարողանում մոռանալ նրա գալկացած դէմքը, նրա տնքոցն ու տանջանքները:

ՅԱՍ. գնացի տեսա՛յ, սիրելի Արսէն, տեսայ և սոսկացի: Երբ ևս մօտեցայ նրան, սկսեցի փաղաքշել, շոյել, նա աչքերը բացեց, կիսահայեացք գցեց վրաս և ևս տեղնուտեղը մարեցայ. նրա փայլուն, հրաշալի, բայց կսկիծից և տանջանքից մարած աչքերը կարծես ասում էին. — բարի մարդիկ օգնեցէք ինձ, կեանքի կայծը դեռ ևս մարած չէ ինձանում, ևս ուզում եմ ապրել. որքան կենդանի, որքան գեղեցիկ մանուկ եղած պիտի լինի, բայց այժմս... այժմս գրեթէ հոգեվարքի մէջ: Մէկը, երկուսը չէ, երեքը չէ, այլ հարիւրաւոր և հազարաւոր այդպիսի մանուկներ իրանց դժբաղտացած, վիրաւորւած ծընողներով. ա՛խ, Ասուած իմ, մի՛թէ այդ մանուկներին մայրերը չեն ծնել, մի՛թէ նրանց կենդանի թաղողները, նրանց սպանիչները սուրը բարձրացնելիս մի վայրկեան չմտածեցին, որ իրանք ևս մի ժամանակ այդպիսի մանուկ են եղել: Ես այցեւեցի, տեսայ ամենքին, սիրելի Արսէն, ամենքի ցաւի և վէրքի

հետ ծանօթացայ. ամեն ինչ մոռացայ, նոյն իսկ Գարեգնին մոռացայ. կարծես լուրջ հիւանդ եմ ինձ զգում այժմս ստացած սոսկալի տպաւորութիւններից և չգիտեմ կարող եմ արդեօք նրանց որևէ կերպ օգտակար լինել:

ՎԻՐ. ոչ, սիրելիս, այդպէս վերաբերել չէ կարելի. նըլաղիլ, հիւանդանալ թշուառութեան տեսքից՝ թուլութեան նըլան է. զգալ ամբողջապէս մարդկանց տանջանքը և կարիքը և գալ նրանց օգնութեան, թոյլ չտալով որ զգացմունքները պըղտորելով և քօսական վիճակ ստանալով կարողանան քեզ ամբողջապէս տիրանալ և անգործութեան մատնել—ահա հասարակական գործունէութեան հիմնական սկզբունքը: Մի մոռանար, սիրելիս, որ այդ բազմաթիւ թշուառներին անհրաժեշտ է շուտափոյթ և լուրջ օգնութիւն: Մեր երկրի մի քանի քաղաքներում, ինչպէս լրագրները հաղորդում են, օգնութեան գործը յաջող է գնում. մեզ մօտ, մեր քաղաքում, միակ հիմնարկութիւնը բարեգործական ընկերութեան ձեւով է, որը առ այժմս գործում է մեծ եռանդով. ինձ վրայ նա մանաւանդ պարտք է դրած իբրև վարչութեան անդամի և նախագահի վրայ, որքան միջոցները կներեն ամօքել բնութիւնից հալածւած այդ բազմաթիւ բնատանիքների դառը վիճակը: Բացի նիւթական միջոցները անհրաժեշտ է եռանդուն, անձնէր գործիչների աջակցութիւնը. իսկ այդպիսիների թիւը շատ աննշան է, 3—4 հոգի և ոչ աւելի: Ահա մի ասպարէզ, ուր դու գործ ունիս կատարելու. նրանք ամեն ինչից դուրկ են. հացից, բնակարանից, հագուստից, անկողնից, բժշկական օգնութիւնից և այլն: Ժամանակաւոր շուտափոյթ և խելացի միջոցներով մենք կարող ենք շատ շատերի կեանքը ազատել ոչնչացման, կորստեան վտանգից:

ՅԱՍ. ամեն ջանք գործ կդնեմ, սիրելի Արսէն, օգտակար լինելու նրանց, չվհատուել, շընկճել զգացմունքների ազդեցութեան տակ: Թող այն օրը սեանայ, խաւարի ինձ համար, ինչ ժամանակ որևէ կերպ ինձ անընդունակ զգամ օգտակար լինել տանջւածներին:

ՎԻՐ. հա, այդպէս, սիրելիս (մօտենալով ձեռքից բռնում է). դու կհանդիսանաս նրանց համար, մանաւանդ անմեղ փոքրիկներին համար պահապան հրեշտակը, դու նրանց կսկիծն ու տնքոցը կմեղմացնես, դու նրանց կշերմացնես, կզգես մայրական գորովով ու սիրով. իսկ սրբան երջանկութիւն պիտի զգանք, տեսնելով որ մեր եռանդուն ջանքերով անմեղ կեանքեր, իսպառ ազատւած են ոչնչացումից: Ընկերութեան վարչութիւնը արդէն բնակարաններ է վարձել այդ օրէցօր աճող

ազէտեալներին համար, արդէն սկսել է հարիւրաւոր թշուառներին ամեն օր հաց, տաք կերակուր, թէյ բաժանել. բայց կարիքը հնագին է, օգնութիւնը առ այժմ համեմատաբար աննշան, մինչդեռ ընկերութեան միջոցները սաստիկ սուղ: Բացի նիւթական մեծ միջոցները սաստիկ կարևոր են օգնական ձեռքեր, որին հաց բաժանելու, որին կերակուր, որին հագուստ, որին դեղ և յետոյ... յետոյ լուռ վկայ լինել, տեսնելով թէ ինչպէս, կարծես ժանտախտից վարակւած, ամեն օր մեծ թուով մեռնում են, մանաւանդ փոքրիկներից, ներկայ լինել թաղման ծէսին և վերջին հրաժեշտ տալ. ս՛վ երկինք, ինչու դու լուռ կացել ես և արժանի հատուցումն չես պահանջում այդ անմեղ զոհերի արիւնարբու գազանակերպ մարդկանցից...

ՅԱՍ. Տէր Աստուած, որն է աւելի ծանր դրութիւն քան այն դրութիւնը, որին հասցրել են նրանց բարբարոսները:

ՎԻՐ. այո, մի դրութիւն, որը նկարագրել մարդկային լեզուն անկարող է: Պէտք է սակայն շտապել գէթ փոքր ինչ ամօքել նրանց վիճակը. դու, սիրելի Յասմիկ, ամեն բոպէ պատրաստ եղիր, կարծում եմ քեզ հետ բարեսիրտ Շողիկը նոյնպէս տանից դուրս կգայ կարօտեալներին ծառայելու:

ՅԱՍ. նա սաստիկ ցանկանում է և անչափ ուրախ կլինի, եթէ միայն հնարաւորութիւն տրւի նրան տնից դուրս գալու. մայրս, գիտես արդէն, Արսէն ջան, թէ ինչպիսի կին է, թոյլ չի տայ Շողիկին:

ՎԻՐ. Այդ բանը դժւար չէ գլուխ բերել. կխօսեմ Մուղսու հետ. յոյս ունիմ Շողիկին ևս ծառայեցնել գործին (նայում է ժամացոյցին) պէտք է սակայն շտապել, գնալ. կանչւած եմ նահանգապետի մօտ. պահանջում են ամենաստոյգ և մանրակըրկիտ տեղեկութիւններ և հաշիւ օգնութեան գործի վերաբերեալ. իսկ դու, Յասմիկ ջան, գնա մեր ծանօթ բժիշկ Համբօի տունը—յայտնիր նրան, որ վաղը, ինչպէս արդէն իրան հետ խօսել եմ, վարչութեան արտակարգ նիստին ներկայ լինի բացառապէս վիրաւորեալներին և հիւանդներին բժշկական օգնութեան մասին խորհրդակցելու: Բացի այդ, այսօր երեկոյեան մեր սովորական վարչական նիստից յետոյ, հաւանակահօրէն ժողով ունենանք մի քանի տիկիներուց և օրիորդներից, ուր անպատճառ ներկայ պիտի լինիս նաև դու. պէտք է աշխատենք կանանց օժանդակիչ մի կօմիտեա հիմնել:

ՅԱՍ. սիրելի Արսէն, քո բոլոր պատէքները ճշտութեամբ և արագ կկատարեմ (պատրաստում է գնալ), այս բոպէիս գնում եմ բժշկենց տուն, քառորդ ժամից յետոյ կլինեմ այնտեղ. իսկ առ այժմ ցտեսութիւն, սիրելիս (համբուրում են և գնա-

ան դռներից դուրս են գնում. մտնում է Սերորը աղմկալից ծիծաղով):

ՍԵՐ. հա, հա հա, ամմա տեղն էր հա, ամմա տեղն էր, հա, հա հա. տիրացու Դանիէլ, հա, հա, հա. գալիս էր խանութի մօտ, հէնց որ Մուրկէն վրայըծաւ, օտից բռնեց թէ չէ, մեր խեղճ տիրացուն ռնց փուեց գետին. վրահասայ, դուրս արի Մուրկին, տեսնեմ տիրացուի սանդ ու սունդը թուած, հէնց ասես մեռել դառած, շալվարը ճղոտած, էնա հիմիկս նստած օթախում առանց շալվարի, Շողիկը կարում, կարկատում է պատտաած տեղը, հա, հա, հա: Անիծւած Մուրկէն շատ գալում շուն ա, գիդա, հասկանում ա ում վրայ հաչի, վրայըծնի. էսա քանի տարիա խօ տեսնում ա, տիրացու Դանիէլը մշտական գալիս ա մեր տուն, չտրվեց. օտար, խորթա համարում տիրացուին ու էլի վրան հաչում, կծում. շունն էլ հասկանում ա, ովա պատւական մարդ, ով ընենց բերեարա մարդ (մտնում է Սասն խանութը բարկացած):

ՕՍ. այ, դու անամօթ, մոռտար գետադա. բաս դու Աստուած չունես, խղճմտանք չունես, էս ինչ արարք է, որ դու բերում ես խալխի գլուխը (մտնում է Սերորին բարկացած՝ ձեռքը շարժելով):

ՍԵՐ. (յետ ու յետ քաշելով) ինչ ա, խանում, ինչ եմ արել ես քեզ, ինչի ես բէարուր անում:

ՕՍ. ինչ ես արել. բա էս մարդութիւն է, որ դու անում ես, խեղճ տիրացուին եարալու փարալու ես արել:

ՍԵՐ. խանում, ես ինչ անեմ, ես ինչ մեղաւոր եմ, որ շունը կծի Դանիէլին, էս եմ եարալու փարալու արել տիրացուին թէ՛ Մուրկէն:

ՕՍ. Մուրկէն կծի թէ դու միենոյն է, դու էլ Մուրկի ընկերն ես. բա, դու մեղաւոր չես, որ բաց ես թողնում, ջընջլով չես կապում, որ խալխին եարալու չանի:

ՍԵՐ. խանում, ըտենց անպատիւ անել չի կարելի, ես մարդ եմ, ես շուն չեմ, շան ընկեր ես շինում. Մուրկէն մըշտական ջնջլով կապած չի լինում, վախտ բաց ենք թողնում, վախտ կապում. նա ամենքին փնաս չի տալիս, նա ձանաչում ա իր ակուէքի մարդու:

ՕՍ. ուրեմն Դանիէլը շան ակուէքի մարդ է էլի, այ, հողեմ քո քաչալ գլուխը, որ քեզ պէս քաչալը Դանիէլին էլ չի հաւանում (մտնում է Դանիէլը կաղիկին տալով, սպօգոները հագին, երկար վերաբիտով և անդրափարտիկով). ահա և Դանիէլը (զիմելով նրան). Դանիէլ, կծած տեղից խօս արիւն չի գալիս:

ԴԱՆ. արիւն չի գալիս, բայց ակուէքի հետքերն երևում

են և սաստիկ ցաւում է ոտս. լաւ է շալվարս հաստ, դայիմ կտորից էր, թէ չէ անիծւած շունը միսս պոկ կտար:

ՕՍ. էս փուչ գետադին քանի անգամ ասել եմ կապած պահի շանը, ումը կասես, իրան էշն է քշում, ոչ խանում կայ դրա համար, ոչ ադա:

ՍԵՐ. (դառնալով տիրացուին) տիրացու Դանիէլ, դու ու քո Աստուածը, դորդ ասա, տէրտէր ես դառնալու, Աստուան պիտի ծառայես. ես մեղաւոր եմ էս բանում, ես որ չլինէի, վրայ չըհասնէի, դուրս չանէի, շունը պատառ պատառ կանէր քեզ թէ չէ, լաւութիւն արեցի քեզ թէ չէ:

ԴԱՆ. հա, եկար դուրս արեցիր շանը, ես ընկած գետնին, էն հալին, ինձ ձեռքից բռնելու վերկացնելու տեղ, ծիծաղում էիր. կարծես ուրախացել էիր պատահածի վրայ:

ՕՍ. հա, ուրախացել էր պատահածի վրայ, ծիծաղում էր. ախ, անամօթ, անպատկառ գետադա, դու համարձակում ես անպատիւ վարել եկող գնացող դոնաղի հետ:

ՍԵՐ. դէ, հիմիկս եկէք խօսացէք, լաւութիւն արէք խալխին, (զիմելով խիղով) ախ քաչալ, քաչալ Սերոր. ով էր քեզ ասում, որ զլխապատառ դուրս վազես, օգնես, շունը դուրս անես ու մարդ ազատես շանից պատառ պատառ լինելուց. իմ հախնէ, իմ հախը:

ՕՍ. տես, տես, էնքան փչացածն է, որ սղում է դեռ արդարացնել իր վարմունքը, ուզում է հաւատացնել ուրիշներին, որ ինքն անմեղ է. այ քաչալ, դու ինձ խաբել չես կարող, չէ:

ՍԵՐ. խանում, ինչ վատութիւն եմ արել քո օջախին, ինչ ծոռութիւն ես տեսել ինձանում, խի՞ ես ինձ տափով տալիս, մեղք չեմ ես, ինսպն չեմ ես, նահախ տեղը խի ես ինձ բիւրուր անում, տափով տալիս:

ՕՍ. գնա լաւ, կորիք, գնա գործիդ. եթէ Մուղսին չլինէր, ես քեզ մի օր էլ չէի պահի, բայց ինչ կասես, որ Մուղսին է քեզ պահում այստեղ:

ՍԵՐ. էհ, խանում, խանում, բան չունիմ ասելիք. մեր, քեասիր, խեղճ խալխի լեզուն կարճ կըլի. ամմա էսքանը կասեմ, որ երբ ես եկայ ձեր տունը զուլուղ մտայ, գլխիս մազ կար, մազս ձեր զուլուղում թափուեց, ձեր տանը քաչալացայ. հիմիկս իմ էսքան տարւայ հաւատարիմ զուլուղի համար, անկոճա լսում ա քեզնից, խանում, անուշ խօսքեր, շնորհակալ եմ (դուրս է գնում):

ՕՍ. անպէտք գետադան խօսքի տակ չի մնայ, լեզուն կըտրուկ է, Դարեգինը փչացրեց դրան, նրանից դաս արաւ ու

չնացաւ: Է՛հ, Դանիէլ ջան, իմ կեանքս դառնացել է, էս վերջին տարիները կեանք չէ, որ ես քաշում եմ. սիրտս մորմոքուում է, երբ քեզ էգպէս խեղճացած ու անյոյս եմ տեսնում:

ԴԱՆ. ինչ անեմ, որ անյոյս չլինեմ, էս է քանի տարի է աշխատում եմ, միշտ անյաջողութիւն անյաջողութեան յետեւից. 40 տարեկան մարդ եմ, ես իմ մուրաղիս չհասայ, ով գիտէ էս հասակիս կձեռնադրեն թէ ոչ ինձ քահանայ. անբաղտ աստղի տակ եմ ծնւած, անբաղտ (մտնում է Շողիկը Գանիէլի վարտիկը ձեռքին):

ՇՈՂ. կարեցի, կարկատեցի, արդէն պատրաստ է (վարտիկը տալիս է Գանիէլին, որը ձեռքից առնելով եւ քաշելով մի անկիւն՝ երեսը դարձած դէպի պատը հաղնում է):

ՕՍ. դու ասում ես այդ հասակին չեն ձեռնադրի, ինչ հասակ է որ, դեռ ես լրիւ 40 տարեկան չկաս. 50 տարեկան փրացուներին քահանայ են ձեռնադրում:

ԴԱՆ. (հաղնելիս երեսը կիսով չափ դարձնում է դէպի Օսանը) ճշմարիտ է, իմ հասակին եւ աւելի էլ ուշ ձեռնադրողներ եղել են առաջ, բայց հիմիկս շատ հազիւ է պատահում (հաղնելուց յետոյ արդէն դառնում է դէպի Օսանը), մեծ գումարի պէտք կը լինի, որպէս զի մէկին իմ հասակին քահանայ ձեռնադրեն:

ՕՍ. ինչ կայ որ, մենք էլ կտանք մեծ գումար եւ կձեռնադրենք քահանայ:

ԴԱՆ. է՛հ, Օսան, մի քանի տարի ես այդ յոյսով ապրեցի, բայց ոչինչ դուրս չեկաւ. ոչ կարողացայ ամուսնանալ, ոչ էլ նպատակս իրագործելու համար պէտք եղած մի գումար ձեռք բերել:

ՕՍ. ինչ արած, Դանիէլ ջան, հանգամանքները չէին ներում. ես իմ աջակցութիւնից եւ խոստում կատարելուց յետ չեմ կանգնի, այս տարի վերջապէս ինչ որ էլ լինի անպատճառ կպսակեմ եւ տէրտէր էլ ձեռնադրել կտամ. դու բոլորովին հանգստանալ, քեզ մի տանջիր, ես իմ խօսքիս տէրն եմ:

ԴԱՆ. Աստուած պահպանէ քեզ, Օսան խանութ. քո յուսովն եմ ես միայն ապրում, չլինէիր դու, ես արգէն վազուց կորած կլինէի, ով գիտէ գերեզման մտած. ո՛ւհ, ո՛ւհ, ոտս ցաւում է (բռնում է ցաւած տեղից). պէտք է ինձ զնալ հանգստանալ. մնացէք բարով (ձեռք է տալիս միայն Օսանին եւ թեթեւկադիկին տալով ծանրաքայլ դիմում է դէպի դուռը):

ՕՍ. ա՛հ, փուչ գեաղա, քաջալ, մուռտար շուն, էս օրը բցեցիք, չօլախացրիր հոգևոր կոչում ունեցող խեղճ մարդուն (գուրս է դնում Գանիէլի յետեւից):

ՇՈՂ. (մննակ) մինը հարցնող լինի, թէ ինչ կայ, որ ձեռք

չես վերցնում Մուզսի աղի անից. շունը կծեց հախն է, որ կըծեց. ինչ կայ, ինչ ես ուզում, Յասմիկը չէ ուզում, վաղուց քեզ մերժեց, իսկ Արսէնի շաքից անգամ վախենում ես, էլ սուր ես գրուխդ կոխում. մի էնպէս էլ մուսնաթով եւ աբքով է գալիս, որ կարծես էս տան տէր տիրականը լինի: Այս բանում տանտիկինն է մեղաւոր, Օսան խանութը. շատ է երես տեղ տիրացուին եւ այնքան մտերմացել են, որ չեն քաշում նոյն իսկ իմ ներկայութեամբ միմեանց հետ ջանով խօսելու: Բայց կայ մի սոսկալի գաղտնիք, որը միայն ինձ եւ Մերոբին է յայտնի: Տէր-Աստուած, որքան անպիտան կին է, բարոյական զգացմունքներից, մարդկային արժանաւորութիւններից զուրկ մի կատարեալ հրէշ: Իմ կեանքս խաբարել է դրա ձեռքում, մի օր հանգիստ չեմ ունեցել այս տանը այդ կնոջ պատճառով. կազատեմ արդեօք երբևիցէ դրա ճանկերից: Յասմիկը խնդրեց նրան որ մէկ, երկու սահաթով միայն թոյլ տայ ինձ, որ կերակուր բաժանեմ խեղճ ժողովրդին, չհամաձայնեց անհոգին: «Բաս տան բանն ով շինի, ասում է. քեզից շատ շնորհակալ եմ, մնաց որ Շողիկին էլ թողնեմ քուչէքն ընկնի»: Ի՛նչ անեմ, սուր փախչեմ, որ ազատեմ այդ կնոջից. միթէ մեռնել եւ բոլորովին հանգստանալն աւելի լաւ չէ, քան այսպէս տանջել-մաշելով ապրելը. ետրադան Աստուած, ո՛ւմ ինչ եմ արել, ի՞նչ մեղք եմ արել, որ կեանքն ինձ այսպէս պատժում է եւ հալածում, ինչի՞ եմ ապրում, ո՛ւմն եմ հարկաւոր ես... ախ, ախ (հեծկտում է. մտնում է Յասմիկը):

ՅԱՍ. ախ, Շողիկ ջան, դու լաց ես լինում (մտնում է եւ գրկում) ինչո՞ւ, ինչո՞ւ, ասա խնդրեմ:

ՇՈՂ. ոչինչ, հէնց էնպէս, սիրտս լցեց. լաց եմ լինում իմ անմխիթար դրութեան, իմ բազախ վրայ:

ՅԱՍ. (համբուրելով) ասա, դարձեալ նոր բան պատահել է քո եւ մօրս մէջ, ասա խնդրում եմ:

ՇՈՂ. ոչինչ անսովոր բան չի պատահել. միայն օրէցօր ծանրանում է ինձ համար կեանքը, տանջանքը սաստկանում եւ ապրելը այս տան մէջ մօրդ իշխանութեան եւ հրամանների տակ հետզհետէ անհնարին է դառնում:

ՅԱՍ. այդ գիտեմ, հասկանում եմ. շարունակ այդպէս չի լինի, սիրելիս. փոքր ինչ համբերութիւն ունեցիր, ամեն ինչ կփոխւի, զրութիւնդ կլաւանայ. մտաբերում ես, սիրելի Շողիկ, այն ժամանակները, երբ ես վերջին յուսահատութեան հասած թանկագին կորուստի պատճառով, դու ինձ պահպանում էիր. սիրտ էիր տալիս, ոգևորում. անցաւ ժամանակ, եկաւ Արսէնը, հասակս սուսայ, աւելի փորձեցի. տեսայ կեանք

քը իր սև կողմերով, տեսայ աչքովս այրոց տանջանքները, զգացի նրանց ցաւերը և մոռացայ, մոռացայ ամեն ինչ, նոյն իսկ մոռացայ իմ թանդագին եղբօր Գարեգինն: Ի՞նչ է մեր անձնական ցաւը, մեր անմխիթար վիճակը համեմատելով օրինակ նրանց վիճակի հետ, որոնք այժմ ապաստան են դաժած մեր քաղաքում. նրանց տեսնելով կարծես մի ներքին ձայն խրոխտաբար կարդաց ինձ պատւէր—Յասմիկ, մոռացիր քեզ և ամեն ինչ անձնական և օգնիր բազմատանջ ժողովրդին. ես լսեցի, հետեւեցի այդ ձայնի պահանջին. այժմս ես գոհ եմ, զւարթ եմ, հանգիստ եմ խղճիս առաջ. հաւատացիր, որ նոյնը կզգաս, նոյն գաղափարը կոգևորէ քեզ ծառայելով նեղւածներին. դու դուրս կգաս այս տանից, կօգնես նրանց, այդ մասին Արսէնը աշխատում է և խոստացաւ անպատճառ զլուծի բերել:

ՇՈՂ. Արսէնը աշխատո՞ւմ է, խոստացաւ իմ մասին հոգա՞լ, տանից դուրս դալ ինձ կարօտեալներին օգնելու. բայց կարո՞ղ է արդեօք յաջողեցնել մօրդ ձեռքից ազատելով ինձ մի աւ ժամանակ փոքր ինչ ազատութիւն շնչել, ազատ երկիրք տեսնել, մաքուր օդ ծծել, մարդ տեսնել, բան լսել. ո՞հ, որքան ես երջանիկ պիտի զգամ տեսնելով ինձ քեզ պէս ազատւած ընտանեկան կապանքներից:

ՅԱՍ. անհոգ եղիր, սիրելիս, Արսէնը հաստատ խոստացաւ, նա անպատճառ կկատարէ իր խոստումը և կյաջողեցնի. գիտես թէ ինչպէս կտրուկ և եռանդուն մարդ է Արսէնը. մի բան, որ անհնարին է թուում իրագործելու, նրա ձեռքում հրնարաւոր է դառնում. որքան ճարպիկ և խելացի է, բայց և որքան ազնիւ և անկեղծ մարդ. ես նրան չափազանց սիրեցի:

ՇՈՂ. սիրոյ արժանի է այդպիսի մարդը. ես անկեղծ շնորհակալ եմ նրանից, որ ինձ, թշուառիս վրայ նոյնպէս ուշադրութիւն է դարձնում. ես նրան շատ երախտապարտ պիտի լինեմ (մտնում է Մուղսի աղան):

ՄՈՒՂ. (շատ է ալեւորել, շատ է կտրել, առողջութիւնը կորցրած, գրեթէ ոտի վրայ հիւանդ, մէջքը կռայցած, ինվալիդ դարձած) դուք այստեղ էք, սիրելիներ (դառնալով Շոկիին) Շոկիկ, Արսէնը ինձ խնդրեց թոյլ տամ քեզ, որ Յասմիկի հետ օգնես խեղճերին, հաց, կերակուր բաժանես. գնա, աղջիկս, արն, ինչպէս ցանկանում է Արսէնը. նրա քէֆը չեմ կտորի, նրանից շնորհակալ եմ, ձերութեանս այս խորին հասակում, երբ Գարեգինս չքացաւ, կորաւ, նա ինձ ամեն բանում պաշտպանեց և օգնեց: Ախ, Գարեգին, Գարեգին, քո վիշտը ինձ այս օրը զցեց:

ՇՈՂ. (զղացած) ախ, ապու ջան, շնորհակալ եմ, շնորհակալ եմ քեզնից (մօտենում ձեռքը նամբուրում է):

ՅԱՍ. Շոկիկի հետ շնորհակալ եմ և ես. օգնիր մեզ, հայր, բարի գործ կատարելու:

ՄՈՒՂ. արէք, ինչպէս կամենում էք, սիրելի աղջիկներս, հետեւեցէք Արսէնին, որին ազնիւ մարդ ճանաչեցի:

ՅԱՍ. ախ, հայր, որքան ես երջանիկ եմ, տեսնելով քո տրամադրութիւնը այդպէս փոխւած. այժմ այդ խորին հասակում դու նմանում ես, հայր, անմեղ, անարատ մանկանը, որին դեռ ես կեանքը չէ փչացրած:

ՄՈՒՂ. Գարեգնի վիշտը ինձ շատ կտրեց, աղջիկս. աշխարհս այն չէ ինձ համար այժմս, ինչպէս առաջ. ես շատ մեղքեր գործեցի կեանքի մէջ, շատ բան խղճիս հակառակ գործեցի, որ ինչ է իմ գրութիւնը լաւացնեմ, հարստանամ, փող դիզեմ. հասկանում էի, որ խղճի հակառակ բան էի կատարում, բայց թոյլ էի, չէի կարողանում խոյս տալ, յետ կենալ չարիքից. շահի, փող դիզելու տենչը սաստիկ էր ինձնում և ես ստորացած, ստրկացած էի դրամի գերագոյն իշխանութեան տակ: Ես չեմ մոռանում երբէք Գարեգնին և նրա խօսքերը, որոնք սուր սլաքների պէս ցցւում էին սրտիս մէջ. նա արդար էր, ես խոստովանում եմ այդ. նրա կորուստից յետոյ, ամեն ինչ փոխեց ինձնում, զգացի այն սխալները, որոնք գործեցի և գործում էի կեանքի մէջ. ինձ համար փող, հարստութիւն, փարթամ, ճոխ կեանք այլսնշանակութիւն չունի այժմ. բարի գործ, լուս անուն, ահա ինչ պէտք է վաստակէ մարդս իր կեանքի մէջ:

ՅԱՍ. (զղացած փարւում է հօր գիրկը) հայր, դու մեր սըրտից ես խօսում, դու մեզ ոգի ես տալիս այդ խօսքերով, քո մէջ խօսում է մի ներքին ձայն, արդարութեան ձայնն է այդ, որը մենք առաջին անգամն ենք լսում քեզնից:

ՇՈՂ. (նոյնպէս զղացած մօտենում է Մուղսուն) ապու ջան, դու մեզ այսօր երջանկացրիր քո այդ խօսքերով. ուրիշ աւելի մեծ ուրախութիւն մեզ համար չէր կարող լինել:

ՄՈՒՂ. (երկուսին էլ իր թևի տակ առնելով) այն, սիրելիներ, առաջին անգամն էք լսում ինձնից այսպիսի խօսքեր. ես մեղաւոր եմ ձեր առաջ, ես իմ հայրական պարտականութիւնը դուրս եմ ձեր առաջ, ես իմ հայրական պարտականութիւնն է առ ձեզ չեմ կատարած. անիժւած փողը և շահամոլութիւնն է եղել միայն կեանքիս ղեկավարը: Կուզէի ձեզ բանալ իմ սիրտն եղել միայն կեանքիս ղեկավարը: Կուզէի ձեզ բանալ իմ սիրտն ու պատմել ձեզ շատ բան իմ կեանքի դասերից: Ախ, եթէ ու հնար լինէր ինձ երիտասարդանալ այժմեան իմ այս խելքի և փորձառութեան հետ:

ՅԱՍ. (զրկելով եւ համբուրելով) հայրիկ ջան, սուրբ մարդու պատկեր ես ընդունել, պաշտելի կերպարանք ստացել:

ՄՈՒՂ. ոչ, մի խաբւիք, սիրելի աղջիկս, ես չափազանց յանցաւոր մարդ եմ. ծերութեան հասակում ոմանք բոլորովին երեխայանում են և խելք կորցնում, իսկ ոմանք էլ կեանքի դառն փորձառութիւններից և դասերից յետոյ զգաստանում են, խելքի գալիս. այս վերջիններին պատկանում է և ձեր հայրը. բայց ինչը կարող է այժմ իմ խղճիս, հոգուս հանգստութիւն պատճառել, քանի որ տրդէն ուշ է, բանը բանից անցել է, երբ ես արդէն իմ գործած բազմաթիւ մեղքերը անկարող եմ քաւել:

ՅԱՍ. ոչ, հայր, երբ մարդիկ զղջում են և խոստովանում են ուրիշների առաջ իրանց գործած սխալմունքները, աշխատում են բարի գործերով քաւել իրանց մեղքը, նրանք ազատում են խղճի խայթոցից, նրանց հոգեկան դրութիւնը թեթևանում, հանգստանում է. իսկ դու, հայր, ինչ այնպիսի ծանր բան գործած պիտի լինիս կեանքի մէջ, որ անկարող լինես քաւել մեղքդ:

ՄՈՒՂ. (նւաղելով նստում է ամոռին) խեղճ, միամիտ աղջիկս, դու զեռ չես ճանաչում կեանքը, ինչպէս հարկն է. հարցնում ես ինչ ծանր մեղք գործած պէտք է լինեմ. մարդ եմ սպանել, աւերել եմ առն ընտանիք, կողոպտել եմ մարդկանց. քո առաջ կանգնած է անպատիժ մի մեծ ոճրագործ:

ՅԱՍ. (ստիպարով յետ ու յետ քաշում Շողիկի հետ). ինչպէս, հայր, այդ անկարելի է:

ՄՈՒՂ. մի սարսափէք և զարմանաք, ասածիս մէջ կեղծիք չկայ բնաւ կեանքիս, ապրուստիս միջոցները, հարստութիւն զիզելու ջանքերը եղել են միշտ խաբերայական. միշտ ստել եմ, խաբել եմ շահելու նպատակով և ուրիշին փնաս միայն պատճառելով: Ասացի մարդ եմ սպանել, այս ճիշտ է. իմ պատճառով և պարտքի պահանջ անելու իմ անսիրտ վերաբերմունքով շատերին զժբաղտացրել, թշւառացրել եմ. նոյն իսկ պարտքը անկարող լինելով ժամանակին ստանալ, մէկի տան սարք ու կարգը վեր գրել տւեցի և նա ընտանիքով վերջին ծայր աղքատութեան մէջ ընկնելով խելագարւեց և գժանոցում իր վերջին շունչը փչեց: Որբերի և այրիների տունն եմ քանդել, աւերել, կորզելով և օգտւելով նրանց ունեցած, չունեցածից: Առուտուրի մէջ անխիղճ կերպով խաբելով մէկին հարիւր եմ ստացել, իսկ պարտքի տոկոս մէկին յիսունից մինչ երկու հարիւր և նոյն իսկ աւելի: Գիւղացիները, ո-

բոնց հետ նա շարունակ գործ ունէի, վճարում էին իրանց պարտքը բերքերով և անասուններով մի չնչին գումարի տեղ. ես պահանջում էի նրանցից որքան կարելի է շատ և ստանում էի նրանցից անտրտունջ գիտենալով որ ստացածս հարիւր անգամ աւելի է տւածիցս: Մի գլխարկի, մի գդակի տեղ, որ արժէր մէկ մանէթ, գիւղացուց խլում էի եզը կամ կովը, երբ նա անկարող էր լինում վճարել որոշ ժամանակին իր մի ուրբի պարտքը: Այսպէս սանձարձակ կեղեքում էի, հարստահարում էի, գողանում էի. գնացի նոյն իսկ Երուսաղէմ տանջւած, խաչւած Քրիստոսի գերեզմանին ուխտ, հաջի դարձայ, այդ էլ չօգնեց. փողի տենչը աւելի սաստիկ, աւելի քաղցր էր քան սուրբ գերեզմանին համբոյրը: Այսպէս, հարստութիւնս, ստացւածքս շաղախւած է խեղճերի արիւն արցունքով և ես ու ընտանիքս ժողովրդի արցունքով ենք կերակրւել, նրա հաշուով ապրել: Վերջին տարիները Գարեգնի կորուստից և Արսէնի չալուց յետոյ միայն, ինձ հաշիւ ու համար տւեցի իմ անցեալից, իմ գործածից և ինձ ճանաչեցի մեծ ոճրագործ, աւազակ, որոնց աքսոր են հանում տաժանակիր աշխատանքների: Ահա ես այդ պատճառով հանգիստ չունիմ, խիղճս ինձ միշտ տանջում է և խաղաղ մեռնել ինձ չէ վիճակւած: Ա՛խ, սիրելի աղջիկերքս, կեանքը սիրեցէք և արդար եղէք դէպի ուրիշները. բարի գործ, բարի գործ միայն կատարեցէք և դուք երջանիկ կլինէք, իսկ ես այդ երջանկութիւնից զուրկ եմ ընդ միշտ (զուխը երկու ձեռքի մէջ է անում եւ կարծես խիղուածի ձայնի հանում):

ՅԱՍ. (լացակտուր) հայր, բուսական է քեզ տանջես. հասկացանք քո ցաւը. հանգիստ եղիր, եթէ դու չկարողանաս քաւել յիշատակւած մեղքերդ, մենք քո զաւակներդ մեր գործերով կքաւենք,

ՄՈՒՂ. այդ խօսքը, սիրելի աղջիկս, լու սփոփանք է և ուրիշ ոչինչ. իմ բազմաթիւ մեղքերս ոչ որ չէ կարող քաւել: Օհ, եթէ ես կարողանայի իմ մահից մի ժամ առաջ ինձ հանգիստ զգալ բոլորովին, մեղքերից ազատւած և տեսնէի իմ Գարեգնիս, որի կորստի պատճառը ինքս դարձայ... (Սեք նրստած գուխը ձեռքին եւ արմունքը դրած ամոռին, մտնում Արսէնը):

ՅԱՍ. (ուրախ, ուրախ) ահա և Արսէնը եկաւ:

ՎԻՐ. իմ յարգանքս, Մուղսի աղա (Մուղսին զուխը բարձրացնում է):

ՄՈՒՂ. բարով եկար, որդի. նստիր, նստիր իմ դիմացը աթոռին (Արսէնը նստում է) կատարեցի, սրդի, քո խնդիրքը Շողիկի վերաբերմամբ. նա կօզնի Յասմիկի հետ խեղճերին, թէև

Օսանը համաձայն չէր, չեմ չում արեց, բայց ես նրան սաստեցի, ասացի, որ բարի գործ կատարելուն արգելք չդառնայ:

ՎԻՐ. շնորհակալ եմ, Մուղսի աղա, ձեր պատրաստականութեան համար. ես անյոյս չէի, որ իմ խնդիրքը կկատարւէր:

ՄՈՒՂ. կարող եմ միթէ չկատարել, ցանկութիւնդ կոտրել, քանի որ իմ ձեռութեան վերջին տարիներում, դու որդիական անկեղծ վերաբերմունքով ինձ պաշտպան և օգնական ես եղել. խնդրիր, սիրելի Արսէն, ինչ որ ցանկանում ես, քո տրամադրութեան տակ եմ դնում իմ ամբողջ կարողութիւնը, որը ինձ չէ պատկանում, որովհետև արդար վաստակով չէ ձեռք բերւել:

ՅԱՍ. սիրելի Արսէն, հայրիկն այսօր մեզ հաղորդեց իր մտաաանջութիւնների պատճառները և երջանկացրեց մեզ իր բարի, առաքինի խօսքերով:

ՎԻՐ. (դէպի Մուղսի աղան) դուք մի այնպիսի օրինակ էք տալիս, որ մատով պիտի ցոյց տան ձեզ վրայ. հասարակական օգտին ձեր առաջարկած նւիրաբերութիւնը անկասկած օգուտներ կտայ. այդ մասին դեռ ևս կմտածենք, կխորհրդակցենք թէ ինչ աւելի նպատակայարմար գործադրութիւն տայ. այսքանը միայն կասեմ, որ եթէ այն բոլոր մարդիկ, որոնք ահագին ստացածքներ և հարստութիւններ ունեն և որոնք նըրանց չեն պատկանում, մի բարոյական ներքին խթանով, մի հրաշքով յօժարակամ ձեր օրինակին հետևելով վերադարձնէին հասարակութեան, այն ժամանակ հաւանական է գոյութիւն ունեցող հասարակական չարիքը այսքան աղէտներ և աւերումներ չէր առաջ բերի: Յաւն էլ հէնց այն է, որ մեր այդ ցանկութիւնը գործնականապէս իրականանալ չէ կարող, մի ամբողջ դասակարգ երբէք յօժարակամ չի վերադարձնի դարերի ընթացքում ժողովրդից գրաւածը, բացառութիւնների մասին չէ խօսքը ի հարկէ:

ՄՈՒՂ. ուղիղ են, որդի, խորհրդածութիւններդ. փողը, շահամոլութիւնը կուրացնում են մարդուն. բարի գործը, առաքինութիւնը յետ են քաշում. մարդս հետզհետէ զիզելով, կուտակելով հարստութիւններ՝ աւելի է զազանանում և անարդար դառնում դէպի իր նմանները: Մի հաւատաք թէ բարեգործներ կան կեանքի մէջ. եթէ բարեգործութիւն անում են փշրանքներ միայն տալով ժողովրդին նրանից խլած ամբողջ հացի տեղ, այդ միայն դրուած դարձեալ անձնական շահամոլութիւնից և փառասիրութիւնից: Ոմանք էլ բարեգործութիւն անում են ձեռութեան խորին հասակում, մահաւն

չէժքին, վախենալով մահից և ցանկանալով «նոզուր փրկութիւն» և արքայութիւն հանդերձեալ աշխարհում: Նրանք այստեղ լաւ էին ապրում, փողով էլ ուզում են «փրկուել» և այնտեղ էլ լաւ ապրել, Աբրահամի գողը նստել: Քեզ, սիրելի Արսէն, մի քանի անգամ խոստովանել եմ իմ մտաւանջութեան պատճառները, այսօր էլ այս անմեղ աղջիկներին խոստովանեցի իմ անցեալը: Ներկայ իմ այս տրամադրութիւնը աւելի ջանիլ հասակումս չէր կարող երևան գալ. մարդս դժբաղտ է միայն նրանով, որ ուշ, շատ ուշ, դառն փորձերից, սոսկալի հարւածներից յետոյ միայն խելքի է դալիս և զգաստանում:

ՎԻՐ. դեռ լաւ է, որ անձնական դառն փորձերից յետոյ մարդիկ կարողանային խելքի գալ. շատ անգամ կեանքի դառն փորձերն էլ խելքի չեն բերում մարդկանց, այլ մի շարք արիւնալից հասարակական ցնցումներ միայն վճռում են այսպէս կամ այնպէս մարդկութեան բաղտը:

ՄՈՒՂ. ինչ որ էլ լինի, սիրելի Արսէն, դարձեալ կըրկնում եմ—դու ես կարգադրողը իմ ստացածքի և կարողութեան: Արն, ինչպէս որ ցանկանում ես և ինչպէս որ լաւ է: Ես այսօր սահմանից դուրս խօսեցի. թոյլ և տկար եմ զգում, պէտք է գնալ ինձ հանգստանալ (վերկենալու ջանքի է անում, Շողիկը օգնում է Սեւից բռնելով), մնացէք խաղաղութեամբ, զաւակներս (Շողիկի հետ ծանրաբայլ ուղղում է դ'պի դուրը):

ՎԻՐ. խաղաղութիւն և քեզ, բարի ձերունի (դուրս են գնում), խեղճ ձերունի. նրան տանջում են հին յիշողութիւնները, իր ամբողջ կարողութիւնը առաջարկելով բարի գործերի համար, դարձեալ հանգստութիւն չէ գտնում:

ՅԱՍ. հանգստութիւն չէ գտնում, որովհետև իրան համարում է մեծ ոճրագործ, մարդասպան. ես սոսկում եմ այն մտքի առաջ, որ իմ հայրս այդպիսի ոճիրներ է գործել կեանքի մէջ:

ՎԻՐ. սառնասիրտ եղիր, սիրելիս. ոճրագործների և յանցաւորների զաւակները ոչ մի մեղք չունին և պատասխանատու չեն կարող լինել ծնողների արարքների համար. վերջապէս հայրդ այն սովորական յանցաւոր մարդկանցից է, որոնց թիւը անագին է և հասարակական դասակարգերից մէկն է կազմում. ներկայ հասարակական էտիկայով նրանք նոյն իսկ յանցաւոր չեն ճանաչում. մինչև անգամ փառաբանում, գովում են մէկին, երբ ճարպիկութեամբ և զանազան գործնական հընարներով, այլոց տանջանքի և քրտինքի գնով կարողանում են ահագին հարստութիւններ զիզել:

ՅԱՍ. ախ, ինչ լաւ կլինէր, որ ուրիշներն էլ իմ հօր օրինակին հետևէին:

Մուղսի
ՎԻՐ

ՎԻՐ. (ծիծաղելով) երազդ բարին կատարւի, Յասմիկ. այս կամ այն անհատը, ինչպէս և տեսնում ենք երբեմն կեանքի մէջ, կարող է հողեկան այլ և այլ գրութեան շնորհիւ յօժարակամ իր ստացածքը և հարստութիւնը տալ հասարակութեան, հասարակական-ընդհանրական սեփականութիւն դարձնել, բայց մի ամբողջ սեփականատէր դասակարգ յօժարակամ երբէք չէր համաձայնի այդ անել, որովհետև դրանով իր գոյութեան հիմքը կխախտէր, իրան ոչնչացման կմտնէր (այստեղ ընդհատում է խօսակցութիւնը, մի քանի վայրկեան յետ ու առաջ է քայլում, ընդունելով հոգատար արտայատուծիւն): Այս ծանրակշիռ հարցերի մասին, սիրելի Յասմիկ, ուրիշ անգամ առիթ կունենամք եղ հետ խօսելու. ինձ այժմ ամբողջապէս կլանել է օրւայ շարիքը, որ սաստիկ անհանդիստ է անում ինձ. արդէն հազարաւոր թշուառներ ապաստան են գտել մեր քաղաքում, իսկ հասանքը շարունակում է անընդհատ. օգնութեան կարիքը անհագին է և կարօտեալներին բաւարար կերպով օգնելու անձեռնհաս է ոչ թէ բարեպորձական ընկերութեան մի վարչութիւն, այլ և թէ լինէին նոյն իսկ մի քանի օժանդակ մարմիններ:

ՅԱՍ. սիրելի Արսէն, հայրս ահագին կարողութիւն ունի, որը դնում է քո տրամադրութեան տակ, ծախսիր այդ բոլորը կարօտեալներին կարիքներին վրայ:

ՎԻՐ. մեր երկրում այդ թշուառներից սպաստան են գրտել տասնեակ հազարներ. ասում են աւելի քան 50.000. և թէ հայրդ ունենայ 200.000 կարողութիւն, որը գործադրէր գանազան կարիքների վրայ, ամեն մի հողու վրայ կընկնէր չորս ուրբի, որը շատ չնչին օգնութիւն կլինէր. միլիոնների պէտք է զգացւում այս ընդհանուր աղէտից փառաւորներին օգնելու համար. բայց աւաղ. մասնաւոր, ժամանակաւոր օգնութիւնը մի կաթիլ ջուր է միայն ժողովրդական վէրքը զովացնելու համար: Երբ քննում ես հասարակական չարիքի, այսպիսի աղէտներ սուղացնող հիմնական պատճառները, գալիս ես ի վերջոյ այն համոզմունքին, որ միայն և եթ արմատական միջոցները կարող են նրանց առաջն առնել և իսպառ վերացնել, (նայում է ժամացոյցին) Յասմիկ ջան, գնա հիւանդանոց հիւանդներին այցելութեան և տեղեկութիւններ հաւաքիր նրանցից ամեն մէկի գրութեան մասին. իսկ ինձ պէտք է շտապել մի քանի կարգադրութիւններ անելու, գնանք միասին (ծեռ օձորի տւած միասին դուրս են գնում. հակառակ դռնից մտնում են Սերոբը և անյոյտ անձն):

ՍԵՐ. (նայում է սննեակի չորս կողմը) մտէք, մտէք, պարոն, ոչ որ չկայ, արխէին կացէք:

ԱՆՅԱՅՏ ԱՆՁՆ. (խօսում է ցած, գաղտնիքաւոր ձայնով. Սերոբը հետևում է նրան) ասէք, խնդրեմ, օր. Յասմիկն այսպէս է, տանն է, ես ուզում եմ նրան անձամբ մի քանի բոպէ առանձին տեսնել:

ՍԵՐ. կէս ժամ առաջ այստեղ էր, այժմ չգիտեմ տանն է թէ ոչ:

ԱՆՅԱՅՏ ԱՆՁՆ. իմացէք, բարի ծառայ, որ իմ գալուստի մասին ոչ որ չպիտի գիտենայ. ինձ յայտնի է ձեր մասին, որ դուք Յասմիկին և անհետացած Գարեգինն շատ հաւատարիմ էք և նրանց բարին ցանկացողը. այդ պատճառով զգուշութեամբ յայտնեցէք Յասմիկին՝ առանձնապէս նրան տեսնելու իմ ցանկութեան մասին:

ՍԵՐ. բոլորովին միամիտ կացէք, ես իմ Գարեգին աղին և բարընա Յասմիկին ոչ որի և ոչ մի բանի հետ չեմ փոխի. այս բոպէիս կիմանամ տանն է թէ ոչ (դուրս է գնում):

ԱՆ. ԱՆՁՆ. շատ ցանկալի էք անձամբ տեսակցել օր. Յասմիկի հետ մի քանի բոպէով՝ նախազգուշական միջոցների մասին խօսելու: Պէտք է ճշտութեամբ և սրբութեամբ կատարել, ինչ որ պատելուած է ընկերոջ կողմից. իսկ եթէ տանը չհանդիպի, ցաւալի կլինի. յամենայն դէպս տոմսը իրան կյանձնեմ (մտնում է Սերոբը):

ՍԵՐ. պարոն, հէնց այս բոպէիս բարընա Յասմիկը դուրս է գնացել Արսէն աղի հետ. ի՞նչ կկամենաս, երկմիտ մի լինէք, ասէք, ես իրան իմացում կտամ:

ԱՆ. ԱՆՁՆ. ոչ, այդ անկարելի է. ինձ հարկաւոր էր իրան տեսնել. մի բան միայն խնդրում եմ, բարի մարդ, ահա այս տոմսը յանձնիր իրան Յասմիկին ծածուկ, այնպէս որ ոչ որ չիմանայ և տեսնի: Յետոյ միայն կիմանաս, որ սրանով դու լաւութիւն արած կլինես օրիորդին և մանաւանդ անհետացած Գարեգինին: Իսկ այժմ մի հետաքրքրելի թէ ինձանով և թէ իմ գալուստապատկով:

ՍԵՐ. աչքիս վրայ, պարոն, երկմիտ մի լինիք ինձնից, ես կյանձնեմ թուղթը Յասմիկին:

ԱՆ. ԱՆՁՆ. շնորհակալ եմ. այժմ ինձ պէտք է շտապ հեռանալ. մնաս բարև, բարի մարդ, վստահ եմ ձեզ վրայ բոլորովին (ծեռ է տալիս և հեռանում):

ՍԵՐ. գնաս բարև, պարոն, արխէին կացէք (առանձին). ով է, ինչ մարդ է, ինչ է ուզում անել, ես բան չհասկացայ. ամմա երևում է լաւութիւն ուզող մարդ ա. ինձ էլ խնդրեց, ոչ

որքին չասեմ, եթէ բարըջնի լաւութիւնն ուզում եմ, ես ազնիւ խօսքիս տէրն եմ (տունը տնտղում, շուս ու մուս է տալիս) եարաբ ինչ ա գրած մէջը. էհ, իմ ինչ բանս է, թաք լաւութիւն անեմ բարըջնին, գիրը նրա ձեռքը հասցնեմ (այդ միջոցին Շողիկը անցնում է լսիկ մնջիկ, Սերոբը կանչում է):

ՍԵՐ. Շողիկ խանում, Շողիկ խանում (Շողիկը կանգ է առնում):

ՇՈՂ. Ի՞նչ է, Սերոբ, ի՞նչ ես ուզում:

ՍԵՐ. բարըջնա խանումը որտեղ ա հիմիկս, շուս ա գալու տուն թէ ուշ:

ՇՈՂ. Արսէնը և նա միասին դուրս գնացին, կարծեմ Յասմիկը գնաց հիւանդների մօտ. պետք է որ շուս գայ, կանանց ժողովի պիտի գնայ յետոյ. ի՞նչ կայ որ այդպէս հարցնում ես.

ՍԵՐ. հարկաւոր ա, վազու բան կայ:

ՇՈՂ. ինչ բան, չի կարելի՞ ասել:

ՍԵՐ. ես խարար չեմ, հալբաթ իրանից կիմանաս:

ՇՈՂ. հիւանդանոցը մեզնից հեռու չէ. եթէ այսպէս վընագու բան կայ, գնա, կարելի է այնտեղ դառնես Յասմիկին:

ՍԵՐ. լաւ ես ասում, Շողիկ խանում, էս ա գնում եմ (դուրս է գնում):

ՇՈՂ. մի բոպէ հանգիստ չէ տալիս անիծւած կինը. Շողիկ, էս արա, էս արա, աւելի, կարկատի, թողը սրբի, ամանները լւն. արես խաւրեցրեց, հոգիս հանեց, հոգիս, անաստւած կինը, իսկ ինքը—ուշք ու միտքը տարւած տիրացուին—մատը, մատին չի կպցնում, ոչինչ չէ շինում և ամենքի մօտ և ամեն տեղ ի պարծենում է, որ ինքը լաւ տնարար, բան անող կին է. Տէր Աստուած, ինչ ստախօս ու պարծենկոտն է. մէկ մէկ էնպիսի անպատիւ խօսքեր կասի ինձ, որ սիրտս կդադի. «հողը քո չօլախ գլուխդ, ասում է, դու էիր պակաս, բուշէքն ընկնես չօլախ ոտովդ, ինչ է, կարելի է մէկ ջահիլ սիրեկան ձարես». ես սուս եմ կենում, լիզուս կարճ է, համբերում եմ, երեխայութիւնից ինձ էսպէս խեղճացրիկ են: Թեղճ ապուն շատ չարչարեց, տանջեց Գարեգնի համար և ինչքան փոխեց յետոյ, փոխեց բարեսիրտ, առաքինի դարձաւ. այժմ հիւանդ, պառկած անկողնում հալից ընկել է բոլորովին, գոյնը թուել, ձայնը հանգել և սրտամաշ, ծանր տնքոցներ միայն հանում. երկար չի ապրի, ինչպէս երևում է մի բանի օր, թերես նոյն իսկ մի քանի ժամ: Յետոյ իմ գրութիւնս աւելի կձանրանայ այդ հրէջի ձեռքում. բոլորը, բոլորը պիտի յայտնեմ Արսէնին, հասկացնեմ հան-

գամանքս ու խեղճութիւնս, թէ և նա ինքն էլ վաղուց արդէն տեսնում է. նա մարդասէր է, ինձ կօգնի անպատճառ, կազատէ այդ չարահոգի կնոջից: Գնամ շուտով, գնամ թէ չէ, հիմի գազանը կգոռայ էլի ըստ իր սովորութեան (բարձ, անհասկի ձայն է լսում. «Շողիկ, գլուխ մեռած Շողիկ, ո՞ւր ես, աղջի, մէն հանի է՞») մյ, տեսնք, կանչում է անէծքներով ու ուշուցններով. օ՛, Տէր Աստուած (արագորակ դուրս է գնում. մտնում են Յասմիկն ու Սերոբը):

ՍԵՐ. բարըջնա, լաւ է, որ շուս եկիր տուն, ափսոս որ տանը չէիր:

ՅԱՍ. հեռու չէի գնացել, հանդիպեցի հիւանդանոցը, որը մեր տնից 200 քայլ է և ոչ աւելի. ի՞նչ կայ, ի՞նչ վազու բան էր:

ՍԵՐ. բարըջնա ջան, եկաւ մի անձանօթ պարոն. շատ ուզում էր քեզ մենակ տեսնել. սպասել, ասաց, չեմ կարող. չեմացայ, չասեց թէ ով էր և ինչ էր ուզում. խնդրեց, որ իր գալու մասին ոչ ոքին չասեմ և այս նամակը քեզ յանձնեմ ծածուկ (տալիս է տունը Յասմիկին):

ՅԱՍ. (անհանդիստ եւ շփոթ) նամակ. (շտապ պատում է ծրարը, նայում է ստորագրութիւնը) «ԲՆ՝ Գարեգին», Տէր Աստուած, Գարեգնից նամակ (ուրախական ձիչ. Սերոբը նոյնպէս—Գարեգնից նամակ), Գարիգս կենդանի է (անմասեր եւ սիրտը Թռռալին, տեղ տեղ կանգ առնելով կարդում է նամակը). «Միբելի և անմոռանալի Յասմիկ! ինչպէս տեսնում ես կենդանի եմ (Աստուած իմ). երևի կէս ժամ էլ չի անցնի այս նամակը ստանալուցդ յետոյ, որ միմեանց հետ կտեսնենք (կանոյ. ձեռքը տանում է դէպի կուրծքը). այնպէս կարգադրիր, որ ոչ ոք չիմանայ և տեսնի ինձ, ես գալիս եմ շատ կարճ միջոցով քեզ, քեզ միայն տեսնելու և յետոյ դարձեալ հեռանալու. քո՛ Գարեգին». (անսահման ուրախութեան ձայներ եւ շարժւածքներ). Տէր-Աստուած, Գարեգինս, Գարեգինս կենդանի է, ես նրան այս բոպէիս պիտի տեսնեմ, պիտի տեսնեմ չորս տարի մեռած կարծելով նրան. Գարիգ ջան, Գարիգ ջան, (ձեռքը մեկնելով դէպի դուռը կարծելով արդէն դուռն շէմբուսն է եւ չկարողանալով հասնել դուռնը՝ ընկնում է սրտի նւաղութիւնից ածողի վրայ):

ՍԵՐ. (Յասմիկի Թեւից բռնելով) բարըջնա ջան, հանգիստ կացիր, էս ինչ ուրախութուն, բազաւորութուն ա, Գարեգին աղան կենդանի է և գալիս է:

ՅԱՍ. (նւաղած ձայնով) բաժակով ջուր տուր, սիրտս, սիրտս սաստիկ խփում է:

ՍԵՐ. էս սհաթիս, բարըջնա, դայիմ պահի քեզի (դուրս է գնում):

ՅԱՍ. (կցկտուր) Գարեգոս գալիս է, ես նրան դարձեալ պիտի տեսնեմ... տեսնեմ կենդանի (ուզում է վերկենալ եւ գնալ դէպի դուռը չէ կարողանում. նւաղումն, սրտի սաստիկ բարախումն չէ թոյ տալիս. վերադառնում է Սերորը ձեռքին ջրով բաժակը):

ՍԵՐ. ահա ջուր, բարը շնա խանում, առ բերանդ (տալիս է բաժակը):

ՅԱՍ. (բերանը ջուր առնելուց յետոյ) Սերոր, թող ինձ մեռակ, երեւի այս բոպէիս կգայ, գնա դուրս, պարտէզը, բակը եւ սպասիր նրա գալուն. այնպէս արն, որ ոչ ոք չտեսնի:

ՍԵՐ. աչքիս վրայ, բարը շնա խանում, ամմա քեզ դայի՛մ պահիր:

ՅԱՍ. ես լաւ եմ, Սերոր, գնա, գլխաւորիք Գարեգոսին (Սերորը դուրս է գնում). պէտք է, պէտք է պատրաստել (երեսը, մազերը ձեռքով շփում եւ շտկում է) տեսութեան սիրելի Գարեգոսին հետ. օ՛, երջանիկ բոպէ, ժամ բերկրութեան եւ ցնծութեան (աշխատում է վերկենալ ածուխից). ո՛վ, բարի մարդիկ, հաւաքւեցէք, բացէք իմ սիրտս եւ գննեցէք նրա ուրախ տրոփիւնը, նրա հիասքանչ ել եւ էջը, ո՛վ կարող էք սպասել մի այսպիսի երջանկութիւն, բերկրանք: (Յայտնում է Սերորը եւ յետոյ Գարեգոսին. Գարեգոսը շատ է տանջւած, մաշւած. յայտնելուն պէս քոյր եւ եղբայր մի անձնաթուղով փարւում, միանում են միմեանց հետ եւ այդպէս զրկախառն մնում են մի քանի վայրկեան, որի ժամանակ Յասովը սրտայոյզ ձայներ է հանում. «Գարիզ ջան, Գարիզ ջան» կրկնելով եւ ուրախութիւնից նւաղելով եւ լաց լինելով. լաց է լինում եւ Սերորը):

ԳԱՐ. (զրկից չհեռանալով եւ համբուրելով Յասովին. սաստիկ զղացւած եւ գունատ է) հանգստացիր, սիրելի քոյրս, հանգստացիր, ահա եւ ես քեզ մօտ (քնքոյշ կերպով աշխատում է նստեցնել ածուխի վրայ):

ՅԱՍ. չորս երկար տարիներ եւ ոչ մի լուր քեզանից (լաց է լինում հեկեկալով):

ԳԱՐ. անկարելի էր, սիրելիս, որեւէ կերպ իմ մասին լուր տալ. գործի հանգամանքը այդպէս էր պահանջում:

ՅԱՍ. իսկ որքան վիշտ ու տանջանք կրեցինք, որքան յուսահատական բոպէսներ անցրինք քո առիթով:

ԳԱՐ. ինձ համար կրած ձեր այդ անձնական տանջանքը համեմատելով իմ տեսած ու քաշած օրերի հետ ոչինչ է:

ՅԱՍ. (նայում է եղբոր երեսին եւ զրկում) ախ, Գարեգոս, որքան փոխւել ես, նիհարել ու մաշւել:

ԳԱՐ. ուրիշ կերպ չէր էլ կարող լինել:

ՅԱՍ. ասա, աղաչում եմ, սրտեղ էիր, ո՞ւմ մօտ եւ ինչ արկածների հանդիպեցիր այս չորս տարին:

ԳԱՐ. հանգստացիր փոքր ինչ, սիրելիս, կյայտնեմ յետոյ (չորս կողմը նայելով) սակայն ասա, քոյրիկս, այստեղ ապահով եմ ես, ոչ ոք չի տեսնի արդեօք ինձ:

ՅԱՍ. հանդիստ եղիր. ապահով ես. հայրիկը սաստիկ հիւանդ է, չէ կարողանում նոյն իսկ անկողնում շարժւել, բըժիշկն եկաւ, քննեց—ասաց, անյուսալի է դրութիւնը: Իսկ մայրս Շողիկի հետ հիւանդից չեն հեռանում. միայն Արսէնը կարող է գալ, որի մասին բոլորովին վստահ կարող ես լինել. դա մի ամենաազնիւ երիտասարդներից մէկն է, որի հետ քո անհետանալուց յետոյ հայրիկը ծանօթացել էր եւ մեզ մօտ է ապրում աւելի քան Յ տարի, (դառնալով դէպի Սերորը) Սերոր, գնա դուրսը. սպասիր Արսէնին եւ երբ գայ, յայտնիր եղելութեան մասին:

ԳԱՐ. (Սերորին՝ ծիծաղելով), ուրիշ քեզից ինչպէս է Սերորը եղբայր, ինչպէս ես ապրում, օղլուշաղղ ողջ եւ առողջ է:

ՍԵՐ. (մօտենալով, անձնկրական զգացմունքով). աղա Գարեգոսին, երբ ես քո ողջութիւնդ եւ առողջութիւնդ տեսայ, մնացածը հէչ, ամենը քեզ զուրբան:

ԳԱՐ. շնորհակալ եմ, ազնիւ բարեկամ, գիտեմ թէ որքան անձնէր ես եղել միշտ ինձ եւ թէ Յասովիկին. գնա, բարեկամ, գնա, արա ինչպէս օրիորդը կարգադրեց:

ՍԵՐ. էսա գնամ. զուրբան ընի քեզ Սերորը (զուրս է գնում):

ԳԱՐ, ինչ պարապմունքի տէր է քո յիշած պարոնը, ինչպէս է ազգանունը:

ՅԱՍ. ուսուցիչ է, ազգանունը Արսէն Վիրապեան. այնքան նման է քեզ ամեն բանով, որ հայրիկը նրան ընդունեց մեր տանը իբրև որդի. նա եղաւ մեր պահապանն ու պաշտպանը քեզանից յետոյ. նա այժմ գրեթէ բացառապէս նւիրւած է հասարակական գործունէութեան:

ԳԱՐ. շատ ուրախալի է, որ այդպիսի մի ազնիւ երիտասարդի էք պատահել:

ՅԱՍ. նա այնքան բարեբար ազգեցութիւն արեց հայրիկի վրայ, որ վերջին ժամանակները նա բոլորովին փոխւեց, բոլորովին անձանաչելի դարձաւ. մանաւանդ քո վիշտը նրան շատ կոտորեց, նա կակղեց բնաւորութեամբ, զգաց, խոստովանեց իր գործած յանցանքները եւ նոյն իսկ վերջերս յայտնեց ցանկութիւն իր կարողութիւնը ամբողջապէս դնել Արսէնի տրամադրութեան տակ, բարեգործական նպատակների համար. եւ չնայելով այդ բոլորին նա երբէք հանդիստ չուներ, տանջ-

ւեց ու տանջեց, մինչև որ անկողին ընկաւ, թերևս մահան անկողինը:

ԳԱՐ. միշտ այդպէս է լինում. սովորաբար յանցաւորները ձերութեան խորին հասակում միայն զղջում են իրանց արածները և բարեգործական տրամադրութիւն ընդունում:

ՅԱՍ, ոչ, հայրիկը յայտնեց բացարձակապէս, որ ինքը զղջում է իր արածների համար չսպասելով ոչ մի տեղից և ոչ ոքից փրկութիւն կամ հոգեկան թեթևութիւն. լաւ անուն, բարի գործ և միայն բարի գործ այս աշխարհում, անա նրա վերջին խօսքերը:

ԳԱՐ. լաւ է իհարկէ այդ խոստովանութիւնն էլ, որը սակայն տեղի է ունենում, ինչպէս ասացի, միայն կեանքի դառն փորձերից յետոյ, ձերութեան յուսահատական շրջանում. ուրիշները այդ բանին էլ ընդունակ չեն լինում (մտնում է Արսէնը):

ՅԱՍ. անա և Արսէնը (ղիմելով վերջինին ուրախութիւնից զզայւած) Արսէն ջան, անա եղբայր Գարեգինս, որի համար այնքան տանջեցիք (Գարեգինը և Արսէնը մօտենալով իրար սիրալիր կերպով ծանօթանում են):

ՎԻՐ. չափազանց ուրախ եմ և գգացած, տեսնելով իմ առաջ անսպասելի կերպով Յասմիկի եղբօրը, հետևապէս և իմ եղբօրը:

ԳԱՐ. ես կրկնակի ուրախ եմ, պ. Արսէն, ձեզ հետ ծանօթանալով և թէ ի նկատի ունենալով մանաւանդ, որ իմ սիրելի քոյր Յասմիկին յուսահատական, տխուր օրերում խրատուեց, պահպանել էք:

ՎԻՐ. ես կատարել եմ միայն իմ պարտականութիւնը խղճիս թելադրութեան համաձայն:

ՅԱՍ. Գարիգ, ես չեմ մոռանում խոստումդ և անհամբեր հետաքրքիր եմ լսել քեզից լսած ու տեսածիդ մասին այս չորս երկարատև տարիների ընթացքում:

ԳԱՐ. ար, քոյրիկ, ձիշտ, որ անհամբեր ես (նստում է աթոռին, Արսէնը նոյնպէս), դու ուզում ես իմանալ այն ամենը, ինչ որ աչքովս տեսայ, ականջովս լսեցի, ինչ որ կրեցի իմ բացակայութեան ժամանակ, բայց այդ անհնարին է այս կարճատև տեսակցութեան ժամանակ. հարկաւոր են օրեր, շաբաթներ. հարկաւոր կլինէր գրի առնելու համար ամբողջ հատորներ: Այսքանը միայն կասեմ, որ հեռանալով ընտանիքից, դիմեցի այնտեղ, ուր կոչում էր ինձ իմ քաղաքացիական պարտքը. ապրեցի տանջւած, չարքաշ մարդկանց և նրանց ընտանիքների հետ, նրանց բնակւած նկուղներում և գետնափոր խորշերում. տեսայ նրանց վիճակը, լացն ու կսկիծը, ամեն

ջանք ու եռանդ գործ դրի հասկացնել նրանց իրանց գրութիւնը, բարձրացնել ինքնաձանաչութիւնը և այս աշխատանքը դիւրին չէր, հանդիպեցի անաւոր խոչընդոտների, տեսայ բանտը և հեռաւոր քարտը իր արհաւիրքներով. սակայն փոյթ չէ. սա սկիզբն է միայն գործունէութեան, կեանքի դրամայի նախերգանքը, նոյն անընկճելի տոկունութեամբ և ե՛սնազով գործը կընթանայ իր կարգով, մինչև որ կվերանան հասարական ազատ զարգացման անոելի խոչընդոտները, մինչև որ կը խորտակեն կեանքի շղթաները և այդ շղթաները կուող բռնութիւնը:

ՅԱՍ. Գարիգ ջան, այժմս այստեղ և թէ մեր երկրի միւս քաղաքներում ապաստան են գտել նոյնպէս բռնութեան հազարաւոր գոհեր, որոնք օգնութեան կարօտ են:

ԳԱՐ. գիտեմ, այդ յայտնի է արդէն արար աշխարհին. բուրժուազական քաղաքակրթութիւնը անկարող է առաջն առնել այդպիսի աղէտներ, աղէտներ, որոնք շատ անգամ ծնունդ են առնում բուրժուազական հասարակութեան մէջ գոյութիւն ունեցող չարիքներից. բուրժուազիան և իր կուլտուրան միայն կօմպրօմիսներ անել գիտէ բռնութեան հետ. այդ հալածական ժողովուրդը մարդկային ընդհանուր թշւառութեան մի բեկոռն է միայն. կվերանան արմատական միջոցներով համաժարդկային, հասարակական հիմնական չարիքները, կյիցաշըջւելի հասարակութիւնը բոլորովին նոր հիմունքներով — այդ և այդպիսի աղէտները, որոնք այժմս շարունակ կրկնում են խրօնիկական հիւանդութեան պէս, այլևս տեղի չեն ունենայ, նրանք իսպառ կվերանան (վերկենալով տեղից և պատրաստելով գնալ): Ինձ հաճելի է այստեղ մնալ ձեզ մօտ, ժամանակ անցկացնել, գրուցել զանազան խնդիրների մասին. բայց անկարող եմ, սիրելիներ, ինձ կներէք, ես մտայ միայն շատ կարճ միջոցով քեզ տեսութեան, Յասմիկ, և ապա շուտով դարձեալ բաժանելու, ինչպէս գրած էի տոմսի մէջ:

ՅԱՍ. (անհանգիստ թոյցք անելով և զրկելով եղբօրը լաց է լինում) Գարիգ ջան, ազաչում եմ խնայիր ինձ, մահամերձ հօրդ, որը քեզ տեսնելով հանգիստ կմեռնէր. գոնէ մնայիր մի քանի ժամ, մի կամ երկու օր և յետոյ... յետոյ բաժանել. օ՛, ծանր բաժանումն...

ՎԻՐ. սիրելի բարեկամ և եղբայր Գարեգին. ես ես կարծում եմ ձեր այստեղ գոնէ կարճ միջոցով մնալը ամեն կողմից օգտակար կլինի. ոչինչ արգելք չի լինի ձեզ, դուք բոլորովին ապահով էք:

ՅԱՍ. այո՛, այո՛, դու բոլորովին ապահով ես, քեզ արգե-

լող ոչ ոք չի լինի, հայրեկը օրհասական գրութեան մէջ է, իսկ մայրեկի գոռոզութիւնը և կապրիզը վազուց արդէն կտորւած:

ԳԱՐ. Եթէ այդպէս է և ես բոլորովին տպահովւած եմ ձեր շրջանում, ես զիջանում եմ, սիրելիներ, ձեր խնդիրքին:

ՅԱՍ. (Գարեգինի ձեռքից բռնելով) գնանք, ուրեմն, գնանք, Գարիգ ջան, հայրեկի ննջարանը. թող նա քեզ տեսնի և ապա հանգիստ մեռնի:

ԳԱՐ. ծանր է ինձ թւում սաստիկ մի այսպիսի տեսակցութիւնը հօր հետ, որի վատութիւնները և անխնայ հալածանքները անջնջելի հետքեր են թողել սրտումս, իսպառ աւերելով որդիական զգացումները. բայց ինչ արած, պէտք է զիջանել, խոնարհել բնական իրողութեան առաջ և վերջին հրածեշտը տալ մեռնողին... (ղուրս են դնում):

ՄՈՒՂՍԻ ԱՂԱԻ ՆՆՋԱՐԱՆԸ

Մուղսին պառկած անկողնում մահճակալի վրայ ծանր, մեռելային անքոցներ է հանում. Շողիկը և Օսանը լուռ ծառայում են Մուղսուն հսկելով, որ անհանգիստ չլինի, երբեմն բարձն են ուղղում և Մուղսու գլուխը շտկում, երբեմն վերմակը. իսկ Աերոբը դռան շէմքին սպասում է կարգադրութեան. մտնում են Յասմիկը, Գարեգինը և Արսէնը:

ՅԱՍ. (առաջ ընկնելով դէպի մայրը) մայր, ահա Գարեգինը, նա կենդանի է:

ՕՍ. (անակրճակ դէպքից սաստիկ շփոթ եւ զգացւած) Գարեգինը, ախ որդիս, էս ինչ բերիք մեր գլուխը (մայրը եւ որդին զրկում են):

ՇՈՂ. Գարեգին ջան, ես քո հոգուն մատաղ. էս ինչ ուրբախութիւն (Շողիկը եւ Գարեգինը փաթածւում են):

ՕՍ. տես, ահա, տես, հայրդ ինչ օրն է ընկել, նա մեռնում է, ախ, որդի (լաց է լինում. Գարեգինը մօտենում է հօր մահճակալին, Յասմիկը, Արսէնը նոյնպէս):

ՅԱՍ. հայր, ահա Գարեգինը, Գարեգինը եկաւ, սրի համար այնքան տանջեցիր (Յասմիկը հօր թուլացած ձեռքից բռնում է, իսկ Գարեգինը աշխատելով հօրից խօսք իմանալ):

ՄՈՒՂ. (լացի ձայները եւ թէ մանաւանդ Գարեգինի անունը լսելով,

լով, կարծես էլեկտրական հոսանքից ցնցելով աչքերը բացում է). Գարեգին, Գարեգին, Գարեգին:

ԳԱՐ. այո, Գարեգինն եմ, հայր, Գարեգինը:

ՅԱՍ. Գարեգին որդիդ, հայր, Գարեգինը:

ՄՈՒՂ. (ուժից վեր ջանք է գործում գուլիք եւ մէջքը բարձրացնելու եւ աչքերը հարելով Գարեգինին) Գարեգին որդիս, դժուարացա՞նք, կենդանի. օհ իս, օհ իս:

ԳԱՐ. այստեղ եմ, հայր, կենդանի եմ, հանգստացիր:

ՄՈՒՂ. (գերբնական ոյժ է գործ դնում խօսելու, միտք յայտնելու) ես... ես... ահա... մեռ... նուրբ եմ... դու այս... տեղ... ողջ... հարս... տու... հարստու... թիւնս... խեղճ... երին, աղ... քատ... ներին... օհ իս... օհ իս:

ԳԱՐ. շատ գեղեցիկ, հարստութիւնդ խեղճերին, աղքատներին:

ՄՈՒՂ. ուս. ուս... ումնա... բան... ներին. Յաս... միկ... Ար... սէն... պսակ... Ար... սէն... փե... սայ (Յասմիկը եւ Արսէնը լաց են լինում, միմեանց վրայ հայեացք պցելով զրկում են) Շող... Շող... իկ... պսակ (մահւան վայրկեան. աչքերը լայն բացում, դէպի առաստաղ պցում. սկսում է խրխրոց պցել) բա... բի գգործ, բա... բի գգգործ, գգխօօ, խխխօօ (մեռնում է):

ԳԱՐ. մեռաւ, այլ ևս չկայ նա (ընդհանուր լաց ու կոծ. ամենքը բոլորած մեռելի շուրջը արտայայտում են իրանց վիշտը այս այն խօսքով կամ շարժւածքով. Օսանը եւ Յասմիկը չորած են մահճակալի առաջ, յուսահատ ողբում են. Արսէնը աշխատում է Յասմիկին հանգստացնել. Գարեգինը չէ կարողանում յուզմունքը զսպել, թաշկինակով արտասուքը սրբում է):

ՕՍ. (ընկնելով մեռելի վրայ) իմ պատւական մարդս, իմ անւանի մարդս, վա՛յ Աստուած, էս ինչ կրակ եկաւ գլխիս:

ՅԱՍ. հայրեկ ջան, հայրեկ ջան, ինչո՞ւ թողեցիր մեզ, վա՛յ գլխիս, էլ հայրեկ չկայ (Արսէնը հանգստացնում է):

ՎԻՐ. խեղճ, բարի ծերունի, դու շատ տանջեցիր վերջերս:

ՇՈՂ. խեղճ ապու, բարի ապու, իմ պաշտպան ապու:

ՍԵՐ. ափսոս իմ աղան, ափսոս:

ԳԱՐ. (առաջ գալով եւ յուզմունքը զսպելով) չկայ այլևս նա, մեռաւ. մեռաւ հին սերունդի ներկայացուցիչը, նրա հետ մեռան և հին հայեացքները. նոր սերունդը անձնւէր եռանդով և տոկունութեամբ, յաղթական արշաւով առաջ կտանի նորակառոյց հասարակական շէնքի աւարտման գործը, մինչև որ կը դադարի անարդար կարգերի գոյութիւնը, մինչև որ կխոր-

✓ ԴՕՔՏՕՐ ԹԱԹՈՍ, կատ. Վոզ. 1 ար. Թարգմ. Ա. Սարգսրեանի	20
✓ ԵՐԱԶ ԿԱՄ ՕՍԿԱՆ ՊԵՏՐՈՎԻՉՆ ԵԴԵՄՈՒՄ Ֆէյերա 1 գործ. Ա. Սարգսրեանի	20
ԴԵՐԱՍԱՆՈՒՂԻ ԵՒ ԴԵՐԱՍԱՆ, Վոզըվ. 1 ար. Հ. Բարուրեանի	20
✓ ՕՐԹԱԶԱԼԻ ԲԵՅԵԼ կամ ՋԳՐՈՒ ԲԱՆ Է, Ֆարս Վոզ. 1 արար.	—
Ա. Սարգսրեանի	20
ՊԱՏԻԻ, կոմեդիա 4 գործ. Գ. Զուգեր. Թարգ. Ղարազեօղեանի	50
ԿԵՂԾ ԱԶՆՈՒՈՒՂԻՔ, Մօլիերի Թարգ. Ֆր. Մ. Պէյլիքճեանի	40
ԱՆԷԾԲ, ազգային ողբերգ. 1 ար. Հ. Ս. Երևմ. Վեհեմ. 1903 թ.	50
ՈՐՈՄՆ ՅԱՆՈՂՆԵՐ, կոմ. 3 գործ. Վ. Տիրացեանի	30
ՍՏԵՂԼԱ, ողբ. 5 արար. Թարգմ. Պ. Ալթունեան	20
ՍԱՆԴՈՒԽՏ ԴՇԽՈՅԻ և ԿՈՒՄԻ ՓՐԿՈՒԹԻՒՆ, Գ. Պատկանեանի	30
ԹԱԳԻ ԼԱՄԱՐ, Ֆրանսուա Կոպպէկ, ողբերգ. 5 գործ. Ֆրանս.	—
Թարգ. Մ. Մանուչարեան	50
ԲԱՐԻ ԻՐԻՎՈՒՆ, Պ. ԲԱՆԹԱՂՈՆ, Թատերգ. կատակերգ. մէկ	—
արար. Թարգմ. Գարեղեան	50
ԽՈՉԸՆԴՈՏ, Ալֆոնս Դոզէի, կատ. 4 ար. Թարգ. Մ. Նաւասարգ.	50
ՓԱՌԱՆՁԵՄ. կոմեդ. 4 արար. և 6 պատ. Ֆրգրի	1
ՍԱՐՐԱՑ, Ատրպետի ողբերգ. 5 արար.	30
✓ ՎԻՂԵՆԻՄ ՏԷՂԼ, Լամարթինի, Թատր. Հ Առաքելեանի	15
✓ ԱՐԵՒԵՆԻՆԱՆ ԱՏԱՄԱՆԲՈՅԾ, Պարոնեանի, կատ. երգախառն.	—
ի 5 արարուածով	50
ԴԱՄՈՎԼԵԱՆ ՍՈՒՐ, Է. Տէր-Գրիգորեանի, դրամա (էտիւզ) 3	—
արարուածով	75
✓ ԴԱԻԱԶԱՆՈՒԹԻՒՆ, Ի. Ս. Սմբատովի, դրամատիկ. լեզուի վը-	—
րաստանի անցեալից 5 գործ. Թարգ. Զ. Տէր-Գրիգորեանի	50
ԵՍԻ ՄԱՐԴԸ, Շանթի, դրամա 5 արարուածով	60
✓ ԷԳՄՈՆՏ, Վ. Ֆ. Գէօթէի, ողբ. 5 գործ. Թարգմ. Գերմաներէն	—
ընագրից Հ. Մաժիլեանի	50
ԸՆԴՈՒՆԵՆԻՈՒԹԵԱՆ ՕՐԸ, Ի. Կ. Լիսենկո-Կօնիչի Թարգ. օր. Մեղիք.	20
ԹԱԳՆՈՒՄԾ ԿԱՅՅՅԵՐ, Ա. Թառայեանի, դրամա 5 գոր. (պատկ.)	1
ԼԻԱԿԱՏԱՐ ՅԱՆԿ. պիեսներ, որոնք հայերէն լեզուով ներկա-	—
յացնելու թոյլատրուած են Կովկասեան շրջանի բնակրի	—
վրայ, Կովկասեան գրաքննական բանախի պաշտօնա-	—
կան տեղեկութիւնները համեմատ կազմած	50
✓ ԽՈՂԵՐԱ, Փառնակէսի, Վոզըվի մէկ արարուածով	40
✓ ԽԱԹԱԲԱՂԱ, Գ. Սունդուկեանի, կատակերգութիւն 4 արար.	—
և վեց պատկերով	50
✓ ՀԱՄԼԵՏ, Շէքսպիրի, Թարգմանից Գ. Բարազեանի	1
✓ ՀԱՍԱՐԱՅՈՒԹԵԱՆ ՆՅՅՈՒԿՆԵՐ, Հ. Իրսէնի, դրամա 4 գործող.	—
Թարգմ. գերման. Լ. Բարազեանի	50
ՂՕՆԱՂՈՒԽՈՒՄ ՄՆԱՅ, Յ. Սօլովեանի, Վոզ. 1 արարուածով	20
✓ ՂԱՂԻ ԱԴԱԹՆԵՐԱՆ, պատ. ճպտաբա քօլատ կտրի, Տիգօի	1
ՄԿԵՆԿԸ, Ա. Բօգօի, Վոզ. 1 ար. փոխադրեց ռուս. Ա. Վրոյր	20
ՄՈՒԽՈՒՄ-ԱՄԻ, Ռ. Լ. Գրիգորեանից դր. 3 արարուածով	25
ՆՈՐ ԿՈՒՌՔ, Ֆ. Դը-Կիւրիէի, Թատ. 3 արար. Թարգմ. Տ. Վ.	30
ՆՈՐՄԻԴԵՍ, Պ. Գանէլի ողբ. ի 5 հանդ. Թարգ. Հ. Գ. Վ. ձէլալ	50
ՆՈՐ ԿԵԱՆՔԻ ՇԷՄՔՈՒՄ, Ա. Բ.-ի դրամ. էտ. գաւառ. կեանքից	50
ՈՒՆՏԸ, Հ. Ս. Երևմեանի ազգային ողբերգութիւն	50
ՈԳԵՆԱՐՅՈՒԹԻՒՆ, Վ. Սարգուի, Թատ. 3 ար. Թ. Լ. Մ. Ազգամ.	50

ՉԿԵԱՂ ՄԱՐՕՆ, բժ. Ա. Պլտովսկի, դրմ. էտ. 1 գործողութ.	50
✓ ՉՈՒՏԱՂԻ ՄԱՂՈՒՆ ՈՒՏՈՂԻՆ ՀԱՂԱՂԱ, կամ «ՃԱՐՊԻԿ ՓԱՍՏԱ-	—
ԲԱՆ» Փառնակէսի, Վոզըվի մէկ արարուածով	40
✓ ՊՈՂՈՒՄՊԵՐԻԱՂ, կատ. 2 ար. Թարգ. Յ. Նաղարեանից	20
ՊԱՏՈՒԻ ԼԱՄԱՐ, Շիրվանզադէի, դրամա 4 արարուածով	60
ՍՕՖԻԱ, Ֆիլիպի-Ֆէրիերի, դրամա 5 արարուածով	50
ՍԱԹԵՆԻԿ, Հ. Ս. Երևմեանի, ողբերգութիւն ազգային	50
ՍԻՒՐՊՐԻԶ, պ. Արաքսեանի Վոզ.-կատակերգութիւն 1 գործող.	20
ՍՕՆԱՅԻ ՆՇԱՆԴՐԷՔԸ, կամ մոցիբուլի վրէժը, Յ. Նաղարեանի,	—
Վոզըվի մէկ գործողութեամբ	15
ՎԱՂԱԺԱՄ ՄԱՀ, Խ. Բարազեանի, ողբերգութիւն 5 արարուած.	1
ՎԱՐԴԱԳՆՈՅՆ ՆԱՄԱԿՆ, ընտ. կատակերգութ. մէկ արարուածով	50
✓ ՎԵՐԱՔՆԵՐԻԶ, Ն. Վ. Գոգոլի, կատ. 5 ար. Թարգմ. Լ. Տ.	50
✓ ՕՏԷՂԼՕ, ՎԵՆԵՏԿԻ ՄԱՒՐ, Շէքսպիրի, ողբ. 5 արարուածով,	—
Շէքսպիրի կենսագրութեամբ, Թարգ. Ս. Սուլիանեան	60
✓ ՔԱՆԴՈՒՄՈՍ ՕՁԱԽ, կատ. 3 ար. սզղուած է. Գ. Սունդուկեանից	50
ՖԱՐՐԻՅԻՈՒՄ, Ա. Լիբրանդտ, դրամա 3 արարուածով Թարգմա-	—
նութիւն ռուսերէնից Զ. Տ.-Չաքարեանի	60
ԱՆՉՐԷԻՈՏ ԳԻՇԵՐ ՄԸ, Զուհեա 1 հանդէսով	15
ԴԻՄԱԿԱԶԱՆԴԵՍ, Լեբմոնով դր. 4 ար. Թարգ. Յ. Զանսումեան	50
ՄԻՋԻ ՄԱՐԴ ԿԱՄ ՄՕՅԻՔՈՒՄ, կոմ.-Վոզ. Մ. Պատկանեանի	25
✓ ՎՈՅՔԻ ԻՄ ՎԷՉԵՐ, Ֆարս 3 պատ. Մ. Տէր-Գրիգորեանից	40
✓ ԲԷՔԵՐ ԲԻՉՈՒ ՀԱՆԱՔԸ, օպերետ 1 գործողութեամբ	25
✓ ԱՇՆԱՆԱՅԻՆ ԵՐԵՎՈՅ ԳԻՒՂՈՒՄ. Վոզ. 1 արարուածով	25
✓ ԲՈՒՆ ԼԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆ, կոմեդիա 1 արարուածով	40
✓ ՊԱՌԱԿԵՐՈՒՆ ԽՐԱՏ, Վոզ. 1 ար. Տէր-Գրիգորեանից	50
ՉՈՒՂԱՅԻՆԵՐ, Հաուզումանի	40
✓ ՓՈՒՉ ՉԱԻԱԿ, դրամա 5 գործ Գ. Ղարազեանի	50
ՄԵՂԱՊԱՐՏ ՆՐԷՇԵՐ, Գ. Քուչարեանի դրամա 4 գործողութ.	30
» ՓԱՐԻՍԵՅԻՆԵՐ, դր. պատկ. 5 գործողութ.	30
ԻՆՉՊԷՍ ՏԵՐԵՆԵՐԸ, Դիագոպա, Թարգ. հայր Քասկանտիլեան	60
ՄԱՆԿԱԿԱՆ ԲԵՄ, Ա. Յ. Ղարազեանի	15
✓ ԴՕՔՏՕՐ ՇՏՕԿՄԱՆ կամ ԺՈՂՈՎՐԴԻ ԹՇՆԱՄԻՆ, դրամա 5	—
գործողութեամբ, Թարգմ. Ա. Հախումեանի	80
✓ ՏՐԻԼԻԻ, դր. 4 արար. Թարգմ. Լեոն Մելիք Աղամեանի	25
ՆԻԿՈՄԻԴԵՍ, ողբ. 5 արար. Թարգ. հայր Գրիգոր. վարդ. ձէլալ	30
ԹԱԳՆԻՄՈՍ ԿԱՅՅՅԵՐ, դր. 5 գործ. Ա. Թառայեանի	1
✓ ԵԻԳԻՆԷ, Շիրվանզադէի, դրամա 3 գործ.	40
✓ ՄԱՐԻՈՂ ՃՐԱԳՆԵՐ, պիես 3 արարուածով, Ա. Արէլեանի	50
✓ ՄԿՈՒՉ ՀԱՐՍԱՆԻՔԸ, պիես 1 գործ. Բ. տպ. Ա. Արէլեանի	20
ՀԵՐՈՍՏՐՈՍ, Ֆուլգիայի, ողբ. 5 ար. Թարգմ. Տ. Վ.	50
ՍՈՒՏ ՃԳՆԱԻՐ, Վոզ. 2 ար. Ա. Արաքսեանի	20
✓ ԵՍԻՄԱՏ, Վոզ. 1 ար. 2 պատկեր Յ. Ղարազեանի	25
✓ ՍԽԱՂ ՀԱՇԻԻ, կոմեդիա 4 արարուածով Ա. Արէլեանի	50
ԳՈՐԾԸ ԳՈՐԾ Է ՊԱՀԱՆՉՈՒՄ, ՕՄԷրբոյի, Թ. Ֆր. Կ. Չալախան	40
✓ ԱԳԱՀԸ, կատ. 5 ար. Մոլիերի Թարգ. Տ. Տէտեանի	50
ՄԵՐ ՃԱՆԱԶՆԵՐԸ, կոմ. 3 ար. և 2 պատկեր Յ. Կուսիկեանի	1
ՍԷՎԻՅԻՄ ՍԱՓՐԻՉԸ, Պոմպոլէ Թարգմ. Մ. Մամուրեան	50
✓ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՄՕՏ, Վոզ. 1 ար. Թարգ. Գ. Տէր-Դաւթեան	15

15 20

ՊԱՏՈՒԱՒՈՐՆԵՐԻՑ ՄԷԿԸ, կօմ. 1 ար. փոխադ. Կ. Ջալալեան	—	15
ԱԲԱՍ, թատերգ. 4 արարուածով Կ. Յովհաննջանեանի	—	40
ՄԱՆԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ, Բ. Ֆէօդորովի թարգմ. Տ. Մարգարիտ	1	—
ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ, գուշտ 1 արարուածով Փանոսեանի	—	30
ՕԳՈՒՍՏ ՎԱՔԸՐԻ, կօմ.-դրամա 4 գործ. թարգմ Ֆէլքս	—	50
ՄՐԱԻԱ ՍՏԻԱՐՏ, ողբ. 5 դ. Շիլլ. թարգ. Մ. Բարխուդարեանի	—	50
ՄԱԿԲԵԹ, ողբ. 5 ար. Շէկսպիրի թարգ. Ստ. Մալխասեան	—	50
ՀՈՒՓՈՒՄԷ կամ ՓՐԿՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ, պատ. բանաստ. Գ. Պատկանեանի	1	—
ՆԻՕԲԷ կամ ՄԱՐՄԱՐԵԱՅ ՎԱՐԺՈՒՀԻՆ, ֆարս 3 արար. փոխադրութիւն Ա. Վրոյրի	—	20
ՇՈՒՇԱՆ, օպերա 3 արար. Ս. Ատրպետի	1	—
ԹԱՐԹԻԻՑ, կատ. 5 ար. Մոլիէրի թարգ. Ա. Տէրտէրեանի	—	50
ԱՅԴԱ, ողբ. 4 ար. և 7 պատ. թարգ. Կ. Շէրլիտճեան	—	50
ԱԿԱՄԱՅ ԲԺԻՇԿ, կատ. 3 ար. Մոլիէրի, թարգմ. Տ. Տ.	—	50
ԱԻԱԶԱԿՆԵՐ, ողբերգ. Շիլլերի թարգ. Փ. Վարդանեան	—	50
ԽՈՍՐՈՎ ՄԵՅՆ, ողբերգութիւն Վ. Մինասեանի	—	50
ԳԱՂՏՆԻՔ ՓԱՐԻԶՈՒ, 5 արարուածով 10 պատ. թ. Հ. Յ. Տ.	1	—
ԼԻԱԿԱՏԱՐ ՅԱՆԿ ՊԻԵՍԱՆԵՐԻ, որոնք հայերէն լեզուով ներ- կայացնելու թոյլ տրուած են Կովկ. շրջ. բեմերի վրայ	—	50
ՏԻԿԻՆԸ ՆՐԱՆ ՍՊԱՍՈՒՄ Է, կատ 1 ար. թարգ. Յ. Մէլ	—	30
ԺԱՆՕ և ԺԱՆԷՏ, օպերա.-վոք 1 գործ. թարգ. Գ. Շահրուզադեան	—	40
ՀԱՍԿԱՔԱՂ ԱՂԶԻԿԸ, աղայոց համար թատ. խաղ-թարգ. Հ. Յ. Տ.	—	50
ԱՇՆԱՆԱՅԻՆ ԵՐԵԿՈՅ ԳԻՒՂՈՒՄ, վոք. 1 արարուածով փոխադ- րեց Գ. Շահրուզադեան	—	25

Тифли, Книжный магазинъ «ГУТТЕНБЕРГЪ»
Г. Галустанъ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0348913

40801

